Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

《中医文化关键词》

（亚美尼亚语版）

# Key Concepts in Traditional Chinese Medicine

**Armenian version, volume 1**

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2022

# ՉԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

հատոր 1

Թարգմանիչ՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2022

ՀՏԴ 615.89:030
ԳՄԴ 53.59+92.0 «Գեղarm» հանդեսի մատենաշար
Չ 590

Չ 590 **Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների հանրագիտարան:**
Հատոր 1: Թարգմ. անգլ.՝ Ա. Աքաբեկյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2022, 176 էջ

Հայ ընթերցողական հանրությանն է ներկայացվում չինական ավանդական բժշկությունը հատկանշող հիմնական հասկացությունների հանրագիտարանային շարքի առաջին գիրքը: Այն մի համապարփակ աշխատություն է, որ օգտակար ձեռնարկ կարող է լինել ոչ միայն բժիշկների, առողջապահական խնդիրներով հետաքրքրվողների եւ «Երկնատակի» երկրի ժառանգությունն ուսումնասիրողների համար, այլեւ կարժանանա բոլոր նրանց ուշադրությանը, ովքեր ցանկանում են հարստացնել սեփական գիտելիքները եւ իրենց համար բացահայտել չին ժողովրդի քաղաքակրթական ձեռքբերումների նշանակությունը:

Original Chinese-English Text
© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd. (FLTRP)
Armenian Translation © Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.
All rights reserved.

ՀՏԴ 615.89:030
ԳՄԴ 53.59+92.0

ISBN 978-9939-1-1450- 7

© «Ոգի-Նաիրի» /թարգմանության համար, 2022/

## Առաջաբան

Ավանդական չինական բժշկությունը դասական բժշկական համակարգ է՝ ներկայացված չինական հասկացությունների տեսքով, որոնք սերտորեն կապված են աստղագիտության, աշխարհագրության և հումանիտար գիտությունների հետ: Հիմնվելով ավանդական մշակույթի, դասական փիլիսոփայության և հումանիստական մտքի վրա՝ դասական չինական բժշկությունը, Ցինին նախորդած շրջանից մինչև Հան դինաստիայի առաջին տարիները, մտքի տարբեր դպրոցների և դրանց մեկնաբանությունների, ինչպես նաև բնական և հասարակական գիտությունների տեսությունների ու պրակտիկայի հետ համատեղ ներկայացնում է յուրօրինակ տեսական համակարգ, մտածողության կերպ, ինչպես նաև ախտորոշման և բուժման մեթոդներ: Ավանդական չինական բժշկությունը բարձր է գնահատում մարդու և բնության ներդաշնակ գոյակցությունը: Այն ընդգծում է հետևողական մշակութային ժառանգությունը, հանդես գալիս մարդու և հասարակության ներդաշնակ կարգավորման օգտին և լայն հեռանկարներ բացում տեղական բժշկության կարգավորման, մշակույթի տարածման և մարդկային քաղաքակրթության առաջընթացի համար: Ինչպես վկայում է Պետական խորհրդի՝ 2016 թվականին հրապարակած «Չինաստանում ավանդական չինական բժշկության» մասին կառավարական պեկույցը, ավանդական չինական բժշկությունը «չինական քաղաքակրթության բնութագրիչներից է», որը «դրական ներգործություն ունի մարդկային քաղաքակրթության վրա», «իրենից ներկայացնում է բնական և հումանիտար գիտությունների համադրություն» և «ընդգրկում է չինացիների խոր փիլիսոփայական գաղափարները»:

Ավանդական չինական բժշկությունը ներկայում ամենաբազմակողմանի և լայնորեն կիրառվող ավանդական բժշկական համակարգն է աշխարհում, առանձնանում է երկար պատմությամբ, խոր մշակութային արմատներով, նշանակալի արդյունքներով և սրընթաց զարգացմամբ: Դեռ Ցին շրջանից առաջ ավանդական չինական բժշկությունն աստիճանաբար ներմուծվել է հարևան տարածաշրջաններ, օրինակ, Կորեական թերակղզի: Հան և Թան դինաստիաների ընթացքում այն հասել է Ճապոնիա և Հարավարևելյան Ասիա: 18-րդ դարից հետո ավանդական չինական բժշկությունը ներմուծվեց Եվրոպա և լայն տարածում գտավ 19-րդ դարի կեսերին: 1970-ականներից հետո ավանդական չինական բժշկությունն արագորեն տարածվեց ամբողջ աշխարհում ասեղային անզգայացման հաջողության հետ մեկտեղ՝ զգալիորեն նպաստելով համաշխարհային բժշկության զարգացմանը, բոլոր ազգերի բարեկեցությանն ու չինական մշակույթի տարածմանը: Ժամանակակից տեսության, խոր մշակութային հենքի, բնական թերապիայի և զգալի արդյունավետության շնորհիվ ավանդական չինական բժշկությունը դարերի ընթացքում գոյատևել ու զարգացել է: Այն յուրօրինակ ճանապարհ է հարթել չինացիների բարեկեցության, չինական քաղաքակրթության և մշակույթի տարածման համար:

Ավանդական չինական բժշկության չորս դասական գործերը՝ «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնը», «Բարդ դեպքերի կանոնը», «Մատերիա Մեդիկա. գյուղատնտեսության աստծո կանոնը» և «Ցրտահարություն և այլևայլ հիվանդությունների քննախոսությունը» ոչ միայն ներկայացնում են ավանդական չինական բժշկության տեսության ու մեթոդի առանցքը, այլև ներառում են չինական մշակույթի մտքի և ոգու էությունը: Ստեղծագործությունների շարքում ամենանշանավորը «Դեղին կայսեր բժշկության ներքին

կանոնն» է: Այն ներառում է Հին Չինաստանի բնական, հասարակական գիտությունների բոլոր կողմերը, ինչպես նաև Հին Չինաստանի լեզուն և մշակույթը: Չինական բժշկության տարածումն ամբողջ աշխարհում դարձել է չինական մշակույթը համաշխարհային հարթակում ներկայացնելու հրաշալի միջոց: Արևմտյան լեզուները որդեգրել են չինական մշակույթի այնպիսի կարևոր գաղափարներ, ինչպիսիք են ինը, յանը և ցին: Սա Չինական ավանդական բժշկության մեծ ներդրումն է չինական մշակույթի տարածման գործում և ամուր ու հուսալի լեզվական հիմք է չինական մշակույթի տարածման համար:

Չինական մշակույթը տարածվում է Արևմուտքում, ամբողջ աշխարհում, ուստի կա տարբեր ակադեմիական, մշակութային և քաղաքացիական սեկտորների ուշադրության անհրաժեշտություն: Հան և Թան դինաստիաներում Սիյու (Արևմտյան շրջաններ) բուդդիստները ճամփորդում էին դեպի Կենտրոնական Չինաստան՝ բուդդիզմը տարածելու, իսկ Մին և Ցին դինաստիաներում արևմտյան միսիոներները հասնում էին Չինաստան՝ քրիստոնեությունը տարածելու: Երկուսի համար էլ բժշկությունը եղել է հանրային աջակցության կարևոր միջոց: Որպես չինական մշակույթի անբաժան մաս՝ ավանդական բժշկությունը ոչ միայն կարևոր դեր է խաղում մշակույթի համաշխարհային տարածումը խթանելու գործում, այլև կամուրջ է դառնում չինական ավանդական մշակույթն անուղղակիորեն տարածելու և խթանելու համար: Միջազգային կոնսենսուսի համաձայն՝ ամեն ոք, ով ցանկանում է սովորել, հասկանալ և օգտագործել ավանդական չինական բժշկության տեսությունները, մեթոդները, բանաձևերն ու դեղաբույսերը, նախևառաջ պետք է սովորի և յուրացնի ավանդական չինական մշակույթի հիմնական տեսություններն ու մտքերը, օրինակ, ինի և յանի, հինգ տարրերի, էության և ցիի տեսությունները:

Ավանդական չինական բժշկության բազմակողմանի և համակարգված տարածման, ամբողջ աշխարհում մարդկանց կողմից անկեղծ ըմբռնման ու ընդունելության իդեալական, բացառիկ և հուսալի մոտեցումը չինական ավանդական բժշկության միջազգային հաղորդակցությունն է:

**Բնահյութ**
**ձին 精**

Բնահյութը ստացվում է բնածին կենսական նյութից, ծնողների շոշափելի ու սննդարար նյութից, ինչպես նաև հետագայում ուտելիքից ու խմիչքից ստացվող սննդարար նյութերից: Դա կյանքի սկիզբն է և ամենահիմնարար նյութը, որից կազմված է մարդկային մարմինը, և որը նպաստում է կենսագործունեությանը: Բնահյութ բառը կարելի է հասկանալ թե՛ լայն, թե՛ նեղ իմաստով: Առաջինը վերաբերում է շոշափելի և սննդարար նյութերի բոլոր տեսակներին, այդ թվում և արյանը, մարմնի հեղուկներին, ոսկրածուծին և սննդից ու խմիչքից ստացվող սննդանյութերին. համարվում է, որ մարդու մարմինը կազմված է դրանցից, և հենց այդ նյութերն են նպաստում կենսագործունեությանը: Երկրորդը վերաբերում է երիկամներում հավաքվող նյութին, այն է՝ երիկամանյութին, ներառյալ բեղմնավորումից ստացվող նախածննդյան նյութը և ուտելիքից ու խմիչքից ստացվող հետծննդաբերական նյութը. ընդունված է համարել, որ այն սերունդ է տալիս և նպաստում աճին ու զարգացմանը:

[曾经译法] բնահյութ, կյանքի նյութ, կենսանյութ, սերմ, սաղմ
[现行译法] բնահյութ, կյանքի բնահյութ
[标准译法] բնահյութ
[翻译说明] 许多中医汉英字典都采用 էություն, 采用 բնահյութ

Մեջբերումներ 引例

Բնահյութը կյանքի հիմքն է *(Պարզ զրույց):*

Երեխան բեղմնավորվում է, երբ տղամարդու և կնոջ վերարտադրողական նյութերը համադրվում են: Վերարտա-

դրողական նյութը, որը կյանքի է կոչվում բեղմնավորումից հետո, կոչվում է բնահյութ *(Հոգևոր առանցք):*

Հինգզան-օրգանները այնտեղ են, որտեղ բնահյութն է *(Հոգևոր առանցք):*

**Ցի**

**ցի 气**

Ցիի գաղափարը ներառում է երեք իմաստային մակարդակ. 1) ինն փիլիսոփայական գաղափար, որը վերաբերում է տիեզերքում ամեն ինչի ծագմանը, և էական տարր, որից կազմված է մարմինը և հոգին, 2) էություն, էներգիա և տեղեկատվություն, որից կազմված է մարդու մարմինը, և որը նպաստում է կենսագործունեությանը: Մարդու ցին ըստ իր բնույթի կարելի է բաժանել ին ցիի և յան ցիի. նախնական ցի, սննդարար ցի և պաշտպանական ցի, որոնք հիմնված են փոխարկման վրա, ստամոքսի ցի, սրտի ցի, լյարդի ցի, երիկամի ցի, թոքի ցի, փայծաղի ցի և ներքին օրգանների ցի՝ ըստ գործառույթի և 3) ցին վերաբերում է ախտածին ցի-ին՝ ցիի այն տեսակին, որը դառնում է հիվանդությունների պատճառ:

| | |
|---|---|
| [曾经译法] | հղկված նյութ, կենսական էներգիա, չի, ազդեցություն |
| [现行译法] | ցի, չի |
| [标准译法] | ցի |
| [翻译说明] | 意译为 էներգիա, 或者 կենսական էներգիա |

Մեջբերումներ 引例.

Ցին ձևավորվում է և նույն պահին սկսում է փոխարկվել: Ամեն ինչ սկսում է փոխվել, երբ ցին տարածվում է: Ամեն ինչ

սկսում է զարգանալ ու բազմապատկվել, երբ ցին տարածվում է: Ամեն ինչ կփոխվի, երբ ցին դադարի փոխարկվել: Սա վերաբերում է ամեն ինչին *(Պարզ զրույց):*

Էներգիայի վերին աղբյուրը սկսում է բացվել ու ցրվել: Այն սննդից ու խմիչքից ստացվող սննդարար նյութերը բաշխում է մարմնի բոլոր մասերին՝ սնելով մաշկը, մարմինն ու մազերը, ինչպես եղյամն ու մառախուղն են տարածվում: Ահա թե ինչ է նշանակում ցին *(Հոգևոր առանցք):*

Ախտածին ցին, որը հարձակվում է երեք շրջանների վրա (մարմնի վերին, միջին և ստորին մասեր), տարբեր է… Երբ ախտածին ցին հարձակվում է մարմնի վրա, այն տեղակայվում է կոնկրետ տարածքում ու համապատասխան անուն ստանում *(Հոգևոր առանցք):*

**Ոգի**
**շեն 神**

Ոգին ունի երեք տարբեր իմաստ. 1) տիեզերքում ամեն ինչի արարիչ, տեր և նախաստեղծ աղբյուր, 2) կենսագործունեություն, ներառյալ ֆիզիոլոգիական գործառույթներ և մտավոր գործունեություն և 3) գիտակցություն ու մտավոր գործունեություն, ինչպիսիք են ճանաչումը, զգացմունքներն ու կամքը: Սրտով առաջնորդվելով՝ ոգին նախ և առաջ մասնակցում է մարդու ֆիզիոլոգիական գործառույթներին ու մտավոր գործունեությանը, որը վերաբերում է համապատասխանաբար հինգ զան-օրգաններին: Բնահյութը, ցին, արյունն ու մարմնի հեղուկները ոգու նյութական հիմքն են, որը շարժումների, փոփոխությունների ու զան-ֆու օրգանների գլխավոր ցիի փոխազդեցության արդյունքն է:

[曾经译法] կենսական ուժ, մտավոր ակտիվություն, ոգի, շեն, միտք

[现行译法] միտք, ոգի, շեն
[标准译法] ոգի
[翻译说明] 翻译为 ոգի 将其译作 ոգի

Մեջբերումներ 引例.

Սնվելով յան ցիով՝ ոգին կքարմանա, իսկ ջլերը ճկուն կլինեն *(Պարզ զրույց):*

Զան-ցի ներդաշնակությունն ապահովում է մարմնի հեղուկների, ապա՝ ոգու հեղուկների արտադրությունը *(Պարզ զրույց):*

Սիրտը կյանքի հիմքն է, ոգու պահոցը: Նրա վիճակն արտացոլվում է դեմքի փայլի մեջ, իսկ եռանդն ու էներգիան՝ արյունատար անոթներում: Այն պատկանում է թայյանին (ավելի մեծ յան) յանի ներսում և կապված է ամռան-ցիի հետ *(Պարզ զրույց):*

**Հիմնական Ցի**
**ձինցի 精气**

Հիմնական ցին, որը լավ ցիի տեսակ է, մարդու աճի, զարգացման և զանազան գործառույթների նյութական հիմքն է: Այն ներառում է վերարտադրողական հյութը, սննդից ու խմիչքից ստացված նյութը և բնության մեջ թարմ օդը:

[曾经译法] հղկված էներգիա, առողջության էներգիա, բնահյութ, հիմնական ցի
[现行译法] բնահյութ, հիմնական ցի
[标准译法] հիմնական ցի
[翻译说明] 采用 հիմնական ցի

Մեջբերումներ 引例.

Ախտածին ցիի գերակշռումը կոչվում է ավելցուկ, իսկ հիմնական ցիի անբավարարությունը՝ պակասություն *(Պարզ զրույց):*

Հինգ զան-օրգանները կուտակում են հիմնական ցին և չեն ազատվում դրանից *(Պարզ զրույց):*

Երբ սնունդն ու խմիչքը կլանվում են, սննդարար նյութերը կուտակվում են ստամոքսում: Փոխակերպված հիմնական ցին այդ ժամանակ փոխանցվում է փայծաղով *(Պարզ զրույց):*

**Նախնական ցի**
**յուանցի 元气**

Նախնական ցին, որն անվանում են նաև նախասկզբնական ցի, ցիի աղբյուրն է, ծառայում է որպես զան-ֆու օրգանների գործունեության շարժիչ ուժ: Նախածննդյան բնահյութից փոխակերպված և հետծննդյան բնահյութով սնված նախնական ցին բաշխվում է ամբողջ մարմնով մեկ էներգիայի եռակի աղբյուրի (սանձիաո) միջոցով: Այն ներսից թափանցում է հինգ զան-օրգաններ և վեց ֆու-օրգաններ, իսկ դրսից հասնում է մաշկին, մաշկի գծերին ու ճաքերին՝ խթանելով բոլոր օրգանների և միջօրեականների ֆիզիոլոգիական գործառույթները: Նախնական ցին կատարում է երկու ֆիզիոլոգիական գործառույթ: Նախ, խթանում ու կարգավորում է աճը, զարգացումն ու վերարտադրումը: Երբ ծնողներից ստացված վերարտադրողական նյութը համադրվում է ու զարգանալով վերածվում էմբրիոնի, կյանքի է կոչվում նախնական ցին: Երկրորդ, նախնական ցին առաջ է մղում և կարգավորում զան-ֆու օրգանների, միջօրեական-

ների, ինչպես նաև այլ օրգանների ու հյուսվածքների ֆիզիոլոգիական գործունեությունը, երբ այն հոսում-հասնում է մարդու մարմնի բոլոր մասերին էներգիայի եռակի աղբյուրի (սանձիաո) միջոցով:

[曾经译法] նախաստեղծ էներգիա, նախաստեղծ ցի, սկզբնական ցի, մարմնի դիմադրություն, աղբյուր-ցի, ճիշտ ցի
[现行译法] նախնական ցի, նախաստեղծ ցի, աղբյուր ցի
[标准译法] նախնական ցի
[翻译说明] 讲 նախնական

Մեջբերումներ 引例.

Կյանքի դարպասն այնտեղ է, որտեղ ապրում են ոգին ու բնանյութը, և որտեղ պահպանվում է նախնական ցին *(Բարդ դեպքերի կանոն):*

Երիկամը ստանում ու կուտակում է հինգ զան-օրգանների և վեց ֆու-օրգանների նախնական ցին, այսպիսով, սա այն տեղն է, որտեղ արմատավորվում և առաջանում է նախնական ցին *(Պարզ զրույց):*

Գեձիե (Տոկայ Գեցկո) փոշին օգտագործում են նախնական ցիի անբավարարության, մրսածության, ինչպես նաև խրոնիկական հազի դեպքում, որը մի քանի տարի պահպանվում է ցիի անբարենպաստ ավելացման պատճառով *(Քննարկումներ ախտաբանության մասին՝ ըստ Պարճառագիտության դոկտրինի):*

**Կրծքային ցի**
**ցունցի 宗气**

Կրծքային ցին վերաբերում է կրծքավանդակի ցիին, որը փոխարկվում է սննդից ու խմիչքից կլանված սնուցիչներից ու ներշնչած թարմ օդից: Այն կատարում է երկու գործառույթ. 1) թեթևացնում է շնչառությունը շնչուղիներում և խթանում թոքերի շնչառական գործառույթը և 2) ներթափանցում է սիրտ ու անոթներ՝ նպաստելով ցիի ու արյան հոսքին և սրտում արյան շրջանառությանը: Այսպիսով, կրծքային ցիի առատությունը կամ թուլացումը սերտորեն կապված է ցիի ու արյան շրջանառության, մարմնի ջերմաստիճանի կարգավորման, վերջույթների շարժման և շնչառության ու ձայնի ուժգնության հետ:

| | |
|---|---|
| [曾经译法] | բնածին էներգիա, կրծքային ցի, ցիի կուտակում, ժառանգական ցի |
| [现行译法] | ժառանգական ցի, կրծքային ցի, կրծքի ցի, ցունցի |
| [标准译法] | կրծքային ցի |
| [翻译说明] | 专家认为“宗气, ժառանգական ցի, կրծքային ցի, կրծքավանդակի ցի |

Մեջբերումներ 引例.

Կրծքային ցին կուտակվում է կրծքավանդակում, անցնում կոկորդով ու ներթափանցում սիրտ ու անոթներ՝ նպաստելով շնչառությանը *(Հոգևոր առանցք):*

Եթե սիրտն արագ բաբախում է կրծքի տակ (սուլի-ում), սա վկայում է կրծքային ցիի արտահոսքի մասին *(Պարզ զրույց):*

Կրծքային ցին մնում է կրծքավանդակում ու վերածվում

ցիի ծովի: Կրծքային ցիի այն մասը, որը հոսում է ներքև, միախառնվում է *ցիչիհի* հետ, իսկ այն մասը, որ հոսում է վերև, հասնում է *շնչափող (Հոգևոր առանցք):*

**Սնուցիչ ցի**
**յինցի 营气**

Սնուցիչ ցին, որն անվանում են նաև *ռուն ցի,* հոսում է անոթներում, ունի սնելու գործառույթ, ստացվում է ստեղիքի ու խմիչքի նյութից, որը փոխարկվում և տեղաշարժվում է փայծաղի ու ստամոքսի միջոցով: Այն ալիքաձև պտտվում է արյան հետ և հոսում ամբողջ մարմնով՝ տասներկու կանոնավոր միջօրեականների, բեղմնավորման անոթի ու կարգավորող անոթի միջով: Այն առաջին հերթին մասնակցում է արյան արտադրությանն ու մարդու մարմինը սնուցելուն: Սնուցիչ ցին, որը հարուստ է սննդարար բաղադրիչներով, կարող է արտադրել արյուն, եթե համադրվի մարմնի հեղուկների հետ. այսպիսով, այն գլխավոր արյունաստեղծ նյութն է: Շրջանառվում է մարմնում արյան հետ և սննդարար նյութեր է հասցնում զան-ֆու օրգաններին և միջօրեականներին՝ պահպանելով սովորական ֆիզիոլոգիական գործառույթը:

[曾经译法] ին-էներգիա, կառուցող ցի, սննդարար ցի
[现行译法] սնուցիչ ցի, սննդարար ցի
[标准译法] սնուցիչ ցի
[翻译说明] կառուցում, սնուցիչ ցի

Մեջբերումներ 引例.

Սնուցիչ ցին մարմնի հեղուկների հետ թափանցում է անոթներ ու փոխվում արյան՝ դրսից սնուցելով չորս վերջույթները, իսկ ներսից թափանցում է հինգ զան-օրգաններ և վեց ֆու-օրգաններ *(Հոգևոր առանցք):*

Եթե սնուցիչ ցին չկարողանա բնականոն ճանապարհով հոսել և լճանալ մկանների արանքում, կայծուռուցք և խոց կառաջանա *(Պարզ զրույց):*

Եթե ապահովվի պաշտպանության ցիի կայուն հոսք, սնուցիչ ցին առատ կլինի, իսկ միջօրեական ցին՝ ճոխ *(Հոգևոր առանցք):*

**Պաշտպանիչ ցի**
**ուեյցի 卫气**

Պաշտպանիչ ցին՝ անվախ և սրընթաց, ստացվում է սննդի և խմիչքի սննդարար նյութերից, սկիզբ է առնում փայծաղից ու ստամոքսից: Այն հասնում է էներգիայի վերին աղբյուրին ու արագորեն հոսում անոթներից դուրս: Նախ և առաջ մասնակցում է մարդու մարմինը ներսից և դրսից ջերմացնելուն և սնուցելուն, արտաքին ախտածին գործոններից մաշկը պաշտպանելուն, միջմկանային տարածությունները սնելուն և քրտնագեղձերի բացումն ու փակումը վերահսկելուն: Որպես ջերմության առաջնային աղբյուր՝ պաշտպանիչ ցին ներթափանցում է ամբողջ մարմնի մեջ, ջերմացնում մաշկը, մազերը, մկաններն ու զան-ֆու օրգանները, որպեսզի դրանք միշտ փայլուն ու առողջ լինեն, պահպանում է մարմնի կայուն ջերմաստիճանը: Այն կարգավորում է քրտնագեղձերի բացումն ու փակումը:

[曾经译法] ուեյ-էներգիա, պաշտպանության ցի, պաշտպանիչ ցի
[现行译法] պաշտպանության ցի, պաշտպանական ցի, պաշտպանիչ ցի
[标准译法] պաշտպանության ցի
[翻译说明] պաշտպանիչ ցի, պաշտպանության ցի

Մեջբերումներ 引例.

Պաշտպանիչ ցիի խնդիրն է՝ տաքացնել մկանները, սնուցել մաշկը, փակել մաշկի սպիներն ու գծերը և միջմկանային տարածությունները, ինչպես նաև վերահսկել ծակոտիները *(Հոգևոր առանցք):*

Պաշտպանիչ ցին՝ անվախ ու սրընթաց ցին, որը ստացվել է ուտելիքի ու խմիչքի սննդարար նյութերից, սկզբում անդադար հոսում է չորս վերջույթներում, մկաններում և մաշկի մեջ: Ցերեկային ժամերին այն հոսում է յան փուլում, իսկ գիշերը՝ ին փուլում: Սովորաբար սկսում է հոսել ոտքիշաոինի երիկամի միջօրեականից, իսկ հետո՝ դեպի հինգ զան-օրգաններ և վեց ֆու-օրգաններ: *(Հոգևոր առանցք):*

Ցուրտ և ամպամած օրերին արյունը հակված է լճանալու, իսկ պաշտպանիչ ցին սովորաբար ննջում է մարմնում *(Պարզ զրույց):*

**Ցի փոխակերպում**
**ցիհուա 气化**

Ցի փոխակերպում ասելով նկատի ունենք այն զանազան փոփոխությունները, որոնց պատճառը ցին է, օրինակ՝ մարսողության և բնանյութի, ցիի, արյան և մարմնի հեղուկների փոխակերպումը: Հետևաբար, ցի փոխակերպումը մարդու մարմնում տեղի ունեցող մարսողական գործընթացն է, որի ընթացքում կատարվում է նյութի ու էներգիայի ձևափոխություն. ուրեմն այն կենսագործունեության հիմքն է: Զան-ֆու օրգանները կարևոր դեր ունեն ցիի ձևափոխման ակտիվացման և պահպանման հարցում, որի բնականոն գործառույթը կախված է զան-ֆու օրգանների միջև ֆիզիոլոգիական գործունեության փոխադարձ կարգավորու-

մից: Բնության և մարդու մարմնի մշտական նյութափոխանակությունն անհրաժեշտ է կենսագործունեության համար:

[曾经译法] կենսական էներգիայի ակտիվություն, ցի փոխակերպում, ցի ակտիվություն, ցիի ձևափոխիչ գործառույթ
[现行译法] ցի փոխակերպում, ցի ակտիվություն
[标准译法] ցի փոխակերպում
[翻译说明] ցի էներգիայի ակտիվություն, կենսական ակտիվություն, ցի փոխակերպում, փոխակերպել:

Մեջբերումներ 引例

Միզապարկը, ինչպես ջրամբարի համար պատասխանատու պաշտոնյա, հոգ է տանում մարմնի հեղուկների պահպանման և ցին փոխակերպելու միջոցով մեզն օրգանիզմից հանելու համար *(Պարզ զրույց):*

Երբ միզապարկի ցիի փոխակերպման գործառույթը չի աշխատում, անհրաժեշտ է ամրապնդել երիկամների ցին և միզապարկը *(Դեղին կայսեր բժշկության արփաքին օրենքը):*

Երիկամի միջօրեականը կապված է միզապարկի հետ: Այն անցնում է ողնաշարի միջով ու հանդիպում կարգավորող անոթին, որը դուրս է գալիս պորտի մոտ: Այն միզապարկ է հասնում քեղմնավորման անոթի միջոցով: Թեև ցի ձևափոխումը կարող է հասնել նաև միզապարկին, գոյություն ունեցող միջօրեականն ուղի է հարթում ու ճանապարհ բացում *(Դեղին կայսեր բժշկության արփաքին կանոնը):*

**Ցի շարժում**
**ցիձի 气机**

Ցի շարժում ասելով նկատի ունենք ցիի շարժումը մարմնի բոլոր մասերում, այդ թվում՝ ցան-ֆու օրգաններում և միջօրեականներում: Այն խթանում է օրգանների ու հյուսվածքների ֆիզիոլոգիական գործառույթները: Ցի շարժումը դրսևորվում է այնպիսի հիմնական ձևերում, ինչպիսիք են բարձրանալը, իջնելը, դուրս ու ներս գալը (օրինակ՝ դեպի վեր, վար, դուրս և ներս շարժում): Եվ հենց ցիի մշտական շարժման շնորհիվ է, որ մարդու մարմինը կարողանում է արտաշնչել ծանր օդը և ներշնչել թարմ օդը, ավելացնել հստակությունն ու ցրել մշուշը, անվերջ ստեղծել և փոխարկել ու պահպանել բնականոն նյութափոխանակությունն ու կենսագործունեությունը: Բարձրանալու, իջնելու, դուրս ու ներս գալու հավասարակշռված ցի շարժումը կարևոր նշանակություն ունի կենսագործունեության պահպանման համար:

| | |
|---|---|
| [曾经译法] | կենսական էներգիայի ֆունկցիոնալ ակտիվություն, ցի շարժում, ցի գործունեություն, ցի դինամիկա |
| [现行译法] | ցի շարժում, ցի գործունեություն |
| [标准译法] | ցի շարժում |
| [翻译说明] | ցի շարժում, կենսական էներգիայի ֆունկցիոնալ գործունեություն, ցի շարժում: |

Մեջբերումներ 引例

Մինչդեռ հեղուկները, որոնք պահվում են միզապարկում, չեն կարող ինքնուրույն արտահոսել: Արտահոսելու համար դրանք պետք է վերածվեն մեզի ցի շարժման միջոցով *(Պարզ զրույց «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնից»):*

Գարնանը ցին շարժվում է ներքևից վերև: Հետևաբար, սրտի բաբախյունը լողում է, ինչպես ձուկն ալիքների վրա *(Պարզ զրույց «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնից»):*

**Ասեղնաբուժություն**
**ցիսյուե 气穴**

Ասեղնաբուժական կետերը մարդու մարմնի մակերեսին տեղակայված կետերն են, որտեղից ներթափանցում է միջօրեական ցին. այստեղից էլ առաջացել է չինարեն ցիսյուե (气穴՝ բառացի՝ ցի կետեր) բառը: Սրանք այն կետերն են, որտեղ կենտրոնանում կամ որտեղով անցնում է զան-ֆու օրգանների ու միջօրեականների ցին, որտեղ կարելի է ասեղ կիրառել, ու որտեղ դրսևորվում կամ զգացվում են որոշ հիվանդություններ կամ ցավեր: Կետերը, որոնք միջօրեականների միջոցով սերտորեն կապված են զան-ֆու օրգանների հետ, կարող են զան-ֆու օրգաններում դրսևորել ֆիզիոլոգիական և ախտաբանական փոփոխություններ: Ասեղնաբուժական կետերի վրա կարելի է կիրառել տարբեր ազդակներ, ինչպիսիք են ասեղով ծակելը, այրումն ու մերսումը՝ հիվանդությունների դեմ իմունային համակարգն ամրապնդելու, պայմանների պակասը կամ ավելցուկը կարգավորելու, հիվանդությունները կանխարգելելու և բուժելու, իսկ որոշ դեպքերում՝ ախտորոշելու համար:

[曾经译法] ասեղնաբուժական կետ, կետ
[现行译法] ասեղնաբուժական կետ, կետ
[标准译法] ասեղնաբուժական կետ
[翻译说明] 目前 ասեղնաբուժական կետ,
和 կետասեղնաբուժության կետ:

Մեջբերումներ 引例

Ասեղնաբուժության յուրաքանչյուր կետ անուն ու հատուկ տեղակայում ունի, որտեղ ներարկվում է ցին *(Պարզ զրույց)*:

Լսել եմ, որ մարդու մարմնում գոյություն ունի երեք հարյուր վաթսունհինգ ասեղնաբուժական կետ, որոնք համապատասխանում են տարվա օրերի թվին *(Պարզ զրույց)*:

Այն կուտակվել էր Ոսկե բուրմունքի սենյակում և կոչվում էր «Ասեղնաբուժական կետերի տեղակայում» *(Պարզ զրույց)*:

**Ցիի ծով**
**ցիհայ 气海**

Ցիի ծով եզրույթը վերաբերում է դանջունին, որտեղ կուտակվում և առաջանում է կրծքային ցին: Դանջունը կապված է կրծքավանդակի կենտրոնական մասի հետ, որտեղ տեղակայված է թոքը, խթանում է շնչառությունն ու կառավարում ցիի հոսքն ամբողջ մարմնում: Թոքը, կապվելով բոլոր անոթների ու միջօրեականների հետ, կարող է բաշխել սննդի ու խմիչքի սննդարար նյութերը՝ ամբողջ մարմինը լրացնելու և սնուցելու համար: Դանջունը «ցիի ծովն է», որտեղ խաչվում է կրծքային ցին: Այն նաև անվանում են «ցիի վերին ծով»: «Ցիի ծովը» նաև ասեղնաբուժական այն կետի անվանումն է, որը տեղակայված է որովայնի միջին գծի կենտրոնում, այսինքն՝ այն ցիի վերին ծովն է: Այն ցուցված է գիտակցության կորստի, գլխապտույտների, որովայնի ցավի, փորլուծության, անկանոն դաշտանային ցիկլի, դժվարադաշտանի, արգանդի արյունահոսության,

լեյկորեայի, սերմնաժայթքման, իմպոտենցիայի, անմիզապահության և ճողվածքի դեպքում:

[曾经译法] էներգիայի ծով, ցիի ծով, ցիի ամբար, ցիհայ
[现行译法] ցիի ծով, ցիի ամբար
[标准译法] ցիի ծով
[翻译说明] 气海 ցիի ծով

Մեջբերումներ 引例

Դանջունը ցիի ծովն է *(Հոգևոր առանցք):*

Մեծ ցին, որը ստացվել է ուտելիքի ու խմիչքի սննդարար նյութերից, կենտրոնանում է կրծքավանդակում ու չի շարժվում: Դա է պատճառը, որ կրծքավանդակը կոչվում է ցիի ծով *(Հոգևոր առանցք):*

Մարդու մարմինը պարունակում է չորս ծով՝ ոսկրածուծի ծով, արյան ծով, ցիի ծով և սննդի ու ջրի ծով, որը համապատասխանում է Չինաստանը շրջապատող չորս ծովերին *(Հոգևոր առանցք):*

**Ցիի պակաս**
**ցիսու 气虚**

Ցիի պակասը վկայում է մարդու մարմնում առողջ ցիի թուլացման մասին: Ցիի պակասի երկու հիմնական պատճառներն են՝ 1) ցիի փոխարկման պակասը, օրինակ՝ նախածննդյան բնանյութի պակասը կարող է հանգեցնել սկզբնական ցիի պակասի, փայծաղ-ստամոքս թուլությունը կարող է հանգեցնել սննդի ու խմիչքի նյութի պակասի, իսկ թոքերի ցիի պակասը ցրվելու և նվազելու ընթացքում կարող է կրճատել ներշնչվող թարմ օդի ծավալը և 2) ցիի չափից

դուրս շատ սպառումը, օրինակ, գերհոգնածություն, արտածին-վարակիչ տենդային հիվանդություններ կամ խրոնիկական թոքախտային հիվանդություններ, որոնք կարող են հանգեցնել ցիի չափից շատ սպառման և, հետևաբար, ցիի պակասի: Ցիի անբավարարության կլինիկական դրսևորումներից են թուլությունը, հոգնածությունը, խոսել չցանկանալը, գլխապտույտը, անկանոն քրտնարտադրությունը, դեմքի, լեզվի գունատությունը և սրտի թույլ բաբախյունը:

| | |
|---|---|
| [曾经译法] | ցիի պակաս, կենսական էներգիայի անբավարարություն, ցիի անբավարարություն, ցիի բացակայություն, ցիի ասթենիա |
| [现行译法] | ցիի անբավարարություն, ցիի բացակայություն |
| [标准译法] | ցիի պակաս |
| [翻译说明] | ցիի պակաս, ցիի դատարկություն, դատարկություն, անբավարարություն, ասթենիա, անբավարարություն: |

Մեջբերումներ 引例

Հիվանդը կհյուծվի, երբ ցին բավարար չլինի, իսկ բնածնունքը կհյուծվի և ի վերջո կթուլանա, երբ հիվանդությունը սաստկանա *(Պարզ զրույց):*

Հետևաբար, եթե ցին չափից շատ է, արյան պակասություն կլինի: Եվ հակառակը, եթե արյան քանակը չափից շատ է, ցին անբավարար կլինի *(Պարզ զրույց):*

Ոմանք մահացան միջին տարիքում, որովհետև նրանց հիմնական ցին հյուծվել էր ախտածին գործոնների հետ հաճախակի պայքարից: Այս մարդիկ հաճախ ենթարկվում էին քամու ու ցրտի հարձակումներին, ինչը հանգեցնում էր

ցիի և արյան անբավարարության, ինչպես նաև միջօրեականներում հանդիպող խոչընդոտների՝ այդպիսով նպաստելով ավելի մեծ թվով ախտածին գործոնների հարձակման *(Հոգևոր առանցք):*

**Յան**

**յան** 阳

Յանը ցույց է տալիս ինին հակադիր իրեր կամ նյութեր: Յանին բնորոշ են անհանգստությունը, արտաղրությունը, մաքրումը, անկումը, էներգիայի առաջացումը և փոխարկումը: Ընդհանրապես յանն ընկալվում է որպես թեթևություն, հստակություն, գործառույթ, հիպերակտիվություն, շարժունակություն, վերելք կամ տաքարյունություն: Եզրույթն ունի երկու իմաստ: Առաջին, յանը և ինը ծայրահեղ բևեռներ են և բաժանում են տիեզերքում ամեն ինչ՝ ժամանակի, տարածության և բնության տեսանկյունից: Երկրորդ, այն վերաբերում է յան ցիին, որն իրենից ներկայացնում է տիեզերական ուժերի նախնական ցին կամ մարդու կյանքի ցին՝ ին ցիի հետ մեկտեղ:

[曾经译法] յան, Յան
[现行译法] յան
[标准译法] յան

Մեջբերումներ 引例

Մարդու մարմնում կա նաև ին և յան: Ընդհանուր առմամբ, արտաքին կողմը յան է, իսկ ներքինը՝ ին: Մարդու մարմնի տեսանկյունից, մեջքը յան է, որովայնը՝ ին: Ձանֆու օրգանների տեսանկյունից հինգ զան-օրգաններն ին են, իսկ վեց ֆու օրգանները՝ յան *(Պարզ զրույց):*

Ջուրը համարվում է ին, իսկ կրակը՝ յան: Յանն անշոշափելի ցի է, իսկ ինը՝ էական բույր *(Պարզ զրույց):*

Ինի գերակշռումը կարող է հանգեցնել յանի հիվանդության, իսկ յանի գերակշռումը՝ ինի հիվանդության: Եթե գերակշռում է յանը, ջերմություն է արտադրվում, իսկ եթե գերակշռում է ինը, ցուրտ է արտադրվում… Ինը մնում է ներսում, պաշտպանում յանը, իսկ յանը մնում է դրսում, որ պաշտպանի ինը *(Պարզ զրույց):*

**Յան ցի**
**յանցի 阳气**

Յան ցին, ի տարբերություն ին ցիի, ընդհանրապես վերաբերում է երկու բաղադրիչներից մեկին, որոնք միմյանց հակադիր են և լրացնում են իրար: Գործառույթի ու ձևի տեսանկյունից յան ցին գործառույթ է: Ներքին գործունեության տեսանկյունից այն վեց ֆու-օրգանների ցին է: Սննդարար ցիի ու պաշտպանիչ ցիի տեսանկյունից այն վերաբերում է երկրորդին: Շարժման ուղղության ու բնույթի տեսանկյունից այն ուղղված է դեպի դուրս, վեր, առույգ է, լարված ու թեթև: Կարճ ասած, յան ցին մասնակցում է ջերմացնելու, ստեղծելու, ձևափոխելու և պաշտպանելու գործառույթներին:

[曾经译法] յան-էներգիա, յան-ցի, Յան-Ցի, Յանցի, յան ազդեցություն
[现行译法] յան ցի, յանցի
[标准译法] յան ցի
[翻译说明] յան ցի

Մեջբերումներ 引例

Ձմռան արևադարձից մինչև գարնան սկիզբ ընկած

քառասունհինգ օրվա ընթացքում յան ցին աստիճանաբար բարձրանում է, իսկ ին ցին՝ աստիճանաբար իջնում *(Պարզ զրույց):*

Մարդու մարմնի յան ցին շրջում է դրսում ցերեկային ժամերին: Արևածագի հետ սկսում է բարձրանալ, կեսօրին հասնում է գագաթնակետին, արևամուտին իջնում է, իսկ քրտնագեղձերը համապատասխանաբար փակվում են *(Պարզ զրույց):*

Կեսգիշերին յան ցին վերադառնում է, ու ոտնաքաթերը տաքանում են *(Քննախոսություն ցրտահարության մասին):*

**Ին**

**ին 阴**

Ինը վերաբերում է իրերին կամ նյութերին, որոնք հակադիր են յանին: Դրանց բնորոշ են հանդարտությունը, աճն ու պահպանումը: Ինն իրենից ներկայացնում է շոշափելի նյութեր: Ընդհանուր առմամբ, ցանկացած բան, որ աղոտ է, նշանակալի, թույլ, ստատիկ, վայրընթաց կամ սառը, համարվում է ին: Ինը նաև վերաբերում է «ին ցիին», երկու բաղադրիչներից մեկին, որից կազմված է տիեզերքի կենսական ցին կամ մարդ արարածի կյանքի ցին: Ըստ ավանդական չինական բժշկության՝ ինը պարունակում է մարդու մարմնի շարժումն ու երևույթներն ամբողջության մեջ, պահպանվում է ներսում, աչքի է ընկնում կենտրոնացմամբ, հանդարտությամբ, սառնությամբ, խոնավությամբ, կաշկանդվածությամբ, վայրընթաց շարժմամբ:

[曾经译法] ին, Ին
[现行译法] ին
[标准译法] ին
[翻译说明] ին

Մեջբերումներ 引例

Ինչ վերաբերում է ներքինին, հինգ զան-օրգանները պատկանում են ինին, իսկ վեց ֆու օրգանները՝ յանին: Ինչ վերաբերում է արտաքինին, ջլերն ու ոսկորները պատկանում են ինին, իսկ մաշկը՝ յանին *(Հոգևոր առանցք):*

Ին ցիի գործողությունը սկսվում է զովությունից ու հասնում գագաթնակետին՝ ցրտին *(Պարզ զրույց):*

Ասեղնաբուժության միջոցով հիվանդությունները բուժելու բանալին ինի և յանի կարգավորման մեջ է: Եթե ինն ու յանը մնում են ներդաշնակ, հիմնական ցին կարելի է վերականգնել, և այն առատ կլինի *(Հոգևոր առանցք):*

**Ին Ցի**
**ինցի** 阴气

Ին ցին, ի տարբերություն յան ցիի, ընդհանրապես վերաբերում է միմյանց հակադիր և միմյանց լրացնող երկու բաղադրիչներից մեկին: Գործառույթի և ձևի տեսանկյունից այն ձև է: Ներքին գործառույթի տեսանկյունից այն հինգ զան-օրգանների ցին է: Սննդարար ցիի և պաշտպանության ցիի տեսանկյունից այն վերաբերում է առաջինին: Շարժման ուղղության և բնույթի տեսանկյունից այն հակված է դեպի ներս, դեպի ներքև, արգելակող է, թույլ է ու աղոտ: Կարճ ասած, ին ցին վերաբերում է բնության ցիին, հատկանիշները են՝ սառնություն, վերացում, տտպահամություն, պղտորություն, մթագնում, ձևավորում և անկում: Այն վերաբերում է նաև մարդու մարմնի ցիին, հատկանիշները են՝ սառնություն, կծկում, կենտրոնացում, խոնավություն և ճնշում:

[曾经译法] ին-էներգիա, ին-ցի, Ին-Ցի, ինցի,
ին ազդեցություն

[现行译法] ին ցի, ինցի
[标准译法] ին ցի
[翻译说明] ին ցի

Մեջբերումներ 引例

Լուսնային տարվա առաջին ամիսն այն ամիսն է, երբ յան ցին սկսում է ավելանալ, իսկ ին ցին դեռ առատ է: Տարվա այս եղանակին ին ցին բավականաչափ ուժեղ չէ և չի կարող առավելություն ունենալ *(Պարզ զրույց):*

Ին ցին բավարար չէ, իսկ յան ցին գերառատ է: Սա է պատճառը, որ հիվանդները տենդի մեջ են ու անհանգիստ… Յան ցիի պակասն ու ին ցիի ավելցուկը ստիպում է, որ հիվանդը մրսի, ասես հենց նոր է դուրս եկել սառը ջրից *(Պարզ զրույց):*

Ին ցիի գերակշռումը կհանգեցնի նրան, որ երազում մեծ գետ կտրես-անցնես. յան ցիի գերակշռումը կհանգեցնի նրան, որ երազում մեծ խարույկի ուժեղ ջերմություն զգաս *(Հոգևոր առանցք):*

**Ին և Յան**
**ինյան 阴阳**

Ինը և յանը Հին Չինաստանի փիլիսոփայական դրույթ է, որը պարզ պատկերացում է տալիս դիալեկտիկայի մասին: Ավանդական չինական բժշկության ին-յան տեսությունը տեսական համակարգ է, որը համադրում է հնագույն փիլիսոփայական մտքերն ու բժշկական պրակտիկան: Այն ներառում է երկու խոշոր ոլորտ: Նախ, ինը և յանը բնության հիմնարար օրենքներն են, արարված ամեն ինչի սկզբունքը և բոլոր արարածների աճի, զարգացման ու փոփոխության

աղբյուրը: Երկրորդ, ինը և յանը միմյանց հակադիր են, փոխկախյալ, փոխադարձաբար ավելանում և պակասում, ինչպես նաև փոխակերպվում են: Տեսությունը կիրառվում է բժշկական ոլորտում և նպատակ ունի մեկնաբանել մարդու կառուցվածքը, ֆիզիոլոգիան, ախտաբանությունը, ախտորոշումը, կանխարգելումն ու բուժումը:

[曾经译法] ին-յան, ինյան, ին և յան, Ին և Յան
[现行译法] ին և յան, ին-յան
[标准译法] ին և յան
[翻译说明] ին և յան:

Մեջբերումներ 引例

Ինը և յանը երկնքի և երկրի օրենքն են, բոլոր երևույթների հիմնարար սկզբունքը, բոլոր փոփոխությունների ծագումը, կյանքի ու մահվան հիմքը, հոգու գանձատունը *(Պարզ զրույց):*

Կենսագործունեությունը դեռևս հնագույն ժամանակներից սերտորեն կապված է եղել բնական փոփոխությունների հետ: Կյանքի արմատն է սա. ին և յան *(Պարզ զրույց):*

Ինը և յանը անուն ունեն, բայց անձև վերացական հասկացություններ են: Դրանք կիրառվում են՝ իրեր և երևույթներ բացատրելու համար և կարող են ծավալվել մեկից մինչև տասը, տասից մինչև հարյուր, հարյուրից մինչև հազար, հազարից մինչև տասը հազար և անվերջություն *(Հոգևոր առանցք):*

**Ինը կայուն է, յանը՝ սեղմ**
**ին փին յան մի 阴平阳秘**

Եզրույթը վերաբերում է դինամիկ հավասարակշռությանը

կամ կարգավորված կենսահավասարակշռությանը, որը պայմանավորված է կայուն ինի և սեղմ յանի փոխադարձ կարգավորմամբ. սա բնականոն կենսագործունեության հիմքն է: Ըստ ինի ու յանի տեսության՝ մարդը կենսական ուժեր չի ունենա և բնականոն կենսագործունեություն չի վարի, եթե ինն ու յանը չպահպանեն դինամիկ հավասարակշռությունը կամ կարգավորված կենսահավասարակշռությունը, այն է՝ ինի էությունը զերծ է պահում սպառողականությունից, իսկ յան ցին ամրապնդում է: Մարդու մարմնում ին ցիի և յան ցիի միավորումը խթանում է նյութի ու նյութի, նյութի ու էներգիայի փոխարկումը, ինչպես նաև շարժման մեջ է դնում ու կարգավորում մարդու կենսական գործընթացները: Միևնույն ժամանակ, փոխադարձ հակասումն ու զսպումը, փոխադարձ ստեղծումն ու խթանումը, ավելացումն ու նվազումը, ինչպես նաև ինի փոխակերպումը յանի և յանի փոխակերպումն ինի, պահպանում են հավասարակշռության վիճակը, որպեսզի կենսագործունեությունը կարգավորված լինի, իսկ զանազան ֆիզիոոգիական գործառույթներ կայուն կերպով իրականացվեն:

| | |
|---|---|
| [曾经译法] | հանդարտ ին և հուսալի յան, ինը սահուն կերպով ծաղկում է, իսկ յանն անշեղորեն կենդանանում է, Ինը հարթ է ու առողջ, իսկ Յանը՝ պինդ, կարծր, ինի ու յանի հաշվեկշիռ, ինի ու յանի հավասարակշռություն, Ինը խաղաղ է, յանը՝ սեղմ |
| [现行译法] | Ինը խաղաղ է, յանը՝ սեղմ, ինի և յանի հավասարակշռություն, կայուն ին և սեղմ յան |
| [标准译法] | Ինը կայուն է, յանը՝ սեղմ |
| [翻译说明] | ինի և յանի հավասարակշռություն, կայուն ին և սեղմ յան: Ինը կայուն է, յանը՝ սեղմ: |

Մեջբերումներ 引例

Միայն եթե ինը կայուն է, յանը՝ սեղմ, մարդու հոգին եռանդուն կլինի *(Պարզ զրույց):*

Եթե մարդը կարողանա խաղաղ ու մեկուսի լինել դաոսիզմում, էական ցին կմնա ներսում, որ հսկի այն: Կրակը կարող է հասնել քանհունին (ութ եռագրամների հյուսիսային դիրք, որը ներկայացնում է ջուրը), իսկ ջուրը՝ լիգունին (ութ եռագրամների հարավային դիրք, որը ներկայացնում է կրակը): Կրակն ու ջուրը սնում են միմյանց, որ ինը լինի կայուն, իսկ յանը՝ սեղմ, իսկ էական ցին և նախնական ցին անխախտ մնան *(Ունիվերսալ թեթևության բանաչներ):*

**Ինի և յանի փոխադարձ ներաճում**
**ինյան հուգեն** 阴阳互根

Եզրույթը վերաբերում է ինի ու յանի փոխկախյալությանն ու փոխադարձ ամրապնդմանը: Մեկը մշտապես մյուսի գոյության նախադրյալը կամ պայմանն է: Ոչ ինը, ոչ յանը, գոյություն չունեն առանձին: Օրինակ, վերինը ին է, իսկ ստորինը՝ յան: Վերինը գոյություն չունի առանց ստորինի և հակառակը: Մինչդեռ, ինն ու յանը ստեղծվում, ավելանում և նպաստում են միմյանց աճին միայն իրենց փոխկախյալության հիմքով: Օրինակ, ինի էությունը կարևոր հիմք է յան ցիի փոխակերպման ու մարդու մարմնում դրա առաջացման համար: Մարդու մարմնի ներսում ին բնանյութը պաշտպանելու համար պետք է յան ցիի միավորում: Ին բնանյութն ու յան ցին փոխկախյալ են և խթանում են իրար:

[曾经译法] Ինը և Յանը ներաճած են միմյանց մեջ, ինի ու յանի փոխադարձ արմատավորում, ինի ու յանի փոխկախյալություն, ինի և յանի փոխկախյալություն

[现行译法] իՆ-յանի փոխադարձ արմատավորում, ինի և յանի փոխկախյալություն, ինի և յանի փոխներածում

[标准译法] ինի ու յանի փոխադարձ ներածում

[翻译说明] փոխադարձ ներածում, փոխկախվածություն, ինի և յանի փոխներածում

Մեջբերումներ 引例

Յանը ներածում է ինի մեջ և հակառակը: Ինն ու յանը կախված են միմյանցից ու փոխադարձաբար ամրացնում են իրար, իսկ սննդարար ցին և պաշտպանական ցին անվերջ պտտվում են մարմնում *(Ռենջայի ուղեցույցը բանաչևերի վերաբերյալ):*

Ինի և յանի փոխադարձ ներածումն ի սկզբանե չունի հատուկ տեղ, բայց կարող է ունենալ, եթե անհրաժեշտություն լինի *(Դեղին կայսեր բժշկության արփաքին կանոնը):*

Ինն ու յանը ներածում են միմյանց մեջ: Երբեք չեն բաժանվում: Եթե ինը կործանվի, դրա հետ կկործանվի նաև յանը: Արդյունքում, յանի կործանումը նշանակում է ինի կործանում *(Դեղին կայսեր բժշկության արփաքին կանոնը):*

**Ինի և յանի ինքնաբուխ ներդաշնակություն**
**ինյան ցի հե 阴阳自和**

Եզրույթը վերաբերում է փոխադարձ դիմադրության և զսպման միջոցով ինի ու յանի միջև ինքնակարգավորմանը, խնամքին ու հավասարակշռության վերականգնմանը, ինչպես նաև փոխադարձ ներածմանն ու խթանմանը: Կենդանի էակի համար ինի ու յանի ինքնաբուխ ներդաշնակությունը ֆիզիոլոգիական վիճակում նշանակում է ինքնակարգավո-

րում, իսկ պաթոլոգիական վիճակում՝ ին ցիի և յան ցիի հավասարակշռության վերականգնում: Ինի և յանի ինքնաբուխ ներդաշնակությունը ինի և յանի խորքային շարժման օրենքն է, որը բացում է մարդու մարմնի ինքնաբուժման և ինքնավերականգնման ներքին մեխանիզմը:

[曾经译法] ինի և յանի ինքնաբուխ ներդաշնակություն, ին-յան հաշվեկշռի բնականոն վերականգնում, ինի և յանի միջև հավասարակշռության վերահաստատում, ինի և յանի հարաբերական հավասարակշռության վերականգնում

[现行译法] ին-յանի բնական ներդաշնակություն, ինի և յանի ինքնաբուխ ներդաշնակություն, ինքնաբուխ հավասարակշռություն ինի և յանի միջև, հավասարակշռության վերահաստատում ինի և յանի միջև

[现行译法] ինի և յանի ինքնաբուխ ներդաշնակություն

[翻译说明] բնական ներդաշնակություն, ինքնաբուխ ներդաշնակություն

Մեջբերում 引例

Ընդհանրապես, քրտնարտադրության, փսխման կամ լուծողական մեթոդով բուժման հետևանքով արյունը կամ ին հեղուկները վնասելու դեպքում հնարավոր է, որ հիվանդն ինքնուրույն բուժվի, եթե ինն ու յանն ինքնուրույն հավասարակշռվեն ինքնաբուխ ներդաշնակությամբ *(Քննախուսություն ցրտահարության մասին):*

**Ինի և յանի փոխազդեցությունը**
**ինյան ձիաոգան 阴阳交感**

Եզրույթը վերաբերում է ին ցիի և յան ցիի փոխազդեցու-

թյանը փոխադարձ ինդուկցիայի շնորհիվ: Ինի և յանի փոխազդեցությունը տիեզերքում ամեն ինչի ստեղծման և փոփոխության հիմքն է: Այն կյանքի արարման հիմքն է, փոխադարձ դիմադրության, փոխադարձ ներաճման, ավելացման ու նվազման, ինի և յանի փոխարկման հարաբերությունների նախադրյալն է: Առանց ինի և յանի փոխազդեցության չի կարող լինել կյանք կամ բնություն:

| | |
|---|---|
| [曾经译法] | ին-յան միակցում, ինյան համալիր, ինի և յանի համադրություն, ինի և յանի փոխազդեցություն |
| [现行译法] | ինի և յանի փոխազդեցություն, փոխազդեցություն ինի և յանի միջև |
| [标准译法] | ինի և յանի փոխազդեցություն |
| [翻译说明] | ինի և յանի փոխազդեցություն |

Մեջբերում 引例

Հավանական է, որ սննդարար ցիի մեջ կա պաշտպանիչ ցի և հակառակը: Անոթների ներսում շրջանառվող ցին կոչվում է սննդարար ցի, իսկ դրսում շրջանառվող ցին՝ պաշտպանիչ ցի: Սա ինի ու յանի հաղորդակցության արդյունքն է: Դրանք դառնում են երկու միավոր, երբ առանձին են, և մեկ միավոր, երբ համադրվում են *(Դասականներ):*

**Ինի փոխարկումը յանի և հակառակը**
**ինյան ջուանհուա 阴阳转化**

Եզրույթը նշանակում է, որ որոշակի հանգամանքներում ինը կամ յանը կարող են փոխարկվել մեկը մյուսի. սա ինի և յանի միջև շարժման հիմնական ձևն է: Որոշակի պայմաններում մեկը փոխվում է մյուսի, այն է՝ ինը կարող է փոխարկվել յանի, իսկ յանը՝ ինի: Այս փոխարկումը կարող է

դրսևորվել կամ աստիճանական գործընթացում կամ անակնկալ կերպով: Ֆիզիոլոգիայում այն դրսևորվում է գործառույթի և նյութի միջև փոխադարձ փոխակերպման, ինչպես նաև ինի և յանի փոխադարձ արմատավորման տեսքով, այն է՝ ինը ծնունդ է տալիս յանին, յանը՝ ինին: Ախտաբանության մեջ ինի և յանի փոխադարձ փոխարկումը դրսևորվում է այն փաստի մեջ, որ ծայրահեղ ցուրտը ծնում է շոգ, իսկ ծայրահեղ շոգը՝ ցուրտ:

| | |
|---|---|
| [曾经译法] | ին-յան փոխակերպում, ինի և յանի փոխադարձ ձևափոխում, Ինի փոխարկումը Յանի և հակառակը, ինի և յանի փոխադարձ ձևափոխումը, ձևափոխում ինի և յանի միջև |
| [现行译法] | ին-յանի փոխադարձ շրջելիություն, ինի և յանի փոխադարձ ձևափոխում, ին-յան փոխարկում |
| [标准译法] | ինի և յանի փոխարկում |
| [翻译说明] | փոխարկվել, ձևափոխվել, փոխարկելիություն, փոխարկում, փոխակերպելիություն |

Մեջբերում 引例

Նույն դեղաբույսը նշանակվում է թե՛ սրտի, թե՛ երիկամի յան ցին ամրապնդելու համար, ինչպես նաև ջերմության ներքին պակասը վերացնելու համար: Մի՞թե սա ինի և յանի փոխակերպման անհավանական օրինակ չէ *(Մայթերիա մեդիկայի նկարագրություն):*

**Ինի և յանի ավելացումն ու նվազումը**
**ինյան սյաոչան 阴阳消长**

Եզրույթը նկարագրում է ինի և յանի մակընթացությունն

ու տեղատվությունը շարժման տեսանկյունից, որոշակի սահմաններում: Փոխադարձ հակադրման և ներաճման հարաբերությունների պատճառով ցանկացած երևույթի ինը և յանն ամրագրված չեն, այլ փոխադարձ աճի ու նվազման շարունակական վիճակում են և ավելացման ու նվազման գործընթացում պահպանում են դինամիկ հավասարակշռությունը: Ինի և յանի հայեցակետերը բնության մեջ հակադիր են և մշտական վերելքի ու անկման մեջ են: Փոխադարձ դիմադրությունն ու փոխզսպումը, ինչպես նաև ինի և յանի փոխադարձ ներաճումն ու խթանումը հանգեցնում են ինի և յանի ավելացմանն ու նվազմանը, որին առաջին հերթին մասնակցում է առաջինը:

| | |
|---|---|
| [曾经译法] | ինի և յանի աճն ու նվազումը, ինի և յանի ավելացումն ու նվազումը, ինի և յանի բնական հոսքը, ինի և յանի մակընթացությունն ու տեղատվությունը, Ինի և Յանի հարաբերական ավելացումն ու նվազումը, ինի և յանի ավելացումն ու նվազումը |
| [现行译法] | ին-յանի ավելացումն ու նվազումը, ավելացումն ու նվազումը ինի և յանի միջև |
| [标准译法] | ինի և յանի ավելացումն ու նվազումը |
| [翻译说明] | ավելացում և նվազում |

Մեջբերում 引例

Ցուրտ և ամառային տապ օրերը ինի և յանի նվազման և ավելացման դրսևորումներն են բնական միջավայրում, մինչդեռ պակասն ու ավելցուկը մարդու մարմնում ինի ու յանի ավելացման ու նվազման դրսևորումներն են *(Պարզ զրույց «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում», ծանոթագրությունը՝ Վու Կունի):*

**Հինգ տարր**
**վուսին 五行**

Գաղափարը վերաբերում է հինգ հիմնական նյութերին՝ ջուր, կրակ, փայտ, մետաղ և հող, ինչպես նաև դրանց շարժումներին ու փոփոխություններին: Հինգ տարրերի կիրառումն ավանդական չինական բժշկության մեջ հիմնականում կենտրոնանում էր հինգ տարրերի և հինգ զան-օրգանների միջև համապատասխան հարաբերությունների վրա, ապա զարգացավ ու վերածվեց ավանդական չինական բժշկության հիմնական տեսություններից մեկի: Հինգ զան-օրգանների համապատասխան հինգ տարրերի վրա հենվելով՝ միջօրեականներն օգնում են միավորել մարմինը որպես մեկ ամբողջություն: Այն նաև բացատրում է մարդու և բնության միասնությունը, երբ դրանք համադրվում են հինգ ուղղությունների և տարվա չորս եղանակների գաղափարների, բնության մեջ դիտարկումների և կլինիկական պրակտիկայի զարգացման վրա: Բացի այդ, հինգ տարրերի ծագումը, զսպումը, գերզսպումն ու հակազսպումը դրսևորում են հինգ զան-օրգանների փոխկախյալությունն ու փոխզսպումը, որոնք արտացոլում են հիվանդությունների կանխարգելման և բուժման սկզբունքը՝ ինի ու յանի տեսության հետ համատեղ:

[曾经译法] հինգ տարր, հինգ փուլ, Ուսին, Ու-սին, հինգ փոխազդեցություն, հինգ շարժում
[现行译法] հինգ փուլ, հինգ տարր
[标准译法] հինգ տարր
[翻译说明] 译词տարրեր, տարրեր 是静态的, հինգ տարր, փուլեր 的意思是, շարժում, փոխազդեցություն, 译为հինգ տարր

Մեջբերումներ 引例

Հինգ տարրերն են՝ մետաղ, փայտ, ջուր, կրակ և հող:

Դրանց փոփոխությունները՝ ավելացումն ու նվազումը, օգտակար է բժիշկների համար կանխատեսումներ անելու, բուժման ազդեցությունը գնահատելու, հինգ զան-օրգանների ցի վիճակը հասկանալու, հիվանդության բարելավման կամ վատթարացման ժամանակը հաստատելու և մոտալուտ մահվան ամսաթիվը նախագուշակելու համար *(Պարզ զրույց):*

Հինգ տարրերի հերթագայումը կանոնավոր է, իսկ կլիմայի փոփոխությունները դասակարգվում են ըստ տարվա չորս եղանակների: Այն բնականոն է, եթե միջօրեական ցիի շրջանառությունը համապատասխանում է տարվա չորս եղանակներին և հինգ տարրերին. հակառակ դեպքում այն բնականոն չէ *(Հոգևոր առանցք):*

Տարվա չորս եղանակների փոփոխությունն ու հինգ տարրերի հերթագայումը ծնունդ տվեցին ծլարձակման, աճի, բերքահավաքի ու պահուստավորման, ինչպես նաև կլիմայական փոփոխությունների (ցուրտ, ամառվա տապ, չորություն, խոնավություն և քամի) օրենքին *(Պարզ զրույց):*

**Հինգ տարրերի առաջացումը**
**վուսին սյանշեն** 五行相生

Եզրույթը վերաբերում է հինգ տարրերի փոխհարաբերություններին, որտեղ տարրերից յուրաքանչյուրն առաջանում, ավելանում և խթանում է հաջորդին: Առաջացման կարգը հետևյալն է. փայտը ծնում է կրակ, կրակը՝ հող, հողը՝ մետաղ, մետաղը՝ ջուր, իսկ ջուրը՝ փայտ: Առաջացման հարաբերությունների տեսանկյունից հինգ տարրերից յուրաքանչյուրը պարունակում է երկու կողմ՝ «առաջացնել» և «առաջանալ»: Ավանդաբար, հարաբերությունների այս տեսակը համեմատում են մայր-երեխա հարաբերությունների հետ: Ծնող տարրը մայրն է, իսկ ծնվողը՝ երեխան: Հետևաբար,

հինգ տարրերի առաջացումը նշանակում է, որ մի տարրը ստեղծում, ամրապնդում ու խթանում է մյուս տարրը:

| | |
|---|---|
| [曾经译法] | հինգ տարրերի առաջացումը, հինգ տարրերի առաջացումը միմյանց ներսում, հինգ տարրերի փոխխթանումը, հինգ տարրերի փոխադարձ առաջացումը, միջտարրային առաջացում, հինգ տարրերի/փուլերի առաջացումը |
| [现行译法] | հինգ փուլերի փոխադարձ ստեղծումը, հինգ տարրերի ստեղծում, առաջացում հինգ տարրերի ներսում |
| [标准译法] | առաջացում հինգ տարրերի ներսում |
| [翻译说明] | փոխադարձ ստեղծում 所以不译成, ստեղծում հինգ տարրերի ներսում |

Մեջբերումներ 引例

Հինգ տարրերի առաջացումը կատարվում է հետևյալ հերթագայությամբ՝ փայտ, կրակ, հող, մետաղ և ջուր: Այն անվերջ շրջանառվում է *(Քննախուսություն փայծաղի ու ստամոքսի մասին):*

Տարվա ընթացքում հինգ տարրերը (փայտ, կրակ, հող, մետաղ և ջուր) շարժվում են որոշակի հերթականությամբ՝ վերահսկելով տարվա չորս եղանակների կլիմայական փոփոխությունները *(«Պարզ զրույցի» ուղղակի մեկնաբանություն «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

**Սահմանափակում հինգ տարրերի ներսում**
**վուսին սյանկե 五行相克**

Եզրույթը նշանակում է հարաբերություններ, որոնք

զսպում և վերահսկում են հինգ տարրերը: Հինգ տարրերի սահմանափակումն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ. փայտը սահմանափակում է հողը, հողը՝ ջուրը, ջուրը՝ կրակը, կրակը՝ մետաղը, իսկ մետաղը՝ փայտը: Զսպման ու սահմանափակման հարաբերություններում հինգ տարրերից յուրաքանչյուրը պարունակում է երկու հայեցակետ՝ «զսպելու» և «զսպվելու»: «Դեղին կայսեր բժշկության ներքին օրենքը» (Հուանդի Նեյձին) այս երկու հայեցակետն անվանում է «չնվաճված» և «ոչ չնվաճված», այն է՝ «սահմանափակելը» համապատասխանում է «չնվաճվելուն», իսկ «սահմանափակվելը»՝ «ոչ չնվաճվելուն»: Հետևաբար, հինգ տարրերի սահմանափակումը ենթադրում է փոխադարձ զսպում և վերահսկողություն:

[曾经译法] հինգ տարրերի սահմանափակումը, հինգ տարրերի փոխզսպումը, հինգ տարրերի փոխազդեցությունը (նվաճում կամ ստուգում), հինգ տարրերի փոխզսպումը
[现行译法] հինգ փուլերի փոխադարձ զսպումը, հինգ տարրերի զսպումը, զսպում հինգ տարրերի/փուլերի ներսում
[现行译法] հինգ տարրերի զսպումը
[翻译说明] 译词զսպել, արգելել多用, փոխազդել, 常用来հինգ տարրերի սահմանափակումը

Մեջբերումներ 引例

Դեղաբույսերն ունեն հինգ համ (թթու, դառը, քաղցր, սուր և աղի), որոնք համապատասխանում են հինգ տարրերին: Դրանք կարող են լրացնել կամ պակասեցնել ըստ հինգ տարրերի փոխադարձ առաջացման կամ զսպման *(«Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնի» մեծ պարզությունը):*

Ըստ հինգ տարրերի զսպման տեսության՝ մի տարրի

հիվանդությունը սովորաբար փոխանցվում է դրա զսպված կրկնօրինակին *(«Ոսկե խցի հիմնական դեղատոմսերի» քննարկում և ծանոթագրություն):*

**Հինգ տարրերի գերզսպում**
**վուսին սյանչեն 五行相乘**

Եզրույթը վերաբերում է այն դեպքերին, երբ մի տարրը չափից շատ է սահմանափակում մյուսը. գործընթացը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ. փայտը չափից շատ սահմանափակում է հողը, հողը՝ ջուրը, ջուրը՝ կրակը, կրակը՝ մետաղը, իսկ մետաղը՝ փայտը: Այս երևույթն ունի երկու պայման. «չափազանց շատ» և «չափազանց քիչ»: «Չափազանց շատ» նշանակում է, որ մի տարրը չափազանց ակտիվ է և շատ է զսպում մյուսը՝ այդպիսով հանգեցնելով հինգ տարրերի միջև ոչ բնականոն վիճակի: «Չափազանց քիչը», հակառակը, նշանակում է, որ մի տարրը չափազանց թույլ է, չի պայքարում մյուսի բնականոն զսպման դեմ և արդյունքում էլ ավելի է թուլանում:

[曾经译法] հինգ տարրերի ճնշում, հինգ տարրերի փոխադարձ ներխուժում, հինգ տարրերի ներխուժում, հինգ տարրերի փոխադարձ հնազանդություն, հինգ տարրերի փոխադարձ գերզսպում

[现行译法] հինգ տարրերի գերզսպում, գերզսպումը հինգ տարրերի միջև, հինգ փուլերի չափազանց ակտիվություն

[标准译法] հինգ տարրերի գերզսպում

[翻译说明] 译词 անհաղթահարելի, ներխուժում 表示, ներխուժում 表示, գերզսպում, 可译为 հինգ տարրերի գերսահմանափակում

Մեջբերում 引例

Ջան Ջունփինն իր մենագրության մեջ կիսվել է հինգ տարրերի գերզսպման և հակազդեցության մասին իր պնդումներով *(Լրացում զարկերակի մասին ավանդական գիտելիքներին):*

**Հակասահմանափակումը հինգ տարրերի միջև վուսին սյանվու 五行相侮**

Եզրույթը նշանակում է, որ տարրերից մեկը, որն ի սկզբանե սահմանափակում էր մյուսը, փոխադարձաբար սահմանափակվում է, և դա կատարվում է հետևյալ հաջորդականությամբ. փայտը սահմանափակում է մետաղը, մետաղը՝ կրակը, կրակը՝ ջուրը, ջուրը՝ հողը, իսկ հողը՝ փայտը: Այս երևույթն ունի երկու պայման. «չափազանց շատ» և «չափազանց քիչ»: «Չափազանց շատ» պայմանի դեպքում մի տարրը չափազանց առատ է, և արդյունքում սահմանափակվող տարրն այլևս ի վիճակի չէ հակասահմանափակել այն: Եվ հակառակը, հակասահմանափակումը, որը տեղի է ունենում «չափազանց քիչ» պայմանի դեպքում, ենթադրում է, որ մի տարրը չափազանց թույլ է և չի կարող հակասահմանափել իրեն սահմանափակած մյուս տարրը:

| | |
|---|---|
| [曾经译法] | հինգ տարրերի խռովություն, հինգ տարրերի փոխադարձ վնասում, հինգ տարրերի խախտում, հինգ տարրերի փոխադարձ սահմանափակում, հինգ տարրերի փոխզսպում |
| [现行译法] | հինգ փուլերի փոխադարձ սահմանափակում, հինգ տարրերի փոխզսպում, փոխսահմանափակում հինգ տարրերի միջև, հինգ փուլերի փոխզսպում |

[标准译法] հինգ տարրերի փոխադարձ սահմանափակում

[翻译说明] փոխադարձ սահմանափակում

Մեջբերումներ 引例

Սա նման է տարվա չորս եղանակների կլիմայական փոփոխությունների ավելցուկային կամ խիստ անբավարար վիճակին և ին-յանի ու զան-ֆու օրգանների գերզսպման և հակասահմանափակման հարաբերություններին *(Բժշկական ավանդույթի ոսկե հայելին)*:

Հողը չի կարող զսպել ջուրն այնպես, որ ջուրը հակազդի հողին: Այսպիսով, փայծաղի ու ստամոքսի ցին նվազում է այսպիսի պայմաններում *(Գրառումներ ախտանիշերի տարբերակման մասին)*:

## **Հինգ տարրերի արգելակում և փոխակերպում**
## **վուսին ջիհուա 五行制化**

Եզրույթը վերաբերում է հինգ տարրերի առաջացման և զսպման փոխհարաբերություններին, որի ընթացքում այդ երկուսը փոխլրացնում են իրար՝ այդպիսով ապահովելով հինգ տարրերի կոորդինացիան ու կայունացումը: Հինգ տարրերի արգելակում և փոխակերպում ասելով նկատի ունենք հինգ տարրերի փոխադարձ կարգավորում՝ փոխադարձ սահմանափակման հետ համատեղ: Փոխադարձ կարգավորումն ու փոխադարձ սահմանափակումն անբաժանելի են միմյանցից: Առանց դրանց չի լինի ոչ ծնունդ, ոչ աճ: Առանց սահմանափակման անհնար է պահպանել իրերի ու երևույթների ներդաշնակ հարաբերությունները: Հետևաբար, թե՛ ստեղծումը, թե՛ սահմանափակումը պետք է գոյություն ունենան միասին, որպեսզի պահպանվի իրերի

ներդաշնակությունն ու կոորդինացիան, ինչպես նաև խթանվեն կայուն և կանոնավոր փոփոխություններն ու զարգացումը:

| | |
|---|---|
| [曾经译法] | հինգ տարրերի արգելակում և ստեղծում, հինգ տարրերի առաջխաղացում և հակազդող հարաբերություններ, հինգ տարրերի սահմանափակում և առաջացում, հինգ տարրերի արգելակում և առաջխաղացում |
| [现行译法] | հինգ տարրերի արգելակում և ստեղծում, արգելակում և փոխարկում հինգ տարրերի միջև |
| [标准译法] | արգելակում և փոխակերպում հինգ տարրերի մեջ |
| [翻译说明] | սահմանափակում և ստեղծում հինգ տարրերի միջև, արգելակում և փոխակերպում հինգ տարրերի միջև |

Մեջբերում 引例

Տիեզերքում ամեն բան կառավարող օրենքները կարելի է բացատրել հինգ տարրերի միջև արգելակման և փոխարկման սկզբունքով *(«Դեղին կայսեր բժշկության ներքին կանոն, պարզ զրույցի ուղիղ մեկնաբանություն»):*

Քամին բիռ է (标, կատար), իսկ կրակը՝ բեն (本, արմատ), ինչպես բիռբենը՝ հինգ տարրերի արգելակման և փոխարկման ժամանակ *(Քննարկումներ առողջության պահպանման վերաբերյալ):*

## Հինգ տարրերի մեկընդմեջ առավելություն վուսին ենֆու 五行胜复

Եզրույթը նշանակում է մի տարրի ավելցուկի կրճատում հինգ տարրերի հաջորդական սահմանափակման միջոցով, որի նպատակը հավասարակշռության վերականգնումն է: Մեկընդմեջ առավելությունը հինգ տարրերի ինքնակարգավորման ձև է՝ սահմանափակման սկզբունքի համաձայն: Կա երկու իրավիճակ, երբ ցին առավելություն է ունենում. 1) մի տարրի ավելցուկ, որը դրսևորվում է որպես բացարձակ առատություն և 2) թույլ տարր, որի պատճառով նրան սահմանափակող տարրը համեմատաբար շատանում է: Փոխհատուցող ցին ծնվում է առավելության ցիից, այն է՝ առավելության ցին նախորդում է հատուցման ցիին: Հատուցման ցին գալիս է «վրեժ լուծելու» առավելության ցիից և հավասարակշռելով այն: Կարգավորման այս մեխանիզմի միջոցով հինգ տարրերի համակարգը կարող է իրականացնել ինքնակարգավորման իր գործառույթը՝ պահպանելով ընդհանուր հավասարակշռությունը, երբ համակարգի մի մասը ներդաշնակ չէ:

| | |
|---|---|
| [曾经译法] | հինգ տարրերի գերակշռում, հինգ տարրերի առավելություն |
| [现行译法] | հինգ տարրերի մեկընդմեջ առավելություն, մեկընդմեջ առավելություն հինգ տարրերի մեջ |
| [标准译法] | մեկընդմեջ առավելություն հինգ տարրերի մեջ |
| [翻译说明] | մեկընդմեջ, մեկընդմեջ առավելություն հինգ տարրերի մեջ |

Մեջբերումներ 引例

Եթե մարդու դեմքը կապտավուն գույն ունի ու հեշտությամբ խռնավանում է, ուրեմն լյարդի ցին չափազանց շատ

է: Այս դեպքում պետք է ոչ միայն հանդարտեցնենք լյարդը (փայտ), այլև թարմացնենք թոքը (մետաղ), որպեսզի այն զսպի առաջինին: Սա հինգ տարրերի մեկընդմեջ առավելության դեպքն է և դեղաբույսեր նշանակելու ուղենշային սկզբունքը *(Չիշույ և Սյուանշու):*

Սրտի բաբախյունի այս տասը փոփոխությունները համապատասխանում են հինգ տարրերի մեկընդմեջ առավելության սկզբունքին (*Ուքսունմեկ բարդ հարցի նկարագարդումներ և նախադասություններ):*

**Սահմանափակել հիպերակտիվությունը՝ հավասարակշռությունը պահպանելու համար քան հայ չեն ջի 亢害承制/**

Եզրույթը ցույց է տալիս, որ երբ հինգ տարրերից մեկը գերակտիվ է, մշտապես կլինի մեկ այլ տարր, որը կսահմանափակի այն՝ հետ բերելով համեմատաբար հավասարակշիռ վիճակի: Ըստ հինգ տարրերի տեսության՝ յուրաքանչյուր տարր ունի երկակի գործառույթ՝ ծնել և սահմանափակել: Այս երկու հայեցակարգերն անբաժանելի են, և մեկը պարունակում է մյուսը: Դրանք հակազդում, սակայն նաև լրացնում են իրար, ու մեկը գոյություն չունի առանց մյուսի: Հակազդման ու զսպման փոխադարձ կապը հավասարակշռությունն ու կոորդինացումը պահպանելու, այդպիսով նաև կայուն և կազմակերպված զարգացումը խթանելու բանալին է: Ստեղծումն առանց սահմանափակման կհանգեցնի չափազանց առատության և ի վերջո վնաս կտա: Եվ ուրեմն, այսպիսի առատությունը պետք է զսպել, որպեսզի ինի, յանի, արյան ու ցիի հավասարակշռությունը պահպանվի: Ստեղծումն ու սահմանափակումը միշտ չէ, որ հավասար ուժ ունեն: Երբ Ստեղծումը գերակշռում է, այն կոչվում է «գերակշռող ստեղծում առանց սահմանափակման»: Հակառակ դեպքում կոչվում է «գերակշռող սահմանափակում՝ ստեղծ-

մամբ»: Այս գործողությունները ու հակազդեցությունները ապահովում են երկնքի տակ ամեն ինչի հավասարակշռությունը, ինչպես նաև զարգացումը:

[曾经译法] Հինգ տարրերի վնասակար գերակտիվությունը պետք է ճնշվի: Քանի որ չափազանց մեծ քանակը վնասակար է, այն պետք է զսպել: Ծայրահեղությունը վնաս է տալիս, իսկ զսպումը հավասարակշռում է:

[现行译法] Հիպերակտիվությունը վնասակար է, պետք է զսպել այն: Հինգ տարրերի հիպերակտիվությունը վնասակար է, հետևաբար պետք է սանձել այն. վնասակար գերակտիվություն՝ հանուն ներդաշնակության, զսպել ծայրահեղությունը՝ ներդաշնակության հասնելու համար, զսպված ծայրահեղություն, որը խանգարումներ է առաջացնում, վնասակար գերակտիվություն և համապատասխան զսպում, վնասակար հիպերակտիվություն, որը վերահսկում ու զսպում են՝ հավասարակշռությունը պահպանելու համար:

[标准译法] սահմանափակել գերակտիվությունը՝ հավասարակշռություն պահելու համար

[翻译说明] 被译为 ծայրահեղ, ծայրահեղություն, 和գերակտիվություն, 而 հիպերակտիվություն, 表示 ոչ բնականոն ձևով և ծայրահեղ ակտիվ, վնասակար, հիպերակտիվություն, 译为 վնասակար հիպերակտիվություն և համապատասխան զսպում, 而 զսպելով պահպանել հավասարակշռությունը, զսպել հիպերակտիվությունը՝ հավասարակշռությունը պահպանելու համար

Մեջբերումներ 引例

Երբ փայծաղի հիվանդությունները փոխանցվում են երիկամ, պետք է կրճատել փայծաղի հողն ու թարմացնել թոքի մետաղը, որպեսզի սնենք երիկամաջուրը: Սա բուժման ռազմավարություն է և տարբերակում, որը հիմնված է հավասարակշռությունը պահելու նպատակով հիպերակտիվությունը կրճատելու գաղափարի վրա *(Քննախուսություն թոքախտային հիվանդությունների մասին)*:

Նրանք, ովքեր զբաղվում են բժշկությամբ, պետք է մեծ նշանակության տան հավասարակշռությունը պահպանելու նպատակով հիպերակտիվությունը կրճատելու և ստեղծելու սկզբունքներին: Գործնականում այս սկզբունքը պետք է իմաստուն կերպով օգտագործել *(Պարահական նոթեր բժշկության մասին)*:

**Հինգ շրջույթ վույուն** 五运

Եզրույթը վերաբերում է փայտի, կրակի, հողի, մետաղի ու ջրի ցի շարժումների փոփոխություններին, այն է՝ փայտի շրջույթ, կրակի շրջույթ, հողի շրջույթ, մետաղի շրջույթ և ջրի շրջույթ: Վեց ցիի (քամի, ջերմություն, կրակ, խոնավություն, չորություն և սառնություն) տեսության հետ մեկտեղ հինգ շրջույթների տեսությունը կիրառվել է «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնի» (Հուանդի Նեյձին) վերլուծության մեջ՝ կլիման, բնապարբերագիտությունը, ինչպես նաև մարդու մարմնի ֆիզիոլոգիական և ախտաբանական փոփոխությունները կանխատեսելու համար: Հինգ տարրերի տեսությունն օգտագործվել է՝ օրվա տարբեր ժամերին ստեղծման և զսպման հարաբերությունները վերլուծելու համար, իսկ ստեղծման և փոխազդեցության հարաբերությունները կիրառվել են տարվա տարբեր եղանակներին,

տարեթվերին և ժամերին հիվանդությունների վրա ազդեցությունները վերլուծելու նպատակով: Այսպիսով, հինգ շրջույթների տեսությունը զարգացել է այն ժամանակ, երբ հինգ տարրերի առաջացման և զսպման սկզբունքն ընդլայնվել է՝ ընդգրկելով տարվա հինգ եղանակները (գարուն, ամառ, ուշ ամառ, աշուն և ձմեռ) և տարիների միջև ժամանակահատվածը:

| | |
|---|---|
| [曾经译法] | հինգ շրջան, հինգ շարժում, հինգ տարրերի շարժում |
| [现行译法] | հինգ շարժում, հինգ շրջույթի փուլ, զարգացման հինգ փուլ |
| [标准译法] | հինգ շրջույթ |
| [翻译说明] | շրջան 指, շարժում 指运动, շարժում 则, 但 շրջապտույտ, զարգացման հինգ փուլ 不够简洁 |

Մեջբերումներ 引例

Հինգ շրջույթները հերթով շարժվում են տարվա ընթացքում, և յուրաքանչյուրն ունի իր գերակշռող ժամանակահատվածը: Տարվա վերջին այն կրկնվում է սկզբից *(Պարզ զրույց):*

Մի անգամ լսեցի հինգ շրջույթների մասին բացատրությունը. սակայն քո բացատրությունը միայն հինգ շրջույթների ցիի՝ տարվա գերիշխանության մասին է *(Պարզ զրույց):*

**Վեց ցի**
**լիուցի 六气**

Վեց ցի ասելով նկատի ունենք վեց կլիմայական գործոնների փոփոխությունները՝ քամի, ջերմություն, կրակ (ամռան տապ), խոնավություն, չորություն և սառնություն: Վեց ցիից

ամռան տապն ու ջերմությունը վերաբերում են կրակին, մասնավորապես նախարարի կրակին և համապատասխանաբար միապետի կրակին: Երբ վեց ցին համադրվում են երեք ինի ու երեք յանի հետ, կոչվում են ճյուին՝ քամի-փայտ, շաոին՝ միապետի կրակ, թային՝ խոնավություն-հող, շաոյան՝ նախարարական կրակ, յանմին՝ չորություն-մետաղ և թայյան՝ սառնություն-ջուր: Վեց ցիի տեսությունը բացատրում, ինչպես նաև կանխատեսում է տարվա մեջ տեղի ունեցող ընդհանուր և հատուկ կլիմայական փոփոխությունները՝ ըստ 12 երկրային ճյուղերի, ինչպես նաև երեք-ին և երեք յան համադրության: Մասնավորապես, վեց ցին ներառում է գերակշռող ցին, ենթակա ցին և ենթակա ցիի և գերակշռող ցիի համադրությունը:

| | |
|---|---|
| [曾经译法] | ՎԵՑ ՑԻ, մարմնի նյութի վեց տեսակ, եղանակի վեց տեսակ, վեց անհրաժեշտություն |
| [现行译法] | վեց կլիմայական գործոն, վեց մթնոլորտային ազդեցություն, վեց ցի, վեց ցի |
| [标准译法] | վեց ցի |
| 翻译说明 | 被译为 վեց կլիմայական գործոն,<br>也有译为 վեց մթնոլորտային ազդեցություն,<br>将六气译为 վեց կլիմայական գործոն,<br>或 վեց մթնոլորտային ազդեցություն,<br>可译为 վեց ցի: |

Մեջբերումներ 引例

Դեռին կայսրն ասում էր. «Կցանկանայի իմանալ, թե կոնկրետ երբ է վեց ցին հաջորդում իրար՝ տարվա ընթացքում մեկից մյուսին անցնելով» *(Պարզ զրույց):*

Վեց ցիին և հինգ տարրերին համապատասխան հինգ տեսակ միջատների և կենդանիների միջև գոյություն ունի գերակշռման և զսպման հարաբերություն *(Պարզ զրույց):*

Վեց ցիի փոփոխությունները կարող են լինել բնականոն կամ ոչ բնականոն, ներառյալ ցիի գերակշռումն ու ցիի փոխհատուցումը, ինչպես նաև առողջ ցին և ախտածին ցին *(Պարզ զրույց):*

**Գերակշռող ցի**
**ջուցի 主气**

Գերակշռող ցին, որը հայտնի է նաև գերակշռող շրջանների ցի անունով, վերաբերում է այն ցիին, որը պատասխանատու է տարվա ընթացքում վեց ժամանակահատվածների կլիմայական փոփոխությունների համար: Ավելի կոնկրետ, գերակշռող ցին կառավարում է քսանչորս արևային շրջանները (սեզոնային բաժանման կետերը), այսինքն՝ այն ամբողջ տարին բաժանում է վեց փուլերի, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է չորս արևային շրջանից: Վեց ցիի գերակշռող շրջանները սկսվում են նախորդ տարվա «Դեկտեմբերի ցրտերից», ապա դրանց հաջորդում է «Գարնան սկիզբը», «Անձրևաջրերը», «Միջատների արթնացումը» և ավարտվում է «Գարնան գիշերահավասարով»: Սա կոչվում է ցիի առաջին փուլ: Ցիի երկրորդ փուլը սկսվում է «Գարնան գիշերահավասարից», ապա դրան հաջորդում է «Մաքուր պայծառությունը», «Մեծ անձրևը» և «Ամռան սկիզբը», ինչն ավարտվում է «Հացահատկի ոչառատության» շրջանով: Ցիի երրորդ փուլը սկսվում է ապրիլին, «Հացահատկի ոչ առատության» շրջանից առաջ, ապա դրան հաջորդում են «Հացահատիկը մորուքի մեջ», «Ամառային արևադարձ», «Ավելի քիչ տաքություն» փուլերը, և շրջանը փակվում է «Մեծ տապից» առաջ: Ցիի չորրորդ փուլը սկսվում է հունիսի կեսին, «Ավելի մեծ տապից», դրան հաջորդում է «Աշնան սկիզբը», «Տապի ավարտն» ու «Սպիտակ ցողը», և շրջանն ավարտվում է «Աշնան գիշերահավասարից» առաջ: Ցիի հինգերորդ փուլը սկսվում է օգոստոսի կեսին, «Աշնանային գիշերահավասարից», որին հաջորդում է «Սառը ցողը»,

«Սառնամանիքի վայրէջքը», «Ձմռան մեկնարկը», և այն ավարտվում է «Ավելի քիչ ձյունից» առաջ: Ցիի վերջին փուլը սկսվում է հոկտեմբերի կեսին՝ «Ավելի քիչ ձյունից», որին հաջորդում է «Ավելի շատ ձյունը», «Ձմեռային արևադարձը», «Ավելի քիչ ցուրտը», ու ավարտվում է «Ավելի մեծ ցրտից» առաջ:

[曾经译法] տնօրինել կլիմայական ցին, հիմնական Ցի, սեզոնային Ցի
[现行译法] գերակշռող ցի, գլխավոր ցի
[标准译法] գերակշռող ցի
[翻译说明] 译为 գերակշռող,译为 տնօրինող, 但不及 գերակշռող:

Մեջբերումներ 引例

Եթե կա փոխարինող ցի, կարիք չկա հետևել այն կանոնին, որի համաձայն հիվանդությունները չի կարելի բուժել տաքացնող դեղերով: Նույն կերպ նաև կարիք չկա հետևել կանոնին, ըստ որի ցրտահարությունը հնարավոր չէ բուժել սառեցնող դեղերով: Պատճառն այն է, որ ենթակա ցին կգրավի գերակշռող ցիի տեղը, երբ այն բավարար չլինի *(Պարզ զրույց):*

Մի տարվա ընթացքում չորության, խոնավության, սառնության, ամառվա տապի, քամու ու կրակի գերակշռող ցին բացահայտում է վեց ցիի փոփոխությունների օրինաչափությունները *(Տեսակետներ շրջույթի և ցիի մասին):*

**Ենթակա ցի**
**քեցի 客气**

Ենթակա ցին համարվում է գերակշռող ցիի հակադրություն: Այն պատասխանատու է տարվա ընթացքում իրար

հաջորդող վեց ժամանակաշրջանների կլիմայական փոփոխությունների համար: Ենթակա ցիի պարբերական ցիկլը վեց տարի է: Ենթակա ցին ունի տարբեր հատկություններ, վերելքի և վայրէջքի փոփոխություններ տարվա տարբեր փուլերում, ինչպես նաև Երկնային ցողունների փոփոխություններ: Ինչպես գերակշռող ցին, այնպես էլ ենթակա ցին նույնպես ամբողջ տարին բաժանում է վեց փուլերի, բայց գերակշռող ցիի հաջորդականությունը բոլորովին այլ է, և երեք յանին հաջորդում է երեք-ինը: Երեք-ինը և երեք-յանը դասավորվում են որոշակի հաջորդականությամբ՝ կազմելով ենթակա ցիի վեց փուլերի փոփոխության կանոնները:

[曾经译法] ախտածին գործոններ, արտածին ախտածին ցի, արտաքին Չարություն, ոչ բնականոն կլիմա

[现行译法] ներխուժող ցի, ենթակա ցի, հյուր ցի, հյուր կլիմայական ցի

[标准译法] ենթակա ցի

[翻译说明] 译文 ախտածին գործոններ, արտածին ախտածին ցի, 或 ներխուժող ցի, (գերիշխող ցի) 常被译为 ենթակա ցի, հյուր ցի, 或 հյուր կլիմայական ցի, հյուր ցի, հյուր կլիմայական ցի, կլիմայական, գորակշռող ցի, ենթակա ցի 来表达

Մեջբերումներ 引例

Ենթակա ցին այն է, որը միավորվում է գերակշռող ցիի հետ վեց ցիի փոփոխությունների շնորհիվ *(Պարզ զրույց, ծանոթագրությունը՝ Ուան Բինի):*

Ենթակա ցին նաև ունի ցրտի, ամառվա տապի, չորության, խոնավության, քամու և կրակի վարիացիաներ *(Տեսակետներ Շրջույթի և Ցիի մասին):*

## Ներքին օրգանների արտաքին դրսևորումներ ցանսիան 藏象

Սրանք ներքին օրգանների արտաքին դրսևորումներ են, որոնց միջոցով կարելի է դիտարկել ֆիզիոլոգիական գործառույթներն ու ախտաբանական փոփոխությունները: Վերաբերում է նաև ներքին օրգաններին, որոնք համապատասխանում են բնության մեջ գոյություն ունեցող իրերին և երևույթներին: Ցանը (藏) մարդու մարմնի ներսում թաքնված օրգաններն են, իսկ սիանը (象)՝ արտաքին ֆիզիոլոգիական և ախտաբանական նշանները, ինչպես նաև դրանց անատոմիական պատկերները և բնության մեջ համապատասխան երևույթները: Ներքին օրգանների դրսևորումները ոչ միայն բացահայտում են ներքին օրգանների և արտաքին երևույթների փոխազդեցությունները, այլև արտացոլում են «ներքին օրգաններն իրենց դրսևորումների միջոցով հայտնաբերելու» ճանաչողական մեթոդը՝ օբյեկտիվ մեթոդ ներքին օրգանների փոփոխությունները գնահատելու և արտաքին դրսևորումները դիտարկելու համար:

| | |
|---|---|
| [曾经译法] | ներքին օրգանների վիճակ, օրգանների պատկեր, Զան-օրգանի վիճակ, Զան-օրգանի արտաքին դրսևորումներ |
| [现行译法] | օրգանի դրսևորումներ, ցան-ֆու դրսևորում, ցան-ֆու դրսևորում, ներքին օրգանների դրսևորումներ |
| [标准译法] | ներքին օրգանների դրսևորումներ |
| [翻译说明] | ներքին օրգանների վիճակ, նկար 表示图像, 而դրսևորում, ներքին օրգաններ, օրգաններ, ցան-ֆու, 和 ցան-ֆու, օրգան, 译为 ցան-ֆու, ներքին օրգանների դրսևորումներ |

Մեջբերումներ 引例

Դեղին կայսրը հարցրեց. «Որո՞նք են ներքին օրգանների դրսևորումները» *(Պարզ զրույց)*:

Սիան (象) նշանակում է դրսևորում: Ներքին օրգանները թաքնված են մարմնի ներսում: Քանի որ արտաքին դրսևորումն արտացոլում է ներքին օրգանի վիճակը և կարող է դիտարկվել դրսից, այն կոչվում է ներքին դրսևորում *(Դասական գործեր)*

**Զան-ֆու օրգաններ**
**ցանֆու 脏腑**

Սա հինգ զան-օրգանների, վեց ֆու-օրգանների և արտասովոր ֆու օրգանների հավաքական անվանումն է: Զան-ֆու տեսությունը զարգացել է հնագույն շրջանի անատոմիայից, որի միջոցով ձեռք են բերվել գիտելիքներ զան-ֆու օրգանների ձևի, կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ: Այն պատկերացում է տվել զան-ֆու օրգանների ֆունկցիոնալ գործունեության օրենքների և դրանց հարաբերությունների մասին այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են միջօրեականները, մարմնի կառուցվածքը, անցումները և եղանակային փոփոխությունները՝ ըստ ին-յանի և հինգ տարրերի տեսության, այն է՝ «հայտնաբերել ներքին օրգանները իրենց դրսևորումների միջոցով»: Հետևաբար, զան-ֆու տեսությունն ամբողջական պատկերացում է տալիս չինական ավանդական բժշկության մասին: Այն իրենից ներկայացնում է ֆունկցիոնալ գործունեության ամբողջական համակարգ. շեշտը դրվում է հինգ զան-օրգանների վրա, որոնք միմյանց հետ կապվում են միջօրեականներով և զուգահեռականներով, վեց ֆու-օրգաններով, արտասովոր ֆու-օրգաններով, հյուսվածքներով և խոռչներով, ինչպես նաև համապատասխանում են սեզոնային և կլիմայական գործոններին:

[曾经译法] ցան և ֆու ներքին օրգաններ, ներքին օրգաններ, ներքին օրգաններ և աղիքներ

[现行译法] ներքին օրգաններ, աղիքներ և ներքին օրգաններ, զան և ֆու օրգաններ, զան-ֆու օրգաններ, զան-ֆու օրգաններ, զանֆու օրգաններ
[标准译法] զան-ֆու օրգաններ
[翻译说明] 译词 օրգան, ներքին օրգան, ներքին օրգաններ字面与, ներքին օրգաններ既包括, աղիք 表示, ցան-ֆու օրգաններ:

Մեջբերումներ 引例

Ինչ վերաբերում է զան-ֆու օրգաններին, հինգ զան-օրգանները յան հատկություն ունեն, վեց ֆու-օրգանները՝ ին հատկություն *(Պարզ զրույց):*

Փոխանցված էական ցին ներսից թարմացնում է զան-ֆու օրգանները, իսկ դրսից սնում է միջանկյալ շերտերը *(Հոգևոր առանցք):*

Փքվածության բոլոր տեսակները ցան-ֆու օրգաններից դուրս են: Մաշկն ուռչում է, երբ ցան-ֆու օրգանները սեղմվում են, իսկ կրծքավանդակը՝ ճնշվում *(Հոգևոր առանցք):*

**Հինգ զան-օրգաններ**
**վուցան 五脏**

Սա լյարդի, սրտի, փայծաղի, թոքի ու երիկամի հավաքական եզրույթն է: Հինգ զան-օրգանները նաև կոչվում են հինգ հոգևոր զան-օրգաններ՝ մտավոր գործունեության մեջ իրենց կառավարող ու մասնակցող դերերի շնորհիվ: Դրանք հիմնականում մասնակցում են ոչ թե սննդի մնացորդներն ու թափոնը տեղափոխելուն և հեռացնելուն, այլ ամբողջ

մարմինը սնելու նպատակով էական ցին պահուստավո-րելուն: Էական ցին պետք է լինի առատ և տեղաշարժվի առանց արգելքների, որպեսզի սննդարար նյութերը հավա-սարաչափ բաշխվեն: Հակառակ դեպքում լճացման պատ-ճառով կարող են տեղի ունենալ խանգարումներ: Դա է պատճառը, որ հինգ զան-օրգաններին բնորոշ է պահեստա-վորումը՝ առանց լիցքաթափման, և առատությունը՝ առանց ավելցուկի: Հինգ զան-օրգանները ոչ միայն սերտորեն կապ-ված են միմյանց հետ, այլև փոխկապակցված են բնության մեջ համապատասխան գործոնների և երևույթների հետ: Դրանք ներքին օրգանների դրսևորման տեսության առանցքն են:

[曾经译法] հինգ պինդ օրգան, հինգ ներքին օրգան, հինգ պարենխիմատոզ ներքին օրգան, Հինգ ներքին օրգան, հինգ Ին ոլորտ

[现行译法] հինգ ներքին օրգան, հինգ զան- ներքին օրգան, հինգ ցան-օրգան, հինգ ցան-օրգան

[标准译法] հինգ զան-օրգան

[翻译说明] 译词 պարենխիմատոզ, 译语 հինգ պինդ օրգան, 与六腑 հինգ սնամեջ օրգան, 但 պինդ, ներքին օրգան包含脏和腑, հինգ զան-ներքին օրգան,目前多译为 հինգ զան-օրգան:

Մեջբերումներ 引例

Երիկամը կառավարում է ջուրը: Այն պահպանում է էական ցին, որը ստացվում է հինգ զան-օրգաններից և վեց ֆու-օրգաններից: Միայն եթե դրանք աշխույժ ու կենսունակ լինեն, երիկամը կունենա բավականաչափ էական ցի՝ բաշխելու և արտանետելու համար *(Պարզ զրույց):*

Հինգ զան-օրգանները պահպանում են էական ցին՝

առանց դրանից ազատվելու. հետևաբար, դրանք լիքն են, բայց չեն կարող լցվել *(Պարզ զրույց):*

Հինգ զան-օրգաններն այնտեղ են, որտեղ էությունն է, ոգին, եթերային հոգին և մարմնավոր հոգին *(Հոգևոր առանցք):*

**Վեց ֆու-օրգաններ**
**լիուֆու 六腑**

Վեց ֆու-օրգաններն են՝ ստամոքս, բարակ աղիք, հաստ աղիք, լեղապարկ, միզապարկ և էներգիայի եռակի աղբյուր (սանձիաո): Դրանք նախևառաջ ներգրավված են սննդի և ջրի մարսման և փոխանցման գործընթացում: Տեղափոխում են, լիցքաթափում, բայց չեն պահուստավորում, առանձնանում են ապարգելափակելու և վայրընթաց տեղափոխելու գործառույթներով: Այս օրգանները ընդունում և մարսում են սնունդն ու ջուրը, կլանում բնանյութը, փոխանցում մնացորդները քայքայումից հետո և, ի վերջո, մարմնից հեռացնում թափոնները: Դրանք համագործակցում և աշխատում են հաջորդաբար՝ իրականացնելով համապատասխան գործառույթներ: Վեց ֆու-օրգանները նախատեսված չեն սննդով, ջրով ու թափոններով լցվելու համար: Հակառակ դեպքում խանգարումներ կլինեն: Դրանց փոխակերպման և տեղափոխման դիսֆունկցիան կարող է բարդացնել սնունդն ու ջուրը մարսելու և հետագայում դրանք բնանյութի վերածելու գործընթացը: Ավելին, դժվար կլինի մարմնից հեռացնել թափոնային նյութերն ու պղտոր ցին: Վերը թվարկած բոլոր նյութերը հանգեցնում են հինգ զան-օրգանների խանգարումների:

[曾经译法] վեց սնամեջ օրգան, վեց սնամեջ ներքին օրգան, Վեց աղիք, Վեց յան ոլորտ

[现行译法] վեց աղիք, վեց ֆու, վեց-ֆու օրգան, վեց ֆու-օրգան
[标准译法] վեց ֆու-օրգան
[翻译说明] 译文 վեց դատարկ օրգան, 与五脏 հինգ պինդ օրգան, 译词 ոլորտ, 译为 վեց ֆու օրգան:

Մեջբերումներ 引例

Լյարդը, սիրտը, փայծաղը, թոքն ու երիկամն ունեն ին հատկանիշ, իսկ լեղապարկը, ստամոքսը, հաստ աղիքը, բարակ աղիքը, միզապարկն ու էներգիայի եռակի աղբյուրը (սանձիաո)՝ յան հատկանիշ *(Պարզ զրույց):*

Վեց ֆու օրգանները պատասխանատու են մարսելու, կլանելու, տեղափոխելու և սննդի թափոնները հեռացնելու համար. հետևաբար, ենթադրվում է, որ դրանք պետք է լցվեն, բայց չեն կարող լիքը լինել *(Պարզ զրույց):*

Վեց ֆու-օրգաններն առաջին հերթին մասնակցում են սնունդ և ջուր կլանելու, ինչպես նաև մարսված նյութերը փոխարկելու և տեղափոխելու գործին *(Հոգևոր առանցք):*

**Արտասովոր ֆու-օրգաններ**
**ցի հեն ջի ֆու** 奇恒之腑

Եզրույթը վերաբերում է ֆու-օրգանների հատուկ խմբի, որոնք նման են ֆու-օրգաններին ձևաբանության մեջ և ցանօրգաններին՝ էական ցին պահուստավորելու գործառույթին: Արտասովոր ֆու-օրգաններից են ուղեղը, ոսկրածուծը, ոսկորները, անոթները, լեղապարկը և արգանդը: Դրանք արտաքին և ներքին հարաբերություններ չունեն այլ զանֆու օրգանների և տասներկու միջօրեականների հետ, բացի

լեղապարկից, որը վեց ֆու-օրգաններից մեկն է: Սակայն դրանք համապատասխան կապեր ունեն ութ լրացուցիչ միջօրեականների հետ:

[曾经译法] յուրահատուկ սնամեջ օրգան, անսովոր ներքին օրգաններ, Արտասովոր օրգաններ
[现行译法] արտասովոր օրգան, արտասովոր ֆու-ներքին օրգան, արտասովոր ֆու-օրգաններ
[标准译法] արտասովոր ֆու-օրգաններ
[翻译说明] յուրօրինակ, անսովոր, արտասովոր, 目前多采用 արտասովոր, սնամեջ օրգան, դատարկ, հինգ զան օրգան, վեց ֆու-օրգան, արտասովոր ֆու-օրգաններ:

Մեջբերումներ 引例

Ուղեղը, ոսկրածուծը, ոսկորները, անոթները, լեղապարկն ու արգանդը բոլորն էլ ստեղծվում են երկրի ցիի ազդեցությամբ: Այս վեց օրգաններն իմ նյութերը պահուստավորում են այնպես, որ հողը բավականաչափ ուժ ունենա և կրի ամեն ինչ: Դրանք պահուստավորում են բնանյութը՝ առանց արտանետելու, դրա համար էլ կոչվում են արտասովոր ֆու-օրգաններ *(Պարզ զրույց):*

Լեղապարկը սնամեջ է, ուստի պատկանում է վեց ֆու-օրգաններին: Սակայն այն նաև պահպանում է նյութական ցին՝ առանց այն լիցքաթափելու: Ուստի այն պատկանում է նաև հինգ զան-օրգաններին: Լեղապարկի միջօրեականի Ոտքի-շաոյանը կիսով չափ արտաքին և կիսով չափ ներքին միջօրեական է: Որպես արտասովոր ֆու-օրգան՝ լեղապարկը նաև կոչվում է արդարադատության պաշտոնյա *(Դասական գործեր):*

**Ֆիզիկական օրգաններ**
**սինցան 形脏**

Եզրույթը վերաբերում է ներքին օրգաններին, որոնք ունեն նյութական պարունակություն. դրանցից են՝ ստամոքս, բարակ աղիք, հաստ աղիք և միզապարկ: Այս օրգանները նաև պատկանում են վեց ֆու-օրգաններին, որովհետև մարսում, յուրացնում, ձևափոխում և տեղափոխում են սնունդն ու ջուրը, ինչպես նաև արտանետում են թափոնային նյութերը: Եզրույթն այսպես է կոչվում՝ ի հակադրություն հոգևոր օրգանների, այսինքն՝ այն օրգանների, որոնք կառավարում են մտավոր գործունեությունը:

[曾经译法] ֆիզիկական ներքին օրգաններ, էական օրգաններ, տեսանելի նյութ պարունակող օրգաններ

[现行译法] տեսանելի նյութեր պարունակող օրգաններ, նյութեր պարունակող օրգաններ

[标准译法] ֆիզիկական օրգաններ

[翻译说明] 因此 տեսանելի նյութեր պարունակող օրգաններ, նյութեր պարունակող օրգաններ, էական օրգաններ, ֆիզիկական ներքին օրգաններ, օրգան 与“神脏”(հոգևոր օրգան), 可译为 ֆիզիկական օրգաններ

Մեջբերումներ 引例

Չորս ֆիզիկական օրգանները և հինգ հոգևոր օրգանները միասին կազմում են ինը, որը համապատասխանում է 9 երկնային ցիին *(Պարզ զրույց):*

Ֆիզիկական օրգանները պահուստավորում են շոշափելի նյութեր… Շոշափելի նյութեր պարունակող օրգաններից են ստամոքսը, բարակ աղիքը, հաստ աղիքն ու միզապարկը

*(Պարզ գրույցի ծանոթագրությունների ժողովածու «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

**Հոգևոր օրգաններ**
**շենցան 神脏**

Եզրույթը վերաբերում է հինգ զան-օրգաններին, որոնք են՝ լյարդ, սիրտ, փայծաղ, թոք և երիկամ. դրանք կառավարում են մտավոր և հոգևոր գործունեությունը և մասնակցում են դրան: Ըստ ավանդական չինական բժշկության՝ մտավոր գործունեությունը կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ ոգի, եթերային հոգի, մարմնավոր ոգի, միտք, կամքի ուժ. բոլորն էլ պատկանում են համապատասխան հինգ զան-օրգաններին: Այլ կերպ ասած, սիրտը, թոքը, լյարդը, փայծաղն ու երիկամն իրենց մեջ տեղավորում են համապատասխանաբար ոգին, եթերային հոգին, մարմնավոր հոգին, գաղափարախոսությունն ու կամքի ուժը: Հինգ զան օրգանների բավականաչափ էական ցիին բնորոշ են արագությունը, սրամտությունը, արագ արձագանքը, լավ հիշողությունն ու առողջ քունը: Մյուս կողմից, դրա ոչ բավարար քանակն ասոցացվում է դանդաղ արձագանքի, վատ հիշողության, անքնության և առատ երազների հետ: Հինգ զան օրգանները նաև կոչվում են հինգ հոգևոր զան օրգաններ՝ մտավոր և հոգևոր գործունեության հետ իրենց սերտ կապերի շնորհիվ:

[曾经译法] հինգ զան-օրգաններ, հինգ *զան*-օրգաններ
[现行译法] հոգևոր ներքին օրգաններ,
հոգևոր օրգաններ
[标准译法] հոգևոր օրգաններ
[翻译说明] 一种译法是 հինգ զան-օրգաններ,
հոգևոր օրգաններ 更为传神,
ֆիզիկական օրգաններ 呼应:

Մեջբերումներ 引例

Հոգևոր օրգաններ ասելով նկատի ունենք լյարդը, սիրտը, փայծաղը, թոքն ու երիկամը, որոնք իրենց մեջ տեղավորում են անշոշափելի ցին *(Պարզ զրույցի ուղիղ մեկնաբանություն «Դեղին կայսեր ներքին բժշկության կանոնում»):*

Հոգևոր օրգանները պարունակում են հինգ զան-օրգանները *(Պարզ զրույցի ծանոթագրությունների ժողովածու «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

**Սիրտ**
**սին 心**

Որպես հինգ զան-օրգաններից մեկը՝ սիրտն ընկած է ստոծանու հետևում և շրջապատված է սրտապարկով: Առաջին հերթին այն մասնակցում է արյան և անոթների կառավարմանը, ինչպես նաև միտքը տեղավորելուն: Քանի որ դրա երկու գործոնները կարևոր դեր են խաղում ամբողջ կենսագործունեության մեջ, սիրտը համարվում է «բոլոր օրգանների միապետ», «կյանքի հիմք» և «հինգ զան-օրգանների և վեց ֆու-օրգանների մեծ կառավարիչ»: Հինգ տարրերի տեսանկյունից այն վերաբերում է կրակին և կապված է ամռան ցիի հետ. հետևաբար այն «յանն է ինի հետ»: Այն բացվում է լեզվի վրա, նրա վիճակը դրսևորվում է դեմքի փայլի մեջ և ասոցացվում է հեղուկների տեսանկյունից քրտինքի, իսկ զգացմունքների տեսանկյունից՝ ուրախության հետ: Այն կապում է Ձեռքի-շաոյինի Սրտի միջօրեականը, որը ներքին-արտաքին հարաբերության մեջ է Ձեռքի- թայյանի բարակ աղիքի միջօրեականի հետ:

[曾经译法] սիրտ, Սիրտ, առանցք, Սին
[现行译法] սիրտ, Սիրտ, սիրտ

[标准译法] սիրտ
[翻译说明] 即 Սիրտ, սիրտ, 译为 սիրտ

Մեջբերումներ 引例

Սիրտը համարվում է «միապետ» օրգան, սրտում է տեղավորված միտքը *(Պարզ զրույց):*

Սիրտը կյանքի հիմքն է, մտքի տունը: Նրա վիճակը դրսևորվում է դեմքի փայլի մեջ, այն սնում է արյունատար անոթները: Պատկանում է թայյանին (ավելի մեծ յան) և կապված է ամռան ցիի հետ *(Պարզ զրույց):*

Սիրտը հինգ զան-օրգանների և վեց ֆու-օրգանների միապետն է, նրա մեջ է հոգին *(Հոգևոր առանցք):*

**Սրտի ցի**
**սինցի 心气**

Սրտի ցին սրտի ֆունկցիոնալ գործունեության էական հիմքն ու առաջ մղող ուժն է: Այն հիմնական ցին է, որը ստացվում է ամբողջ մարմնից և հասնում սրտին, որը ստիպում է, որ սիրտը բաբախի, նպաստում է արյան շրջանառությանն ու բարձրացնում տրամադրությունը: Սրտի առատ ցին ապահովում է սրտի ուժգին բաբախյուն, արյան կանոնավոր շրջանառություն, բարձր տրամադրություն և դյուրըմբռնում: Սրտի ցին կապված է լեզվի հետ. եթե սրտի ցին նորմալ է, մարդը կարող է տարբերակել հինգ համերը:

[曾经译法] սիրտ-էներգիա, սրտի ցի, սրտի Ցի (ֆունկցիոնալ գործունեություն)
[现行译法] սրտի ցի, սրտի ցի, սրտի-ցի
[现行译法] սրտի ցի

[翻译说明] սրտային 是西医术语, սրտի Ցի (ֆունկցիոնալ գործունեություն), (սիրտ-ցի), 可译为 սրտի ցի:

Մեջբերումներ 引例

Սիրտը կառավարում է արյան անոթները, իսկ արյան անոթներում տեղավորված է ոգին: Սրտի ցիի պակասը կհանգեցնի տխրության, իսկ սրտի ցիի ավելցուկը՝ անդադար ծիծաղի *(Հոգևոր առանցք):*

Սրտի ցին կապված է լեզվի հետ: Եթե սրտի ցին նորմալ է, մարդը կարող է տարբերակել հինգ համերը *(Հոգևոր առանցք):*

Սրտի ցին սկսում է նվազել, երբ մարդը հատում է վաթսունի շեմը: Արդյունքում սկսում է անհանգստանալ, տխրել, հակված է ավելի հաճախ պառկել ցիի ու արյան նվազման պատճառով *(Հոգևոր առանցք):*

**Սրտի արյուն**
**սինսյուե 心血**

Սրտի արյունը, այսինքն՝ այն արյունը, որը կառավարում է սիրտը, սրտի ֆիզիոլոգիական, ինչպես նաև մտավոր գործունեության նյութական հիմքն է: Շարժվելով սրտի ցիի օգնությամբ՝ այն շրջանառվում է անոթներում, սնում ու խոնավեցնում ամբողջ մարմինը: Քանի որ սրտի արյունը սնում է սիրտը, այն կենսական կարևոր դեր է խաղում սրտում, կառավարում արյունն ու անոթները, ինչպես նաև տեղավորում միտքը: Չնայած սրտի արյան սահուն հոսքը կախված է մղվող սրտի ցիից, արյան կանոնավոր շրջանառության նախապայմանը սրտի առատ արյունն է: Այն նշանակալի հիմք

է մտավոր գործունեության համար: Քանի որ մտավոր գործունեությունը սպառում է սրտային արյունը, մարդու համար դժվար է խոր և արագ մտածել, երբ սրտի արյունն անբավարար է:

[曾经译法] սրտի արյուն, Սիրտ-արյուն, սրտային արյուն
[现行译法] սրտի արյուն, սիրտ-արյուն
[标准译法] սրտի արյուն
[翻译说明] 均为 սրտի արյուն

Մեջբերումներ 引例

Ուժեղ սրտխփոցը պայմանավորված է սրտի արյան անբավարարությամբ *(Յանի՝ ողջերին օգնելու խորհուրդներ):*

Եթե սրտի արյունը պակասի, դա կհանգեցնի ներքին յան-կրակի հիպերակտիվության, ինչն էլ կհանգեցնի տագնապային մտքերի, անհանգստության և, ի վերջո, անքնության *(Ախտանիշներ, պատճառներ, սրտխփոց և բուժում):*

**Սրտի յան**
**սինյան 心阳**

Սրտի յան ասելով նկատի ունենք սրտի յան ցին: Ի տարբերություն սրտի յանի՝ այն ակտիվ է, խթանում է ու ջերմացնում: Սրտի յանը նախևառաջ ջերմացնում ու սնուցում է. այն նաև խթանում է սրտի ֆիզիոլոգիական գործունեությունը ու սահմանափակում սրտի ինը, որպեսզի կանխի ներքին սառնության ավելցուկը: Այն ապահովում է մարդու մարմնի բնականոն գործունեությունը: Ֆիզիոլոգիական գործառույթների տեսանկյունից, սիրտը կառավարում է արյունն ու անոթները և բարձր պահում տրամադրությունը. երկու

դեպքում էլ սրտի յանը կարևոր կենսական դեր է կատարում: Մյուս կողմից, սրտի յանն ու սրտի ցին նպաստում են արյան բնականոն շրջանառությանը: Մյուս կողմից, սրտի յանը ջերմացնում ու սնուցում է՝ ապահովելով արյան սահուն շրջանառություն: Մտավոր գործունեության տեսանկյունից, հոգին պահանջում է սրտի արյան և սրտի ինի սնուցում: Ավելին, սրտի յանի տաքացումն ու խթանումը թույլ է տալիս բարձրացնել տրամադրությունը, ձեռք բերել կենսական ուժեր և լավ ինքնազգացողություն:

[曾经译法] սրտային յան, սիրտ-յան, սրտի Յանը (կենսական գործառույթ), հատկապես սիրտ-անոթային համակարգի գործառույթն առհասարակ
[现行译法] սիրտ-յան, սրտի յան
[标准译法] սրտի յան
[翻译说明] 曾被译为 սրտային յան, սրտային 是西医术语, սրտի (կենսական գործառույթի) Յանը, հատկապես սիրտ-անոթային համակարգի գործառույթն առհասարակ, 译为 սրտի յան

Մեջբերումներ 引例

Ցրտահարության բուժման ռազմավարությունը կապված է սրտի յանը թարմացնելու մեջ, մինչդեռ ջերմային հիվանդությունների բուժման ռազմավարությունը կապված է երիկամի ինը սնուցելու հետ: Հրաշք է պատճառները փնտրելու միջոցով բուժել հիվանդության արմատը *(Պահանջված ընթերցումներ բժիշկ նախնիներից):*

Սրտի արյան ծայրահեղ քիչ քանակը կհանգեցնի սրտի յանի հիպերակտիվության, որին բնորոշ է չոր բոսորագույն լեզուն, անհանգստությունն ու անքնությունը: Չիանեյ

Յանսին Թանը կարելի է նշանակել՝ վերը նշված ախտանիշները թեթևացնելու համար *(Բժշկական բաղադրատոմսերը հիշվում են):*

**Սրտի ին**
**սինյին 心阴**

Սրտի ինը վերաբերում է սրտի ին նյութին: Ի տարբերություն սրտի յանի՝ այն զսպող է, լուռ, սահմանափակող, սնուցող ու խոնավեցնող: Սրտի ինը սրտի ֆիզիոլոգիական գործառույթներին նպաստող հիմնական նյութերից մեկն է: Այն առաջին հերթին մասնակցում է սիրտը սնուցելուն և սրտի յանը զսպելուն՝ կանխելով սրտի կրակի հիպերակտիվությունը, որպեսզի հնարավոր լինի սրտի յանը հետ պահել չափազանց շատ վերահսկողությունից ու պահպանել սրտի բնականոն բաբախյունը, ինչպես նաև մտքի խաղաղությունը: Թե՛ սրտի ինը, թե՛ սրտի արյունը ին հատկանիշ ունեն, բայց տարբերվում են գործառույթներով: Եթե սրտի արյունը սնուցում է սիրտը, սրտի ինը հանդարտեցնում է միտքն ու սահմանափակում սրտի յանը:

| | |
|---|---|
| [曾经译法] | սրտի ին, Սիրտ-ին, սրտի ին, սրտի Ին (կենսական նյութ), հատկապես սրտի հեղուկը |
| [现行译法] | սիրտ-ին, սրտի ին |
| [标准译法] | սրտի ին |
| [翻译说明] | սրտի ին, սրտային 是西医术语, սրտի Ին (կենսական նյութ), հատկապես սրտի հեղուկը, (սիրտ-ին), 可译为 սրտի ին: |

Մեջբերումներ 引例

Սրտի ինի անբավարարությանը բնորոշ է արագացած բաբախյունը միայն սրտի շրջանում, բերանի չորությունը,

քրտնարտադրությունը, գրգռվածությունը, դեպի վեր արյան հոսքը և միայն սրտի յանի հիպերակտիվությունը: «Սիձիաո Դիհուան Թան» կարելի է նշանակել վերը նշված ախտանիշները թեթևացնելու համար *(Չորս բժիշկների հիվանդության պապմություն, ընտրությունը՝ Լիու Բոչի):*

Դենդրոբիումը (*Caulis* Dendrobii) սնուցում է ստամոքսի ինը, ծովափնյա գլենիայի արմատը (Radix Glehniae)՝ թոքի ինը, իսկ գաճաճ շուշանի պալարը (Radix Ophiopogonis)՝ սրտի յանը *(Ծանոթություն ջերմային հիվանդությունների աղբյուրների հետ):*

## Սիրտը կառավարում է միտքը սին ջու շենմին 心主神明

Այս եզրույթը նաև անվանում են «բանականությունը սրտում է», ինչը նշանակում է, որ սիրտը կառավարում է մարդու մարմնի ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ հոգեբանական գործունեությունը: Այստեղ «միտքը» (շեն մին, 神明) բարձրագույն նյարդային գործունեությունն է, որը կառավարում է սիրտը. խոսքը հոգու, գիտակցության և մտածողության մասին է: «Սիրտը կառավարում է միտքը» արտահայտությունն ունի երկու իմաստային մակարդակ. 1) սիրտը համակարգում է մարդու մարմնի բոլոր օրգանների ու հյուսվածքների ֆիզիոլոգիական գործառույթները և 2) սիրտը գերիշխում է ճանաչողության, զգացմունքների և կամային գործունեության նկատմամբ: Հետևաբար, հոգու, գիտակցության, մտածողության, քնի ու զգացմունքների վիճակներն ամբողջությամբ կապված են սրտի՝ խելքը պահուստավորելու գործառույթի հետ: Եթե սիրտն իր բնականոն ֆիզիոլոգիական վիճակում է, այսպիսի դրսևորումները կարելի է դիտարկել որպես լիարժեք կենսական ուժ, սթափ գիտակցություն, արագ արձագանք, շարժունակ միտք և առողջ քուն:

[曾经译法] Սիրտը վերահսկում է մտավոր և զգացմունքային գործունեությունը, սիրտը կառավարում է միտքը, սիրտը գերիշխում է մտավոր գործունեությունը, սիրտը պատասխանատու է մտավոր գործունեության, այդ թվում գիտակցության և մտածողության համար, և սրտի դիսֆունկցիան հանգեցնում է անքնության, ամնեզիայի, գիտակցության խնդիրների, պսիխոզի և այլն:

[现行译法] Սիրտը կառավարում է հոգու լույսը: Սիրտը կառավարում է մտավոր գործունեությունը: Սիրտը պատասխանատու է մտավոր գործունեության համար: Սիրտը վերահսկում է միտքը: Սիրտը վերահսկում է մտավոր գործունեությունը:

[标准译法] Սիրտը կառավարում է միտքը:

[翻译说明] 译为 հոգու լույս, 与 իմացություն, 和 մտածողություն, 译为մտավոր և զգացմունքային գործունեություն, 译为 մտավոր գործողություններ, 或 մտավոր գործունեություն, կառավարել, վերահսկել, պատասխանատվություն կրել, կառավարել 更传神。

Մեջբերումներ 引例

Սիրտը կառավարում է միտքը. հետևաբար, եթե սիրտը կատարի իր գործառույթը, այլ օրգաններ նույնպես բնականոն կկատարեն իրենց գործառույթը *(Պարզ զրույցի ուղղակի մեկնաբանությունը «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

Լյարդը կառավարում է ցիի հոսքը: Սիրտը կառավարում է միտքը: Թոքը կառավարում է ցի շնչառությունը: Երիկամը կառավարում է ցիի ընդունումը *(Պարահական նոթեր բժշկության մասին ընթերցումներում):*

**Սիրտը կառավարում է արյունն ու անոթները սին ջու սյունեմայ 心主血脉**

Եզրույթը վերաբերում է սրտի ցիի գործառույթին, այն է՝ անոթներում արյան մշտական շրջանառությանը նպաստելն ու կարգավորելը, ինչպես նաև ամբողջ մարմնին սնուցող նյութեր ու սնունդ հասցնելը: Այն դրսևորվում է երկու տեսանկյունից: 1) Սիրտը կառավարում է արյունը: Սրտի ցին ստիպում է, որ արյունը շրջանառվի անոթներում՝ սննդարար նյութեր հասցնելով զան-ֆու օրգաններին, մարմնի հյուսվածքներին ու ճեղքերին: Այն նաև վերաբերում է սրտի արյունաստեղծ գործառույթին: Ստամոքսի ու փայծաղի կլանած սնունդն ու ջուրը վերածվում է նյութի, ապա սննդարար ցիի ու հեղուկների, որից էլ սրտի յանի գործողությունների շնորհիվ արյուն է ստեղծվում. 2) Սիրտը կառավարում է անոթները: Սրտի ցին խթանում ու կարգավորում է սրտխփոցը, ինչպես նաև անոթների նեղացումն ու լայնացումը՝ արյան սահուն հոսքն ապահովելու համար:

[曾经译法] սրտի կողմից արյան վերահսկողություն. Սիրտը վերահսկում է արյան շրջանառությունը: Սիրտը վերահսկում է արյան շրջանառությունը:

[现行译法] Սիրտը կառավարում է արյունն ու անոթները: Սիրտը կառավարում է արյան շրջանառությունը. սիրտը՝ արյան շրջանառության վերահսկող, սիրտը՝ արյան ու անոթների կառավարիչ

[标准译法] Սիրտը կառավարում է արյունն ու անոթները:

[翻译说明] 译为 Սիրտը վերահսկում է արյունը, 或արյան շրջանառություն, 应译为 արյուն և անոթներ, վերահսկողություն, կառավարում, հսկողություն, վերահսկել 之意, կառավարել 更好, (Սիրտը կառավարում է միտքը):

Մեջբերումներ 引例

Սիրտը կառավարում է արյունն ու անոթները *(Պարզ զրույց):*

Սիրտը, որը կառավարում է արյունն ու անոթները, հինգ զան-օրգանների միապետն է *(Քննախուզություն պարբեր հիվանդությունների պատճառների և դրսևորումների վերաբերյալ):*

Սիրտը կառավարում է արյունն ու անոթները: Բուռն կրակը կհանգեցնի արյան սպառման *(Դասական գործեր):*

**Սրտապարկ**
**սինբաոլուո 心包络**

Սրտապարկը, որը նաև կոչվում է «Սինբաո» (սին բաո, 心包) կամ «Դանջուն» (դան ջուն, 膻中) սիրտը շրջապատող արտաքին հյուսվածքն է, որը պաշտպանում է սիրտը: Միջօրեականի տեսության համաձայն՝ Հանդձյուեյինի սրտամկանի միջօրեականն ու Ջեռք-սանձիաոյի էներգիայի եռակի աղբյուրի միջօրեականը ներքին և արտաքին հարաբերության մեջ են միմյանց հետ, հետևաբար սրտամկանը պատկանում է զան-օրգաններին: Սիրտը բոլոր օրգանների միապետն է և չպիտի ենթարկվի արտածին ախտածին գործոնների հարձակմանը. հետևաբար, երբ արտածին ախտածին գործոնները հարձակվում են սրտի վրա, սրտապարկը միշտ առաջինն է ենթարկվում հարձակման: Այն կարևոր դեր է խաղում սիրտը պաշտպանելու գործում:

[曾经译法] սրտի ծրար (սրտապարկ), պերիկարդիում
[现行译法] սրտապարկի ցանց/անոթ, պերիկարդիում, սրտապարկ
[标准译法] սրտապարկ

[翻译说明] սրտի ծրարը, ծրար, ծրար 似乎太生活化, պերիկարդիկ ցանց/անոթ, սրտապարկ, 但与 ցանց, 和 անոթ, 译为 սրտապարկ:

Մեջբերումներ 引例

Ձեռքի-ճյուեյինի սրտապարկի միջօրեականը սկսվում է կրծքավանդակից ու մտնում սրտապարկ: Հետո իջնում է ստոծանիով, կապվում էներգիայի եռակի աղբյուրի հետ (սանճիաո), որը տեղակայված է կրծքավանդակում և որովայնում *(Հոգևոր առանցք):*

Բոլոր ախտածին գործոնները, որոնք ներխուժում են սիրտ, ի վերջո, հարձակվում են սրտապարկի վրա *(Հոգևոր առանցք):*

Սրտապարկը սրտի սպասավորն է, ուստի պարտավոր է փոխարինել սրտի գործառույթը *(Դեղին կայսեր բժշկության արփաքին կանոնը):*

**Սրտի ու երիկամի համակարգումը**
**սին շեն սիանճիաո 心肾相交**

Եզրույթը, որը հայտնի է նաև կրակի և ջրի համակարգում անունով, նշանակում է, որ սիրտն ու երիկամը ներդաշնակ են կամ հավասարակշռված: Սրտի յանն իջնում է երիկամի մոտ, սնուցում երիկամի յանը և թույլ չի տալիս, որ երիկամաջուրը սառչի: Երիկամի ինը բարձրանում է սիրտ, սնում է սրտի ինն ու սրտի յանը զերծ է պահում հիպերակտիվությունից: Այս ձևով սիրտն ու երիկամը, կրակն ու ջուրը, յանն ու ինը, վերինն ու ստորինը կապվում են իրար և աջակցում միմյանց՝ ներդաշնակության և հավասարակշռության համար: Երիկամաջուրը չափազանց սառը կլինի, եթե չջերմա-

նա սրտի կրակից, իսկ սրտի կրակը չափազանց տաք ու չոր կլինի, եթե երիկամի ինը չսնուցի ու չխոնավեցնի այն: Միայն երբ սիրտն ու երիկամը, յանն ու ինը, վերինն ու ստորինը կապվեն ու աջակցեն իրար, այսինքն՝ երբ ջուրն ու կրակը փոխադարձաբար աջակցեն միմյանց, սրտի ու երիկամի գործառույթները կհամակարգվեն և կհավասարակշռվեն:

[曾经译法] սրտի ու երիկամի՝ փոխօգնության և փոխզսպման հարաբերություն, սրտի ու երիկամի գործառույթները հավասարակշռված են, սրտի ու երիկամի ներդաշնակություն

[现行译法] սրտի և երիկամի ներդաշնակություն, սրտի ու երիկամի համակարգում սիրտ-երիկամ փոխազդեցություն, սրտի և երիկամի հավասարակշռված գործառույթ, սիրտ-երիկամ փոխազդեցություն, սիրտն ու երիկամը փոխազդում են, համակարգում սրտի ու երիկամի միջև

[标准译法] սրտի և երիկամի համակարգում

[翻译说明] 翻译成 ներդաշնակություն,
和 հավասարակշռված գործառույթ,
为 փոխազդեցություն, 译为 համակարգում

Մեջբերումներ 引例

Սրտի ու երիկամի կամ կրակի ու ջրի համակարգման դեպքում ինչպե՞ս կարելի է հիվանդանալ *(Բանաչների Ռենջայի ուղեցույցը):*

Սրտի և երիկամի կամ կրակի ու ջրի համակարգումն ընդհանուր օրենք է *(Պարզամներ բժիշկների համար):*

Հետևաբար, եթե սիրտն ու երիկամը համակարգվեն,

կրակի ու ջրի միջև հավասարակշռություն կլինի. եթե սրտի և երիկամի կապը խզվի, ու դրանք այլևս չհամակարգվեն, կրակն ու ջուրը չեն կարողանա ներդաշնակություն պահպանել *(Դեղին կայսեր բժշկության արփաքին կանոնը):*

**Թոք**

**ֆեյ 肺**

Թոքը՝ հինգ զան-օրգաններից մեկը, տեղակայված է կրծքավանդակում: Մի թոքը ձախ կողմում է, մյուսը՝ աջ կողմում: Քանի որ թոքերը մարմնում ավելի վեր են, քան ցանկացած այլ զան-ֆու օրգան, այն ծածկում է բոլորին: Թոքի նուրբ բույթը խոցելի է ախտածին գործոնների նկատմամբ, ինչպիսիք են ցուրտը, ջերմությունը, չորությունն ու խոնավությունը: Քթի, մաշկի ու մարմնի մազերի միջոցով թոքը սերտորեն կապված է բնության հետ և ընկալունակ է ախտածին գործոնների նկատմամբ: Ընդհանուր առմամբ թոքը կառավարում է ցրումը, զտումն ու վայրընթաց շարժումը: Ավելի կոնկրետ, այն կառավարում է ցին ու շնչառությունը, կարգավորում է ջրի անցումը. երբ բոլոր միջօրեականներն ու անոթները հատվում են թոքում, այն օգնում է, որ սիրտն ապահովի արյան շրջանառությունը: Հինգ տարրերի տեսանկյունից թոքը վերաբերում է հողին: Այն ին և յան է, իսկ բնության մեջ կապված է աշնան ցիի, ինչպես նաև մաշկի ու քթի հետ: Թոքի վիճակը դրսևորվում է մարմնի մազերի փայլի մեջ: Թոքը կապված է քթի լորձի ու տխրության հետ, թոքում է ապրում մարմնավոր հոգին: Ձեռքի-թայինի թոքի միջօրեականը ներքին և արտաքին հարաբերության մեջ է Ձեռքյանմինի հաստ աղիքի միջօրեականի հետ:

[曾经译法] թոք, թոքային ոլորտ, թոք, թոքեր, Ֆեյ
[现行译法] թոք, պուլմո, թոք
[标准译法] թոք

[翻译说明] 以 թոք, 为主。թոքեր, թոքային ոլորտ, պուլմո, 为 թոք:

Մեջբերումներ 引例

Թոքը որպես օրգան նման է վարչապետի. այն կառավարում է ամբողջ մարմնի ցին: Մարդու մարմնի դեպի վեր, վար, ներս և դուրս գործունեությունը կառավարվում ու կարգավորվում է թոքի միջոցով *(Պարզ զրույց)*:

Թոքը ցիի արմատն է ու մարմնավոր հոգու տունը: Թոքի վիճակը դրսևորվում է մարմնի մազերի փայլի մեջ: Այն սնուցում է մաշկը: Թոքը պատկանում է թայինին (ավելի մեծ ին)՝ առանց յանի, իսկ բնության մեջ կապված է աշնան ցիի հետ *(Պարզ զրույց)*:

Երբ ջուրը հասնում է ստամոքս, առաջանում է նյութական ցին ու տեղափոխվում է փայծաղ: Փայծաղը բաշխում է բնանյութը ու այն բարձրացնում վերև՝ թոք: Թոքը կարգավորում է ջրի անցումն ու ջուրը տեղափոխում ներքև՝ միզապարկ *(Պարզ զրույց)*:

**Թոքի ցի**
**ֆեյցի 肺气**

Թոքի ցին՝ թոքի նյութական ցին, թոքի ֆիզիոլոգիական գործունեության նյութական հիմքն է ու առաջ մղող ուժը: Թոքի ցին ամբողջ մարմնի ցին ու էությունն է, որը մատակարարվում է թոքին՝ հատուկ գործառույթներ կատարելու համար: Այն ունի նախածննդյան աղբյուր և հետծննդյան աղբյուր: Նախածննդյան շրջանում թոքի ցին արմատավորվում է երիկամի նախնական ցիում, որը էներգիայի եռակի աղբյուրի (սանճիաո) միջոցով տեղափոխվում է վերև՝ թոք, և դառնում է թոքի ցիի մաս: Հետծննդյան շրջանում թոքի ցին

դուրս է գալիս կրծքային ցիից, որը ստացվել է կլանված սննդի ու խմիչքի սննդարար նյութերից և ներշնչած թարմ օդից: Ցրելու, զտելու և վայրընթաց շարժում ապահովելու գործառույթների միջոցով թոքի ցին կառավարում է շնչառությունը, կարգավորում մարմնի հեղուկների նյութափոխանակությունն ու օգնում սրտին արյան շրջանառությունը կատարել:

| | |
|---|---|
| [曾经译法] | թոքային ցի, թոքի Ցի (ֆունկցիոնալ գործունեություն), թոք-էներգիա, թոքային ցի, Թոք-Ցի |
| [现行译法] | թոքային ցի, թոք-ցի, թոքի ցի |
| [标准译法] | թոքի ցի |
| [翻译说明] | 翻译成 թոքային, 或者 թոք: |

Մեջբերումներ 引例

Թոքի ցին կապված է քթի հետ, և միայն երբ այն ներդաշնակ է, քիթը կարող է հոտը տարբերել բույրից *(Հոգևոր առանցք):*

80 տարեկանում մարդու թոքի ցին կնվազի, իսկ մարմնավոր հոգին կլքի մարմինը: Հետևաբար, մարդը հաճախ խոսելիս սխալներ թույլ կտա *(Հոգևոր առանցք):*

Եթե թոքի ցին կենսունակ է, թոք մտնող ախտածին քամին չի բարձրանա վեր ու չի հասնի ուղեղին, և գլխացավ չի լինի *(Դեղին կայսեր բժշկության արփաքին կանոնը):*

**Թոքի ին**
**ֆեյյին 肺阴**

Թոքի ինը՝ թոքի ին հեղուկը, ի տարբերություն թոքի յանի, կատարում է ներսում բնանյութն արգելակելու, սնուցելու,

խոնավեցնելու, հանդարտեցնելու և պահուստավորելու գործառույթներ: Դրա ֆիզիոլոգիական գործառույթները եռաշերտ են: Նախ, այն սնում է թոքն ու ճնշում թոքի յանը, որպեսզի այն կարողանա հավուր պատշաճի կատարել իր գործառույթները: Երկրորդ, այն օգնում է, որ թոքի ցին մաքրվի ու իջնի, ինչպես նաև կարգավորում է ցի շարժումը՝ երաշխավորելով թոքի զտումն ու պատշաճ գործառույթները: Երրորդ, կապված լինելով երիկամի ինի հետ, թոքի ինն օգնում է, որ երիկամը ցի ստանա թոքից և բնահյութը հասցնում է երիկամին, որպեսզի լրացնի երիկամի ինը: Քանի որ թոքը կառավարում է շնչառությունը, ներշնչվող թարմ օդն ուղարկվում է ներքև՝ երիկամին, և վերջապես տեղավորվում երիկամում:

| | |
|---|---|
| [曾经译法] | թոքի ինը կենսական նյութ է, թոք-*ին*, թոք-ին, թոքային ին, թոքի ին |
| [现行译法] | թոքային ին, թոք-ին, թոքի ին |
| [标准译法] | թոքի ին |
| [翻译说明] | 译词 ին, կենսական նյութ, ին, թոքային, 在 թոք, 和ին, թոքի ին |

Մեջբերումներ 引例

Հևոցն ու ընդհատ-ընդհատ շնչառությունը ցիի անբավարարության, իսկ լողացող սրտխփոցը՝ թոքի ինի անբավարարության ախտանիշներ են *(Դասական գործեր)*:

Այս բոլոր ախտանիշները թոքի ինի սպառման ու ցրման և թոքի ցիի անբավարարության հետևանքներ են *(Բժշկության մեջ հիշվող շփկումներ)*:

**Թոքի յան**
**ֆեյյան 肺阳**

Թոքի յանը՝ թոքի յան ցին, ի տարբերություն թոքի ինի,

կատարում է տաքացնելու, խթանելու և հուզելու գործառույթներ: Թոքի յանի ֆիզիոլոգիական գործառույթները եռաշերտ են: Նախ, այն տաքացնում ու ձևափոխում է թոքի ինն ու մարմնի հեղուկները՝ դրանք վերածելով ցիի: Երկրորդ, այն ցրում ու բաշխում է մարմնի հեղուկներն ու պաշտպանիչ ցին տանում վերև՝ հասնելով գլխին ու դեմքին և դուրս՝ հասնելով մարմնի մակերես: Երրորդ, այն ջերմացնում ու պաշտպանում է մարմինը, այսինքն՝ ներսից տաքացնում ու սնուցում է սիրտը, թոքը, կրծքավանդակն ու ստոծանին, ինչպես նաև ջերմացնում ու սնուցում է քիթը, մաշկն ու մարմնի մազերը՝ դրսից դրանք պաշտպանելով ախտածին գործառույթների ներխուժումից:

[曾经译法] թոքի յան, Թոք-Յան, թոքային յան, թոքի յան
[现行译法] թոքային յան, թոք-յան, թոքի յան
[标准译法] թոքի յան
[翻译说明] 翻译成 թոքային, 在 թոք, 和 յան, թոքի յան:

Մեջբերումներ 引例

Քանի որ թոքերը տանել չեն կարողանում ցուրտը, սրտի բաբախյունը խելահեղ ու արագացած է, երբ թոքը ենթարկվում է սրտի ախտածին գործոնների հարձակմանը, իսկ թոքի յանը պայքարում է դրա դեմ *(«Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնի պարզությունը»):*

Թոքի յանի անբավարարության ախտանիշների դեպքում, ինչպիսիք են չափավոր, խոնավ ու թույլ սրտխփոցը, ցանկալի է օգտագործել «Չորս ազնվական մարդ» բույսի թուրմ և ցին ամրապնդող ու թարմացնող թուրմ *(Ախտանիշներ, պատճառներ, սրտխփոց և բուժում):*

**Թոքը կառավարում է ցին**
**ֆեյ ջու ցի 肺主气**

Եզրույթը նշանակում է, որ թոքերը կառավարում են շնչառական ցին և ամբողջ մարմնի ցին: «Թոքերը կառավարում են շնչառական ցին» արտահայտությունը նշանակում է, որ թոքը մարմնի շնչառական օրգան է և կառավարում է շնչառությունը, որը ցրելու, զտելու և շնչելու թոքային գործառույթների դրսևորումն է: Ցրելու գործառույթի շնորհիվ պղտոր ցին արտաշնչվում է, ինչը հնարավոր է դարձնում թարմ օդի ներշնչումը: Զտելու գործառույթի շնորհիվ թոքը կարող է բնության մեջ խորությամբ ներշնչել թարմ օդը: «Թոքը կառավարող ցի» արտահայտությունը նշանակում է, որ թոքը կառավարում ու կարգավորում է ամբողջ մարմնում ցիի առաջացումն ու շարժումը: Եթե թոքի ցրման, զտման ու իջեցման գործառույթները ներդաշնակ են, շնչառությունը կանոնավոր, ռիթմիկ ու ներդաշնակ է:

| | |
|---|---|
| [曾经译法] | Թոքը պատասխանատու է կենսական էներգիայի համար և կատարում է շնչառական գործառույթ: |
| [现行译法] | շնչառությունը վերահսկող թոք<br>Թոքը կառավարում է ցին:<br>Թոքերը կառավարում են ցին: |
| [标准译法] | Թոքը կառավարում է ցին: |
| [翻译说明] | վերահսկողություն, 和 կառավարում, վերահսկողություն, 有控制, կառավարում 除了控制 |

Մեջբերումներ 引例

Թոքը կառավարում է ցին, իսկ ցին շարժվում է միջօրեականներով ու զուգահեռականներով և սնուցում ցան-ֆու օրգանները *(Քննախուզություն պարբեր հիվանդությունների ծագման ու դրսևորումների մասին):*

Փայծաղի անբավարարությունը հանգեցնում է թոքի՝ սննդից ու խմիչքից ստացվող սննդարար նյութերի թերսնուցման: Թոքը կառավարում է ցին, այն էլ իր հերթին հանգեցնում է թույլ շնչառության *(Պարզ զրույց, ծանոթագրությունը՝ Ուան Բինի):*

**Թոքը կառավարում է ցրումը**
**ֆեյ ջու սյուանֆա 肺主宣发**

Ի տարբերություն մաքրման ու իջեցման գործառույթի՝ «թոքը կառավարում է ցրումը» նշանակում է, որ թոքը կառավարում է դեպի վեր ու դուրս ցրումը և ցիի բաշխումը, այսինքն՝ թոքն արտաշնչում է պղտոր ցին, ցրում պաշտպանիչ ցին և բաշխում մարմնի հեղուկը, ցին ու արյունը: Թոքի այս ֆիզիոլոգիական գործառույթը դրսևորվում է չորս կողմով: Նախևառաջ, թոքի ցիի ցրման հաշվին պղտոր ցին մարմնից արտաշնչվում է, ինչը հնարավոր է դարձնում թարմ օդի ներշնչումը: Երկրորդ, թոքի ցիի դեպի վեր և դեպի դուրս ցրման միջոցով թե՛ մարմնի հեղուկները, թե՛ սննդից ու խմիչքից ստացված սննդարար նյութերը, որոնք փայծաղի կողմից տեղափոխվել են թոքեր, բաշխվում են ամբողջ մարմնում, սնուցում ու խոնավեցնում հինգ զան-օրգաններն ու վեց ֆու-օրգանները, չորս վերջույթները, ճեղքերը, մկանները, մարմնի գծերն ու ճաքերը, մաշկն ու մարմնի մազերը: Երրորդ, պաշտպանիչ ցիի ցրումը տաքացնում ու սնուցում է զան-ֆու օրգանները, մկանները, մաշկն ու մարմնի մազերը, կարգավորում է մարմնի գծերի ու ճաքերի բացումն ու փակումը և վերահսկում քրտնարտադրությունը: Չորրորդ, թոքի ցանի դեպի դուրս շարժման միջոցով արյունը, որը հոսում է դեպի թոքը, բաշխվում է ամբողջ մարմնով մեկ, երբ թոքն արտաշնչում է պղտոր ցին և ներշնչում թարմ օդը:

[曾经译法] Թոքն ապահովում է օդի անարգել անցումն ու ճանապարհին ցրում կենսական էներգիան: Թոքը շարունակում է ցրող գործառույթը:

[现行译法] Թոքը պատասխանատու է ցրման համար: Թոքը կառավարում է ցրումը: Թոքը կառավարում է օդափոխությունը: Թոքը կառավարում է ցրումն ու բաշխումը:

[标准译法] Թոքը կառավարում է ցրումը:

[翻译说明] 译为 պատասխանատու լինել, կառավարել 简洁, 译为 դիֆուզիա, ցրում, օդափոխություն 的区别在于, դիֆուզիա, ցրում, օդափոխություն, արհեստական 或者, մեխանիկական 搭配, 译为 ցրում:

Մեջբերում 引例

Թոքը կառավարում է ցրումը, կապված է մաշկի ու մարմնի մազերի հետ և վերահսկում է քրտնագեղձերի բացումն ու փակումը *(Դասական սպեղծագործությունների հայրենիքի ընթերցումներ):*

**Թոքը կառավարում է զտումն ու իջեցումը ֆեյ ջու սուձիան 肺主肃降**

Ի տարբերություն ցրելու իր գործառույթի՝ «թոքը կառավարում է զտումն ու իջեցումը» արտահայտությունը նշանակում է, որ թոքը կարգավորում է զտման և դեպի վար ուղարկելու գործընթացը, այն է՝ թոքը ներս է շնչում մաքուր օդը, մարմնի հեղուկները, ցին ու արյունը տեղափոխում ներքև ու զտում: Թոքի այս ֆիզիոլոգիական գործառույթը դրսևորվում է չորս կողմով: Առաջին, ցիի իջեցման միջոցով թոքը խոր ներշնչում է թարմ օդը բնության մեջ: Երկրորդ, թոքի ցիի

իջեցման միջոցով ներշնչված թարմ օդը, մարմնի հեղուկները ու սննդից ու խմիչքներից ստացված և փայծաղի կողմից դեպի թոք տեղափոխված սննդարար նյութերը բաշխվում են ներքև և ներս, ամբողջ մարմնով, և մարսվում են, իսկ մարմնի ավելորդ հեղուկները տեղափոխվում են ներքև՝ դեպի երիկամ ու միզապարկ, և վերածվում են մեզի, որը պետք է դուրս գա մարմնից: Երրորդ, թոքի ցիի զտման գործառույթը շնչառական տրակտն ազատում է արտաքին հարուցիչներից ու մաքուր պահում այն: Չորրորդ, թոքի ցիի դեպի ներս շարժման հետ արյունն արյունատար անոթների միջով ամբողջ մարմնով հոսում է դեպի թոքեր:

| | |
|---|---|
| [曾经译法] | Թոքը զտում է ներշնչված օդն ու պահում այն, իսկ կենսական էներգիան հոսում է ներքև: Թոքի էներգիան պետք է մաքուր պահել: Թոքերը կապված են զտման և իջեցման հետ: Թոքի ցին պետք է մաքուր պահել: |
| [现行译法] | Թոքը պահանջում է զտում և իջեցում: Թոքը կառավարում է զտումն ու իջեցումը: Թոքն ունի զտելու և իջեցնելու գործառույթ: Թոքը կառավարում է զտումն ու իջեցումը: |
| [标准译法] | Թոքը կառավարում է զտումն ու իջեցումը: |
| [翻译说明] | 译为 մաքրում, 和 զտում, մաքրում, մաքրում, իջնել, իջեցում, վայրէջք |

Մեջբերում 引例

Հիմա ախտածին ցին մնացել է մարմնի վերին մասում, չի իջնում ներքև, իսկ դա նշանակում է, որ թոքի ցին չի կարողանում մաքրվել և իջնել *(Ջերմային հիվանդությունների հիմքերն ու պատճառները):*

## Թոքը համակարգում է կառավարումն ու կարգավորումը ֆեյ ջու ջիճիե 肺主治节

Եզրույթը նշանակում է, որ թոքը կառավարում ու համակարգում է ամբողջ մարմնի ֆիզիոլոգիական գործունեությունը ցիի, արյան և մարմնի հեղուկների առաջացումը կամ բաշխումը կարգավորելու միջոցով: Թոքի այս գործառույթն արտացոլվում է չորս կողմով: Նախ, թոքը կառավարում է շնչառությունը, վերահսկում շնչառության ռիթմն ու հետևաբար կարգավորում է կրծքային ցիի, սննդարար ցիի ու պաշտպանիչ ցիի արտադրությունը: Երկրորդ, թոքի ցրման, զտման և իջեցման գործառույթները կարգավորում են ցի շարժման բարձրանալը, իջնելը, ելքն ու մուտքը: Թոքի համակարգող գործառույթը կառավարում է ցիի պատշաճ բարձրացումը, իջեցումը, ելքն ու մուտքը ցան օրգաններ և միջօրեականներ, ինչպես նաև կրծքային ցին, սննդարար ցին և պաշտպանիչ ցին: Երրորդ, թոքը կառավարում է ցին, ցրումը, զտումն ու շնչառությունը, ինչի միջոցով խթանում ու կարգավորում է արյան շարժումը, սրտի ռիթմն ու սրտի կծկումները: Չորրորդ, թոքը կառավարում է ցրումը, զտումն ու իջեցումը, որի միջոցով համակարգում է մարմնի հեղուկների արտադրումն ու բաշխումը:

[曾经译法] Թոքը պատասխանատու է ներքին օրգանների գործունեության համակարգման համար: Թոքերի կառավարող գործառույթներ: Թոքի էներգիան պետք է լինի մաքուր ու դեպի վար: Թոքը պատասխանատու է ներքին օրգանների գործունեության համակարգման համար:

[现行译法] ներքին օրգանների գործունեությունը կարգավորող թոքեր. Թոքը պատասխանատու է ներքին օրգանների գործունեության համակարգման համար: Թոքը համակար-

| | |
|---|---|
| | գում է կառավարումն ու կարգավորումը: Թոքը վերահսկում է կարգավորման գործընթացը: |
| [标准译法] | Թոքը համակարգում է կառավարումն ու կարգավորումը: |
| [翻译说明] | ներքին օրգանների գործունեության համակարգում, 而应译为 կառավարում և կարգավորում, կառավարում, 之意。 կարգավորում: |

Մեջբերումներ 引例

Թոքը նման է վարչապետի. այն կառավարում է ցին ամբողջ մարմնում: Թոքը կառավարում ու կարգավորում է մարդու մարմնի դեպի վեր, վար, ներս ու դուրս գործունեությունը *(Պարզ զրույց):*

Երբ սնունդն ու խմիչքը մարսվում են ստամոքսում, փայծաղը նյութական ցին հասցնում է թոքին: Թոքը համակարգում է կառավարման ու կարգավորման գործընթացը և նյութական ցի է հասցնում զան-ֆու օրգաններին *(Բժշկական ամփոփագիր):*

**Բոլոր միջօրեականներն ու անոթները հատվում են թոքի մեջ**
**ֆեյ չաո բայ մայ 肺朝百脉**

Եզրույթը նշանակում է, որ թոքը կատարում է ֆիզիոլոգիական գործառույթ՝ օգնելով, որ սիրտը բարելավի արյան շրջանառությունն ամբողջ մարմնում: Բոլոր միջօրեականներն ու անոթները, որոնք կրում են ցի ու արյուն, խաչվում են թոքերում՝ թոքի միջոցով իրականացնելով ցիի փոխանակություն, ապա ցին ու արյունը բաշխելով ամբողջ մարմնում:

Եզրույթն ունի երեք իմաստ: Առաջին, արյունն ամբողջ մարմնում անոթների միջով հոսում է վեր՝ դեպի թոքեր: Երկրորդ, թոքերի միջոցով ներս շնչած թարմ օդը միանում է սննդի ու խմիչքի սննդարար նյութերից ստացած նյութական ցիին, ձևափոխվում ու տեղափոխվում ստամոքսի ու փայծաղի միջոցով՝ ձևավորելով կրծքային ցի, որն օգնում է սրտին բարելավել արյան շրջանառությունը: Երրորդ, թոքը կարգավորում է ցիի շարժումն ու ազդում արյան շրջանառության վրա:

[曾经译法] Արյան բոլոր անոթները գնում են դեպի թոքեր: Արյան բոլոր անոթները հանդիպում են թոքերում: Ամբողջ մարմնում արյան հոսքը հատվում է թոքերում: Անոթները հանդիպում են թոքերում:

[现行译法] Բոլոր անոթները հանդիպում են թոքում, թոքերի միացում բոլոր անոթներին: Թոքը բախվում է հարյուրավոր անոթների: Թոքը կապված է բոլոր միջօրեականների ու անոթների հետ:

[标准译法] Բոլոր միջօրեականներն ու անոթները հատվում են թոքում:

[翻译说明] 译为 միջօրեականներ ու անոթներ, հատվել, 译词 դեմք, 和 միանալ, 不如 հատվել, 词 հանդիպել, հատվել 但不如

Մեջբերումներ 引例

Արյունն ու ցին անոթներով ու միջօրեականներով հոսում են դեպի վեր և հատվում թոքում: Հետո թոքն արյունն ու ցին ամբողջ մարմնով հասցնում է բոլոր անոթներին ու միջօրեականներին և, ի վերջո, մաշկին և մարմնի մազածածկույթին *(Պարզ զրույց):*

Բոլոր միջօրեականներն ու անոթները հատվում են թոքում: Բացի այդ, բոլոր միջօրեականներն ու անոթները հանդիպում են *ցիկոուում* (气口, բառացի, ցիի դարպասներ), որտեղ ճառագայթային զարկերակն է: Հետևաբար, ցիկոուն նաև կոչվում է *մայկոու* (脉口, բառացի՝ անոթի դարպասներ) *(Դասական գործեր):*

Բոլոր միջօրեականներն ու անոթները հատվում են թոքում, ինչը նշանակում է, որ թոքն այն տեղն է, որտեղ հանդիպում են բոլոր անոթներն ու միջօրեականները *(Պարզ զրույցի ուղղակի մեկնաբանություն «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

### Թոքը կառավարում է ջրի անցումը
### ֆեյ ջու թունթիաո շույդաո 肺主通调水道

Եզրույթը նշանակում է, որ թոքը կառավարում ու կարգավորում է ջրի ու մարմնի հեղուկների բաշխումը, տեղափոխումն ու դուրս հանումը ցրման, զտման ու իջեցման միջոցով: Այսինքն՝ թոքը կարգավորում է ջրափոխանակությունը ցրելու, զտելու և իջեցնելու միջոցով: Այդպիսով՝ մարմնի հեղուկները բաշխվում են ամբողջ մարմնով մեկ, իսկ մակերեսին հասնում են մաշկին ու մազածածկույթին՝ սնուցելով ու խոնավեցնելով ամբողջ մարմինը: Միևնույն ժամանակ, թոքը կարգավորում է քրտնարտադրությունը՝ պաշտպանիչ ցին ցրելով և մաշկի գծերի ու ճեղքերի բացումն ու փակումը վերահսկելով: Թոքը հեղուկները բաշխում է դեպի ներքև ու ներս՝ զտելով ու իջեցնելով, սնուցելով ու խոնավեցնելով զան-ֆու օրգաններն ու հյուսվածքները: Թոքի՝ ջրի անցումը կարգավորելու գործընթացը ցրելու, զտելու ու ներքև ուղարկելու դրսևորումներից մեկն է ջրափոխանակության տեսանկյունից:

[曾经译法] Թոքը բացում և կարգավորում է ջրի շրջանառությունը: Թոքը վերահսկում է մարմնի հեղուկների կարգավորումը: Թոքերն առնչվում են հեղուկների հոսքի հետ:

[现行译法] ջրափոխանակությունը վերահսկող թոքեր
Թոքերը կարգավորում են ջրի անցումը:
Թոքը կառավարում է ջրային ուղիները:
Թոքը կառավարում է ջրային անցումը:

[标准译法] Թոքը կառավարում է ջրային ուղիների կարգավորումը:

[翻译说明] 译为 կարգավորել, 为 մարմնի հեղուկ, անցում, 若译为 ջրային ուղի,
译为 կառավարել

Մեջբերումներ 引例

Փայծաղը բաշխում է նյութն ու այն բարձրացնում վերև՝ դեպի թոքեր: Թոքը կարգավորում է ջրի անցումն ու ջուրը տեղափոխում ցած՝ միզապարկ *(Պարզ զրույց):*

Թոքը կառավարում է ջրի անցումը: Չնայած դրան, միզարձակումը կախված է էներգիայի եռակի աղբյուրի (սանձիաո) պատշաճ գործառույթից *(Պարզ զրույցի մեկնաբանություն):*

Թոքը կառավարում է ջրային ուղին: Հետևաբար, նրանք, ում թոքերն ավելի փոքր են, ավելի քիչ ջուր են խմում, իսկ մեծ թոքեր ունեցողներն ավելի շատ ջուր են խմում *(«Հզոր առանցքի» մեկնաբանությունների ժողովածու):*

**Փայծաղ**
**փի 脾**

Փայծաղը, որը տեղակայված է որովայնի վերին հատվա-

ծում, հինգ զան-օրգաններից մեկն է: Հիմնական գործառույթներն են՝ տեղափոխման ու փոխարկման, բարձրացման ու արյան կառավարումը, որոնցից առանցքայինը տեղափոխումն ու փոխարկումն են: Տեղափոխման ու փոխարկման գործառույթն է, որ օգնում է նյութ ձեռք բերել կենսագործունեության համար: Հինգ տարրերից փայծաղը համապատասխանում է հողին: Այն ծայրահեղ ինն է ու բնության մեջ կապված է ուշ ամռան ցիի հետ: Փայծաղը կապված է մկանների ու վերջույթների հետ: Այն բացվում է բերանի մեջ, նրա վիճակը դրսևորվում է շուրթերի փայլի և գիտակցության մեջ: Հեղուկների տեսանկյունից այն կապված է թքի հետ, իսկ զգացմունքների տեսանկյունից՝ մտածողության հետ: Ոտքի-թային փայծաղի միջօրեականը ներքին և արտաքին հարաբերության մեջ է Ոտքի-յանմին ստամոքսի միջօրեականի հետ:

[曾经译法] փայծաղ, փայծաղի ոլորտ, փայծաղ, Փի
[现行译法] փայծաղ, փայծաղ
[标准译法] փայծաղ
[翻译说明] փայծաղի ոլորտ

Մեջբերումներ 引例

Փայծաղն ու ստամոքսը կլանում են սնունդն ու խմիչքը, և նրանց կատարած դերը նման է ամբարի, որտեղ հինգ համերը փոխարկվում են սննդարար նյութերի *(Պարզ զրույց):*

Փայծաղը… ամբարի հիմքն է, որտեղ պահվում են սնունդն ու խմիչքը, այն տեղը, որտեղ արտադրվում է սննդարար ցին… Փայծաղի վիճակը դրսևորվում է շուրթերի փայլի մեջ, և այն օգնում է ամրապնդել մկանները *(Պարզ զրույց):*

Բերանով կլանվելուց հետո ուտելիքն ու խմիչքը տեղավորվում են ստամոքսում ու վերածվում բնահյութի: Փայծաղը

պատասխանատու է բնահյութի տեղափոխման համար *(Պարզ զրույց)*:

**Փայծաղի ցի**
**փիցի 脾气**

Փայծաղի ցին՝ փայծաղի նյութական ցին, փայծաղի ֆիզիոլոգիական գործունեության նյութական հիմքն ու խթանիչ ուժն է: Փայծաղի ցին ամբողջ մարմնի ցին և էությունն է, որը բաշխվում է փայծաղում և կատարում հատուկ գործառույթներ, ինչպիսիք են սննդի ու խմիչքի տեղափոխման և փոխարկման խթանումը, հստակության ու արյան վերահսկողությունը: Բարձրացնելու գործառույթի շնորհիվ փայծաղի ցին ուտելիքի և խմիչքի սննդարար նյութերը հասցնում է սրտին, թոքին, գլխին ու դեմքին, իսկ որովայնի ներքին օրգանները պահում իրենց բնականոն դիրքում: Այն արմատավորվում է նախնական ցիում, որը նախածննդյան շրջանում տեղավորվում է երիկամում, և լրացվում է ցիով, որը փոխարկվել է ուտելիքի և խմիչքի սննդարար նյութերից:

| | |
|---|---|
| [曾经译法] | փայծաղի Ցի (ֆունկցիոնալ գործունեություն), փայծաղի էներգիա, փայծաղի ցի |
| [现行译法] | փայծաղի ցի, փայծաղ-ցի, փայծաղի ցի |
| [标准译法] | փայծաղի ցի |
| [标准译法] | 翻译成 փայծաղային, 或者 փայծաղ, 有 փայծաղի ցի, փայծաղի ցի 不如, փայծաղի ցի 简洁, փայծաղի ցի 这个名词词组。 |

Մեջբերումներ 引例

Փայծաղի ցին շարժվում է դեպի բերան: Միայն երբ փայծաղի ցին ներդաշնակ է, բերանը կարող է տարբերել հինգ շիլաները *(Հոգևոր առանցք)*:

Երբ մարդը 70 տարեկան է, փայծաղի ցին նվազում է, իսկ մաշկը թոշնում է *(Հոգևոր առանցք):*

Փայծաղի ցին վերահսկում է հինգ զան-օրգանների և վեց ֆու-օրգանների արյունը, որ այն հոսի անոթների ներսում *(«Ոսկե սենյակի հիմնական դեղատոմսերի» ծանոթագրություններ):*

**Փայծաղի յան**
**փիյան 脾阳**

Փայծաղի յանը՝ փայծաղի յանի ցին, ի հակադրություն փայծաղի ինի, կատարում է ջերմացնելու, խթանելու և հուզելու գործառույթներ: Փայծաղը նախընտրում է չորությունն ու տանել չի կարողանում խոնավությունը: Իր գործառույթն իրականացնելու համար այն կախված է յանի ցիից: Այլ կերպ ասած՝ փայծաղի յանը կարևոր դեր է խաղում բնականոն տեղափոխության և ձևափոխության գործընթացում, արյան վերահսկողության մեջ, սերտորեն կապված է ստամոքսի ներծծման, քայքայման և իջեցման գործառույթների հետ: Փայծաղի յանի օգնությամբ կլանված ուտելիքն ու խմիչքը քայքայվում է ստամոքսում, որից հետո հստակն ու պղտորն իրարից առանձնանում են: Հստակը սրտի ցիի հետ բարձրանում ու հասնում է սրտին ու թոքին, իսկ պղտորը բնականաբար իջնում է: Փայծաղի ցին կապված է արյունը վերահսկելու հետ: Եթե փայծաղի յանն անբավարար է, այն ի վիճակի չէ վերահսկել արյունը: Փայծաղի յանի՝ արյունը վերահսկելու գործառույթը համարժեք է փայծաղի ցինի՝ արյունը վերահսկելու գործառույթին:

[曾经译法] փայծաղի Յանը, փայծաղ-*յան,* փայծաղ-յան
[现行译法] փայծաղի յան, փայծաղի յան
[标准译法] փայծաղի յան

[翻译说明] 主要为 փայծաղի յաճ, փայծաղի 译成, փայծաղի յաճ, 词典未收录。փայծաղի յաճ:

Մեջբերումներ 引例

Եթե փայծաղի յանն անբավարար է, չմարսված սնունդը կարելի է նկատել կղանքի մեջ *(Չլուծված հարցերի բացատրություն, «Քննախոսություն ցրտահարությունների մասին»):*

Լյարդի փայտի հիպերակտիվությունը կսահմանափակի փայծաղի հողը: Երբ փայծաղի յանը չի կարող պատշաճ կերպով տեղափոխել և ձևափոխել, յանն անբավարար կլինի, ինչը կհանգեցնի մրսածության *(Բժշկական բանաջևերի քննախոսություն):*

**Փայծաղի ին**
**փիյին** 脾阴

Փայծաղի ինը՝ փայծաղի ին հեղուկը, ի տարբերություն փայծաղի յանի, կատարում է ներսում նյութն արգելակելու, սնուցելու, խոնավեցնելու, հանգստացնելու և պահելու գործառույթներ: Փայծաղի ինը՝ փայծաղում տեղավորված սննդարար արյունն ու ին հեղուկը, փայծաղի ֆիզիոլոգիական գործառույթների նյութական հիմքն է: Փայծաղի ինը ստացվում է երկու աղբյուրից. մեկը նախածննդյան է, մյուսը՝ հետծննդյան: Նախածննդյան աղբյուրը երիկամի ինն է, որը հինգ զան-օրգանների հիմքն է: Հետծննդյան աղբյուրը սննդի ու խմիչքի սննդարար նյութերն են, որոնք ձևափոխվում ու տեղափոխվում են փայծաղի ու ստամոքսի միջոցով: Գործառույթի տեսանկյունից, փայծաղի ինն ուղղակիորեն սնում ու խոնավեցնում է փայծաղը, որպեսզի թեթևացնի սննդի ու խմիչքի փոխարկումը և կարգավորում է

փայծաղի ֆիզիոլոգիական գործառույթները փայծաղի յանի հետ փոխազդեցության միջոցով: Քանի որ ինն ու յանը արմատավորված են միմյանց մեջ, փայծաղի ինը սնում ու ծնում է փայծաղի յանը: Քանի որ ինն ու յանը ճնշում են իրար, փայծաղի ինը սահմանափակում է փայծաղի յանն ու կանխում հիպերակտիվությունը:

[曾经译法] փայծաղի Ին (կենսական նյութ), փայծաղի ին, փայծաղի ին
[现行译法] փայծաղի ին, փայծաղի ին
[标准译法] փայծաղի ին
[翻译说明] 主要为 փայծաղի ին, փայծաղի ին 不如, փայծաղի ին 这个名词词组

Մեջբերումներ 引例

«Սպիտակ վագրի» թուրմը չեզոքացնում է ավելցուկային ստամոքսային ջերմությունն ու մարում ստամոքսի ավելցուկային կրակը, իսկ «Ութ թանկարժեք քարերի» թուրմը հարստացնում ու սնուցում է թերի փայծաղի ինը *(Ռենջայի ուղեցույց բանաձևերի վերաբերյալ):*

Սովորական յամսայի արմատը պետք է ավելացնել «Չորս ազնվական մարդու» թուրմին, որպեսզի դեղամիջոցները հասնեն փայծաղի միջօրեականին և հարստացնեն ու սնուցեն փայծաղի ինը, մինչ ուղեկցող ախտանիշները համապատասխանաբար կբուժվեն *(Շենրոուի հինգ քննախուսությունները):*

**Փայծաղը կառավարում է տեղափոխումն ու փոխակերպումը**
**փի ջու յունհուա 脾主运化**

Եզրույթը նշանակում է, որ փայծաղն իրականացնում է

ֆիզիոլոգիական գործառույթ՝ օգնելով ստամոքսին ու աղիքներին սնունդն ու խմիչքը կլանելիս ու մարսելիս, ինչպես նաև նպաստում է նրան, որ կլանված սննդից ու խմիչքից ստացված սննդարար նյութերից փոխարկված կենսանյութը, ցին, արյունն ու մարմնի հեղուկները բաշխվեն ամբողջ մարմնում: Սա սննդի ու խմիչքի նյութափոխանակության առանցքային գործընթաց է և կենսագործունեության աջակցման կարևորագույն ֆիզիոլոգիական գործառույթ: Փայծաղը տեղափոխումն ու ձևափոխումը կառավարում է երեք ձևով: Առաջին, խթանում է մարսումն ու կլանումը ստամոքսի և աղիքների կողմից փայծաղի ցիի միջոցով: Երկրորդ, այն սրտի ու թոքի օգնությամբ կլանված էությունը տեղափոխում է մարմնի տարբեր մասեր: Երրորդ, սրտի ու թոքի օգնությամբ կլանված նյութը վերածում է կենսանյութի, ցիի, արյան, մարմնի հեղուկների և մարմնի այլ հիմնական սննդանյութերի: Փայծաղը տեղափոխում և ձևափոխում է թե՛ սնունդը, թե՛ ջուրը: Երբ փայծաղը տեղափոխում ու ձևափոխում է սնունդը, փայծաղի ցին օգնում է սննդի կլանման ու մարսման հարցում և տեղափոխում է արդյունքում ստացված սննդանյութերը: Փայծաղը տեղափոխում, ձևափոխում ու ներծծում է ջուրն ու կարգավորում ջրափոխանակությունը:

[曾经译法] Փայծաղն ունի մարսելու և տեղափոխելու գործառույթ: Փայծաղը պատասխանատու է տեղափոխման և փոխակերպման համար: Փայծաղը կապված է փոխանցման և մարսման հետ: Փայծաղը պատասխանատու է սննդի մարսման և հեղուկների տեղափոխման համար:

[现行译法] մարսողությունը վերահսկող փայծաղ, տեղափոխումն ու ձևափոխումը վերահսկող փայծաղ, տեղափոխումն ու ձևափոխումը կառավարող փայծաղ, փայծաղը կառավա-

| | |
|---|---|
| | րումն է շարժումն ու տեղափոխումը: Փայծաղը կառավարում է տեղափոխումն ու ձևափոխումը: |
| [标准译法] | Փայծաղը կառավարում է տեղափոխումն ու ձևափոխումը: |
| [翻译说明] | շարժում, տեղափոխում, փոխանցում, 不如 տեղափոխություն, 翻译成 մարսում, 或者 կոնվերսիա, տեղափոխում և ձևափոխում: |

Մեջբերումներ 引例

Ստամոքսը կլանում է սնունդն ու խմիչքը, իսկ փայծաղը կառավարում է դրանց տեղափոխությունն ու փոխարկումը՝ դրանք վերածելով ցիի ու արյան, որի նպատակը մարդու մարմինը սնելն է *(Կենսագործունեության աջակցության բանաչևեր):*

Փայծաղը կառավարում է տեղափոխությունն ու ձևափոխությունը, իսկ ստամոքսը՝ սննդի ու խմիչքի կլանումը: Երկուսն էլ պատասխանատու են սննդի ու խմիչքի մարսման ու կլանման համար: Հետևաբար, երկուսն էլ համարվում են ամբարի համար պատասխանատու պաշտոնյաներ *(Դասական գործեր):*

## Փայծաղը վերահսկում է արյունը փի ջու թունսյուե 脾主统血

Այս եզրույթը նշանակում է, որ փայծաղի ցին կատարում է արյան հոսքն արյան անոթներում ապահովելու գործառույթ՝ ցիի գործառույթները պաշտպանելու և վերահսկելու միջոցով: Ցիի և արյան հարաբերությունների տեսանկյունից ցին կառավարում է արյունը, ստեղծում և ակտիվացնում է

արյունը և արյուն է պարունակում: Ցին զան-ֆու օրգանների ցիի ֆիզիոլոգիական գործունեության միջոցով ազդում է արյան վրա: Այն, թե արդյո՞ք ցին կարող է վերահսկել ու պահել արյունը, սերտորեն կապված է փայծաղի տեղափոխման ու ձևափոխման գործառույթի հետ: Այն, թե արդյո՞ք ցին կարող է խթանել արյան շրջանառությունը, սերտորեն կապված է սրտի ցիի շարժման, թոքերի ցիի մաքրման և իջեցման, լյարդի ցիի ազատ հոսքի, ինչպես նաև փայծաղի ու ստամոքսի բարձրանալու և իջնելու հետ: Փայծաղը վերահսկում է տեղափոխման և ձևափոխման գործընթացները և ցիի ու արյան արտադրության աղբյուրն է: Եթե փայծաղի ցին պատշաճ կերպով աշխատում է, սննդի ու խմիչքի սննդարար նյութերն առատ են լինում, իսկ ցին ու արյունը՝ բավարար: Եթե փայծաղի ցին պակաս է ու թույլ և չի կարողանում տեղափոխել ու ձևափոխել, ցիի ու արյան աղբյուրը սակավ է լինում, ինչն էլ հանգեցնում է բազմաթիվ արնազեղումների:

[曾经译法] Փայծաղն ունի արյան անոթներով հոսող արյունը պահելու գործառույթ: Փայծաղը կառավարում է արյունը: Փայծաղը վերահսկում է արյունը: Փայծաղը պատասխանատու է անոթներում արյունը պահելու համար:

[现行译法] արյունը վերահսկող փայծաղ, արյունը կառավարող փայծաղ: Փայծաղը վերահսկում է արյունը: Փայծաղը ղեկավարում է արյունը: Փայծաղը կառավարում է արյունը:

[标准译法] Փայծաղը վերահսկում է արյունը:

[翻译说明] 翻译成 կառավարել, վերահսկել, ղեկավարել, վերահսկել

Մեջբերումներ 引例

Փայծաղը վերահսկում է արյունը՝ ապահովելով ամբողջ մարմնի անոթներում արյան հոսքը, որի նպատակը մարմինը

սնելն է: Բացի այդ, այն հետծննդյան կազմվածքի հիմքն է, որից հինգ զան-օրգանները ստանում են մարսած սննդից ու խմիչքից ստացված նյութական ցին, որը ձևափոխել է փայծաղը *(Քննախոսություն արյան ախտանիշների մասին):*

Փայծաղը վերահսկում է արյունը՝ ստիպելով, որ արյունը շրջանառվի ամբողջ մարմնում և սնի այն *(Ձևափոխելով դեղագործական նյութերի նշանակությունը):*

**Փայծաղը հոգ է տանում, որ այն, ինչ պարզ է ու հստակ, բարձրանա փի ջու շենցին** 脾主升清

Եզրույթը նշանակում է, որ փայծաղի ցին սննդի ու խմիչքի սննդարար նյութերը տեղափոխում է վերև՝ հասցնելով սրտին ու թոքերին, որպեսզի դրանք վերածի ցիի ու արյան ու պահպանի ներքին օրգանների համեմատաբար կայուն դիրքերը: Այլ կերպ ասած՝ սա փայծաղի՝ տեղափոխման ու ձևափոխման գործառույթի մի մասն է, այն է՝ սննդի ու խմիչքի սննդարար նյութերի տեղափոխումը դեպի վեր, որը սերտորեն կապված է փայծաղի՝ տեղափոխության և ձևափոխության գործառույթի և փայծաղի ցին բարձրացնելու հետ: Փայծաղը հոգ է տանում, որ այն, ինչ պարզ է ու հստակ, բարձրանա, ի տարբերություն ստամոքսի, որը հոգ է տանում, որ այն, ինչ պղտոր է, իջնի. սա նշանակում է, որ փայծաղը կառավարում է սննդից ու խմիչքից ստացված սննդարար նյութերի կլանումն ու տեղափոխումը վեր: Միայն եթե փայծաղը պատշաճ կերպով կառավարի պարզ նյութերի բարձրացումը, սննդից և խմիչքից ստացված սննդարար նյութերը կկլանվեն, կտեղափոխվեն ու կբաշխվեն բնականոն ճանապարհով, սնուցիչ նյութերը կկարողանան փոխարկվել ցիի ու արյան, իսկ մարդու մարմինը կունենա կենսական ուժ: Ավելին, փայծաղի ցիի բարձրացման շնորհիվ ներքին օրգանները մարմնի մեջ մնում են բնականոն դիրքերում և չեն կախվում:

[曾经译法] Փայծաղը սննդարար նյութերը բարձրացնում է վեր: Փայծաղն ունի պարզ նյութերը (սննդի նյութ) վերև (թոք) հասցնելու գործառույթ: Փայծաղն ազդեցություն ունի նյութերը վերև տեղափոխելու վրա: Փայծաղը սննդարար նյութերն ուղարկում է վերև: Փայծաղը պատասխանատու է էական նյութերը վերև ուղարկելու համար:

[现行译法] սննդարար նյութերը վերև տեղափոխող փայծաղ, պարզ նյութերի բարձրանալը վերահսկող փայծաղ, լուսավորը բարձրացնող փայծաղ: Փայծաղը կառավարում է պարզ նյութերի բարձրանալը: Փայծաղը բարձրացնում է այն, ինչ պարզ է ու հստակ:

[标准译法] Փայծաղը կառավարում է պարզ նյութերի բարձրանալը:

[翻译说明] 译为 ուղարկել վերև, տեղափոխել վեր, 或 տեղափոխել վերև, վերտեղափոխում, բարձրացում, բարձրացնել, 译成 սննդարար նյութ, պարզ:

Մեջբերումներ 引例

Փայծաղը կառավարում է հստակ ցիի բարձրացումը, իսկ ստամոքսը՝ պղտոր ցիի իջեցումը: Երբ հստակ ցին պատշաճ կերպով բարձրանում է, իսկ պղտոր ցին՝ իջնում, որովայնը մնում է խաղաղ ու ներդաշնակ *(«Քննախուզություն գրպահարության մասին». չլուծված խնդիրների բացատրություն):*

Փայծաղը կառավարում է պարզ ցիի բարձրացումը: Եթե փայծաղի ցին իջնի, հստակ ցին կմնա ներքևում լճացած ու չի բարձրանա, իսկ սնունդն ու խմիչքը չի մարսվի, ինչը կհանգեցնի ստամոքսի փքվածության և փորլուծության *(Չորս իմաստուն բժիշկների գրվածքների մշակումներ)*

**Լյարդ**
**գան 肝**

Լյարդը՝ հինգ զան-օրգաններից մեկը, կառավարում է ցիի շարժումն ու պահուստավորում արյունը: Ֆիզիոլոգիական տեսանկյունից դրան բնորոշ են բարձրացումն ու շարժումը: Լյարդը նախընտրում է ազատ գործունեությունը և ատում է ճնշումը: Ձևով այն ին է, իսկ գործառույթով՝ յան, հայտնի է նաև որպես աննկուն զան-օրգան: Լյարդը հինգ տարրերից փայտին է վերաբերում: Այն յան է ինի մեջ, իսկ բնության մեջ կապված է գարնան ցիի հետ: Լյարդը կապված է ջլերի ու աչքերի հետ, նրա վիճակը դրսևորվում է եղունգների փայլի մեջ: Այն կապված է արցունքների հետ, իր մեջ պահում է եթերային հոգին, իսկ զգացմունքներից կապված է բարկության հետ: Ոտքի-ձուեինի լյարդի միջօրեականը ներքին և արտաքին հարաբերության մեջ է Ոտքի շաոյանի լեղապարկի միջօրեականի հետ:

[曾经译法] լյարդ, հեպար, հեպատիկ ոլորտ, լյարդ, Գան
[现行译法] լյարդ, լյարդ
[标准译法] լյարդ
[翻译说明] 主要为 լյարդ, Հեպար, 和 հեպատիկ ոլորտ, 译为 լյարդ:

Մեջբերումներ 引例

Լյարդը որպես օրգան նման է գեներալի և պատասխանատվություն է կրում ռազմավարության համար *(Պարզ զրույց):*

Լյարդը թուլության ու լարվածության հիմքն է, ինչպես նաև մարմնի աննկունության ու ճկունության պատճառը և եթերային հոգու տունը: Նրա վիճակը դրսևորվում է եղունգների փայլի մեջ, այն սնուցում ու թարմացնում է ջլերը…,

յանի ներսում պատկանում է շաոյանին (ավելի քիչ յան), իսկ բնության մեջ կապված է գարնան ցիի հետ *(Պարզ զրույց):*

Լյարդը պահուստավորում է արյունը, իսկ սիրտը խթանում է արյան շրջանառությունը: Երբ մարդու մարմինը դինամիկ վիճակում է, արյունը հոսում է անոթներում: Երբ մարդու մարմինը ստատիկ վիճակում է, արյունը հոսում է դեպի լյարդ ու հավաքվում այնտեղ *(Պարզ զրույց, ծանոթագրությունը՝ Ուան Բինի):*

**Լյարդի ցի**
**գանցի 肝气**

Լյարդի ցին՝ լյարդի հիմնական ցին, լյարդի ֆիզիոլոգիական գործունեության նյութական հիմքն է ու խթանող ուժը: Լյարդի ցին ամբողջ մարմնի ցին ու էությունն է, որը բաշխվում է լյարդում՝ որպես լյարդի ֆիզիոլոգիական գործառույթների նյութական հիմք: Լյարդի ցին, որին բնորոշ է բարձրացումը, ցրումը, ցիի հոսքն ու ազատ գործունեությունը, կարգավորում ու հարթում է ամբողջ մարմնում ցի շարժումը, խթանում արյան և մարմնի հեղուկների շարժումը, տեղափոխումն ու բաշխումը, օգնում է սննդի ու խմիչքների մարսողությանն ու կլանմանը, խթանում է լեղու արտազատումը, երջանկացնում է մարդկանց ու ազատում դեպրեսիայից: Դաշտանն ու ճվազատումը, ինչպես նաև սերմնաժայթքումը վկայում են այն մասին, որ լյարդը կառավարում է ցիի ազատ հոսքը:

| | |
|---|---|
| [曾经译法] | լյարդի Ցի (կենսական էներգիա), լյարդի էներգիա, հեպատիկ ցի |
| [现行译法] | հեպատիկ ցի, լյարդ-ցի, լյարդի ցի |
| [标准译法] | լյարդի ցի |
| [翻译说明] | հեպատիկ, հեպատիկ ցի, լյարդի ցի, լյարդ-ցի |

Մեջբերումներ 引例

Լյարդի ցին պատկանում է աչքերին, ու միայն երբ այն ներդաշնակ է, աչքերը կարող են տարբերակել հինգ գույները *(Հոգևոր առանցք)*:

Երբ մարդը հիսուն տարեկան է, լյարդի ցին սկսում է նվազել, լյարդի հյուսվածքները՝ բարակել, լեղին՝ նվազել, իսկ տեսողությունը՝ խամրել *(Հոգևոր առանցք)*:

Լյարդի ցիի անբավարարությունը հանգեցնում է վախի, իսկ լյարդի ցիի ավելցուկը՝ բարկության *(Հոգևոր առանցք)*:

**Լյարդի արյուն**
**գանսյուե** 肝血

Լյարդի արյուն ասելով նկատի ունենք լյարդում պահվող արյունը: Այն սնում է լյարդն ու ամբողջ մարմինը: Լյարդում պահվող արյունը խոնավեցնում ու սնում է լյարդը, ինչպես նաև հարակից օրգանները և դրանց հնարավորություն է տալիս պատշաճ կերպով գործել: Լյարդում պահվող արյունը սնուցում է ջլերը, աչքերը, եղունգները, գլխավոր անոթն ու բեղմնավորման անոթը, պահպանում է մարմնի բնականոն շարժումները, տեսողությունն ու կնոջ վերարտադրողական գործառույթը: Այն նաև փափկեցնում է լյարդն ու վերահսկում դրա գործառույթը՝ կանխելով հիպերակտիվությունը: Միևնույն ժամանակ լյարդի արյունը մտավոր գործունեության, ոգին ու եթերային հոգին սնելու և մտավոր գործունեությունը պահպանելու նյութական հիմքն է:

[曾经译法] լյարդում պահվող արյուն, լյարդ-արյուն, լյարդի արյուն
[现行译法] հեպատիկ արյուն, լյարդի արյուն

[标准译法] լյարդի արյուն
[翻译说明] 主要为 լյարդի արյուն, հեպատիկ արյուն, լյարդում պահվող արյունը,
译语 լյարդ-արյուն, լյարդի արյուն:

Մեջբերումներ 引例

Մարդիկ հաճախ տխրում են, երբ լյարդի արյունը պակասում է ու չի կարողանում սնել աչքերը *(«Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնի» պարզությունը):*

Ճանկխոտի և գարդենիայի փոշին պետք է օգտագործել լյարդի կրակը չորացնելու համար, իսկ Չորս նյութերի թուրմը՝ լյարդի արյունը սնուցելու համար *(Մանկական հիվանդությունների ախտորոշման և բուժման Ցիանի բանալին):*

Լյարդը սնուցող դեղահաբը բուժում է երեխաների աղոտ տեսողությունը, որը լյարդի արյան անբավարարության հետևանք է *(Աչքի հիվանդությունների ծագման առեղծվածի բացահայտում):*

**Լյարդի ին**
**գանյին** 肝阴

Լյարդի ինը, ի տարբերություն լյարդի յանի, վերաբերում է լյարդի ին հեղուկին և դրա՝ զսպելու, սնելու, հանգստացնելու ու պաշտպանելու գործառույթներին: Այն լյարդի բնականոն ֆիզիոլոգիական գործոնների, այսինքն՝ ցիի ազատ հոսքի ու արյան պահուստավորման համար անհրաժեշտ հիմնարար նյութն է: Այն սնուցում է լյարդն ու սահմանափակում լյարդի յանը, որպեսզի կանխի դրա հիպերակտիվությունը: Եթե լյարդի ինը բավարար չէ ու ի վիճակի չէ փափկեցնել, զովացնել ու խոնավեցնել, դա կհանգեցնի լյարդի

յանի չափազանց վեր բարձրանալուն և նույնիսկ հիպերակտիվության հետևանքով ներքին քամու ակամա շարժմանը: Լյարդի ինը սերտորեն կապված է երիկամի հետ: Երիկամի ինը կարող է սնել լյարդի ինն ու սահմանափակել լյարդի յանը չափազանց շատ բարձրանալու պատճառով:

[曾经译法] լյարդի-ին, լյարդի Ին կենսական նյութ, լյարդի ին, Լյարդի Ին
[现行译法] լյարդի ին, լյարդ-ին
[标准译法] լյարդի ին
[翻译说明] լյարդի ին

Մեջբերումներ 引例

Դարչնի ճյուղ կարելի է օգտագործել լյարդի յանը ակտիվացնելու, իսկ չինական քաջվարդ՝ լյարդի ինը սնուցելու համար *(Կիրառվող բանաձևերի հրաշքները):*

Եթե կա երիկամի նյութի և լյարդի ինի անբավարարություն, կլինի արյան չորություն, ինչն էլ կհանգեցնի ջերմության *(Հիվանդության պատմություն. կլինիկական պրակտիկայի ուղեցույց):*

Եթե չիմանանք, որ ճանկխոտը թուլացնում է լյարդի ինը, իսկ պուերարիայի արմատը սպառում է ստամոքսի ինը, վիճակը կվատթարանա *(Քննախուզություն ջերմային հիվանդությունների մասին):*

**Լյարդի յան**
**գանյան 肝阳**

Լյարդի յանը, ի տարբերություն լյարդի ինի, վերաբերում է լյարդի յան ցիին. դրա գործառույթներն են՝ ջերմացնելը,

խթանելը, նպաստելն ու բարձրացնելը: Լյարդի յանը հիմնականում ջերմացնում է լյարդը և ակտիվացնում դրա ֆիզիոլոգիական մեխանիզմը: Այն նաև լյարդի ինը հետ է պահում արգելակումից ու կանխում ավելցուկային ին սառնությունը, օգնում է պահպանել ցիի ազատ հոսքն ու արյան պահուստավորման բնականոն գործառույթը: Լյարդի յանը կարևոր դեր ունի ընթացքի ու լիցքաթափման հետ կապված գործողություններում: Լյարդն աննկուն զանօրգան է: Լյարդի ցին ակտիվ է բնության մեջ, հատկություններով նման է փայտին, որը սահուն ձգվում է: Այսպիսով, լյարդը նախընտրում է ձգվել և ատում է ճնշվածությունը: Լյարդի յանի բարձրանալու գործառույթը նպաստում է, որ լյարդի ցին բարձրանա և ցրվի դեպի դուրս, ինչը կարգավորում է ցիի ընթացքը և կառավարում դրա հոսքն ու արտանետումը:

[曾经译法] լյարդ-յան, լյարդի Յան (կենսական գործառույթ), լյարդի յան, Լյարդ-Յան
[现行译法] լյարդի յան, լյարդ-յան
[标准译法] լյարդի յան
[翻译说明] 译为 լյարդի յան

Մեջբերումներ 引例

Լյարդի փայտը կապված է գարնան յանի հետ. դրա անբավարարությունը կհանգեցնի սառը նախշերի: Հետևաբար, սառը նախշերն ինչպե՞ս կարող են դրսևորվել, երբ թե՛ երիկամի ինը, թե՛ լյարդի յանը անբավարար լինեն *(Բացահայտելով աչքի հիվանդությունների ծագման առեղծվածը):*

Երբ լյարդի յանը լճանում է, ու յոթ ճեղքերը չեն գործում, ի հայտ են գալիս այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են գլխի ուռածությունը, ականջների մեջ խշշոցն ու այրոցը *(Հիվանդության պատմություն. կլինիկական պրակտիկայի ուղեցույց):*

Սրտի կրակը մարում է, որպեսզի սահմանափակի նախարարական կրակը. երիկամի ինը սնուցվում է, որպեսզի սահմանափակի լյարդի յանը *(Չորս բժիշկների հիվանդության պայմություն, Լիու Բաոչիի կազմությամբ):*

**Լյարդը կառավարում է ընթացքն ու լիցքաթափումը գան ջու շուսիե 肝主疏泄**

Եզրույթը վերաբերում է ամբողջ մարմնում ցիի հոսքը կարգավորելու լյարդի ֆիզիոլոգիական գործառույթներին: Այն, որ լյարդը կառավարում է ընթացքն ու լիցքաթափումը, հեշտացնում է զան-ֆու օրգանների ու միջօրեականների ազատ հոսքը: Այն նաև կարևոր կենսական նշանակություն ունի լյարդի և այլ համապատասխան զան-ֆու օրգանների պատշաճ գործառույթները պահպանելու գործում: Եզրույթն ունի չորս իմաստ. 1) խթանել արյան և հեղուկների տեղափոխությունն ու բաշխումը, 2) թեթևացնել փայծաղի և ստամոքսի կողմից տեղափոխությունն ու ձևափոխությունը, ինչպես նաև լեղու արտազատումը, 3) կարգավորել զգացմունքները, հեռու մնալ հիստերիկ ոգևորությունից կամ դեպրեսիայից և 4) նպաստել սերմնաժայթքմանը կամ ձվազատմանն ու դաշտանային ցիկլին:

[曾经译法] Լյարդը ծառայում է կենսական էներգիայի ակտիվությունը կարգավորելուն: Լյարդն ունի կենսական էներգիայի և արյան հոսքը մեղմելու և կարգավորելու գործառույթ: Լյարդի՝ ցրող և արտանետող գործառույթները: Լյարդը կառավարում է ազատ ընթացքը: Լյարդն ունի ցրելու ազդեցություն: Լյարդը կառավարում է ազատ հոսքը: Լյարդը ցրող ազդեցություն ունի:

[现行译法] Լյարդը կառավարում է ցիի ազատ հոսքը:

Լյարդը կառավարում է ազատ ընթացքը: Լյարդը կառավարում է տեղափոխումն ու ցրումը: Տեղափոխումն ու ցրումը կառավարող լյարդ, ցիի սահուն հոսքը կառավարող լյարդ: Լյարդը վերահսկում է տեղափոխությունն ու ցրումը:

[标准译法] Լյարդը կառավարում է ընթացքն ու լիցքաթափումը:

[翻译说明] 译为 տեղափոխություն, 译为 ընթացք, ուղի, հարթ, ցրում: 可译为 Լյարդը կառավարում է տեղափոխումն ու լիցքաթափումը:

Մեջբերումներ 引例

Երիկամը կառավարում է կենսանյութի պահուստավորումը, միևնույն ժամանակ լյարդը կառավարում է շարժումն ու արտանետումը: Երկու օրգաններն էլ պահպանում են նախարարական կրակը *(Տարբեր գրվածքներ Մին դինաստիայի հայտնի բժիշկներից):*

Լյարդը կառավարում է հոսքն ու լիցքաթափումը, ինչի վրա, սակայն, ազդում են լյարդի հիվանդությունները: Արդյունքում մեզը սկզբում դեղին է լինում *(Ջերմային հիվանդությունների համակարգային տարբերակում):*

Լյարդը կառավարում է հոսքն ու լիցքաթափումը: Լյարդի առատ կրակը կհանգեցնի արյան մեջ մեզի առկայության… Փինգան Չիաուեյ Սյաոյաո Սան պետք է օգտագործվի բուժման համար *(Բժշկական ըմբռնում):*

**Լյարդը պահպանում է արյունը**
**գան ջու ցանսյուե 肝主藏血**

Եզրույթը նշանակում է, որ լյարդը պահպանում է արյունն

ու կարգավորում արյան ծավալը: Լյարդն առաջին հերթին մասնակցում է հետևյալ չորս ֆիզիոլոգիական գործառույթներին. 1) սննդարար նյութեր մատակարարել զան-ֆու օրգաններին և հյուսվածքներին, 2) սնուցել լյարդը, ջլերն ու աչքերը, այսինքն՝ պահպանել լյարդի ճկունությունն ու հոսքի ու լիցքաթափման բնականոն գործառույթը՝ արյունահոսությունները կանխելու համար, 3) կարգավորել արյան ծավալը, այսինքն՝ պահպանված արյունը տեղափոխել դեպի նշանակված զան-ֆու օրգաններ ու հյուսվածքներ՝ արյան բավարար մատակարարումն ապահովելու համար. երբ ավելի քիչ արյուն պահանջվի ֆիզիկական գործունեության նվազման պատճառով, ավելցուկային արյունը կվերադառնա լյարդ, և 4) պահել առատ արյունը լյարդում՝ կանոնավոր դաշտանային ցիկլ ապահովելու համար:

[曾经译法] Լյարդը պահպահում է արյունը: Լյարդը պահպանում է Արյունը:
[现行译法] Լյարդը պահպանում է արյունը: Լյարդն արյուն է պահում: Արյուն պահուստավորող յարդ:
[标准译法] Լյարդը պահուստավորում է արյունը:
[翻译说明] պահել

Մեջբերումներ 引例

Սիրտը կառավարում է արյան շրջանառությունը: Փայծաղն իրականացնում է արյան վերահսկողությունը, իսկ լյարդը կառավարում է արյան պահուստավորումը *(Հարյուր հարց գինեկոլոգիայում)*:

Լյարդը կոչվում է արյան ծով՝ արյուն պահպանելու իր գործառույթի պատճառով *(Ճշգրտումներ բժշկության ոլորտում)*:

Լյարդը պահպանում է արյունը: Եթե չի կարողանում, դա հանգեցնում է արյունափոխման *(Հանրամատչելի բժշկություն բժիշկ Ջան Լուից):*

**Լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն**
**գան շեն թունյուան 肝肾同源**

Լյարդն ու երիկամն ընդհանուր ծագում ունեն բնահյութի ու արյան հետ: Դրանք թարմացնում են միմյանց. երիկամի ջուրը սնուցում է լյարդի փայտը, ու երկուսն էլ պահպանում են նախարարական կրակը: Պատկերացումն այն մասին, որ լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն, հիմնականում դրսևորվում է երկու տեսանկյունից. 1) բնահյութի և արյան փոխադարձ փոխակերպում: Տեղակայվելով էներգիայի ստորին աղբյուրում՝ լյարդը պահպանում է արյունը, իսկ երիկամը՝ բնահյութը: Բնահյութը կարելի է փոխարկել արյան, իսկ արյունը՝ բնահյութի: Հետևաբար, երիկամի բնահյութը կարող է թարմացնել ու լրացնել լյարդի արյունը, ինչպես նաև արգելակել լյարդի յանը. լյարդի արյունը կարող է սնել երիկամի բնահյութը ու նաև պահպանել հավասարակշռությունը երիկամում ինի ու յանի միջև: 2) Ինի ու յանի փոխադարձ աջակցություն ու փոխզսպում: Հոգեբանական տեսանկյունից, երիկամի ինը՝ որպես ին հեղուկների հիմք ամբողջ մարմնում, կարող է թարմացնել լյարդի ինն ու զսպել լյարդի յանը: Ախտաբանության տեսանկյունից, լյարդի ինն ու երիկամի ինը հաճախ ազդում են միմյանց վրա:

[曾经译法] Լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն: Լյարդն ու երիկամն ընդհանուր աղբյուր ունեն: Լյարդն ու երիկամն ընդհանուր ծագում ունեն: Լյարդն ու երիկամն ունեն ընդհանուր աղբյուր:

[现行译法] Լյարդն ու երիկամը նույն աղբյուրն ունեն:

| | |
|---|---|
| | Լյարդի ու երիկամի միատարրություն: |
| | Լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն: |
| | Լյարդն ու երիկամը նույն աղբյուրից են: |
| [标准译法] | Լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն: |
| [翻译说明] | 选用 ծագում, միատարրություն: 译为 Լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն: Լյարդն ու երիկամն ընդհանուր ծագում ունեն: |

Մեջբերումներ 引例

Հինգ տարրերի տեսության տեսանկյունից աչքերը վերաբերում են լյարդի փայտին: Երիկամի ջուրը սնում է դրանք: Լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն. երբ երիկամն անբավարար է, աչքերը զրկվում են սնուցումից, և հնարավոր է, որ գլխապտույտ լինի *(«Ոսկե խցի էական նյութերի» քննարկում և ծանոթագրություններ):*

Հին ասացվածքն ասում է. քանի որ լյարդն ու երիկամը նույն ծագումն ունեն, լյարդի ու երիկամի խանգարումները կարելի է բուժել նույն ռազմավարությամբ: Ինչու՞ է այդպես: Պատճառը կապված է կրակի հետ, որը լինում է երկու տեսակ՝ միապետի կրակ և նախարարի կրակ: Վերջինը տեղակայված է երիկամում, ինչպես նաև լյարդում *(Պահանջված ընթերցումներ բժիշկ նախնիներից):*

**Երիկամ**

**շեն 肾**

Երիկամները, որոնք տեղակայված են գոտկային հատվածում, ողնաշարի երկու կողմում, հինգ զան-օրգաններից են: Երիկամի հիմնական գործառույթներն են՝ բնահյութի պահուստավորումը, աճի վերահսկողությունը, զարգացումն ու վերարտադրողականությունը, ջրի կառավարումն ու ցիի

ընդունումը: Երիկամը պահուստավորում է նախածննդյան էությունը, որը կարելի է փոխարկել երիկամի ցիի, այն է՝ երիկամի ինի և երիկամի յանի: Երիկամի ինն ու երիկամի յանը խթանում ու համակարգում են ամբողջ մարմնի ինն ու յանը: Դրանք զան-ֆու օրգանների ինի ու յանի հիմքն են, կենսագործունեության աղբյուրը: Հետևաբար, երիկամը նախածննդյան կազմվածքի հիմքն է: Երիկամը, որը հինգ տարրերի տեսության շրջանակներում պատկանում է ջրին, ին է ինի մեջ, իսկ բնության մեջ համապատասխանում է ձմռանը: Այն կապված է ոսկորների հետ, բացվում է ականջների, հետանցքի ու սեռական օրգանների մեջ, մարմնի հեղուկներից կապված է թքի հետ, զգացմունքներից՝ վախի հետ, և պահպանում է կամքը: Դրա վիճակը դրսևորվում է մազերի փայլի մեջ: Ոտքի-շաոյինի երիկամի միջօրեականը ներքին և արտաքին հարաբերության մեջ է Ոտքի-թայյանի միզապարկի հետ:

| | |
|---|---|
| [曾经译法] | երիկամ, երիկամային ոլորտ, Շեն |
| [现行译法] | երիկամ, երիկամներ, երիկամ |
| [标准译法] | երիկամ |
| [翻译说明] | երիկամ, երիկամ, 而译作 երիկամներ, 译为 երիկամ |

Մեջբերումներ 引例

Երիկամը մարմնի օրգան է, որը նման է մեծ իշխանություն ունեցող պաշտոնյայի և պատասխանատու է հմտությունների համար *(Պարզ զրույց):*

Երիկամը՝ որպես էական ցիի պահեստարան, իր մեջ պահում ու պահուստավորում է բնահյութը: Դրա վիճակը դրսևորվում է մազերի փայլի մեջ, այն վերականգնում է ոսկորները: Երիկամը, որը վերաբերում է թայինին (ավելի մեծ ին), համապատասխանում է ձմռան ցիին *(Պարզ զրույց):*

Երիկամը տեղակայված է գոտկային հատվածում: Եթե գոտկատեղը դժվարությամբ է թեքվում, նշանակում է երիկամների ցին նվազում է *(Պարզ զրույց):*

**Երիկամի ցի**
**շենցի 肾气**

Երիկամի ցին, որն առաջանում է երիկամի նյութից, նշանակալի հիմք և խթանիչ ուժ է երիկամների ֆիզիոլոգիական գործունեության համար: Այն սննդարար նյութ է, որն ամբողջ մարմնի ցին հասցնում է երիկամին, և ունի հատուկ դերեր: Երիկամը պարունակում է բնահյութը, որը վերածվում է ցիի, այսինքն՝ երիկամի ցիի: Երիկամի հյութն ու երիկամի ցին կառավարում են մարդու աճը, զարգացումն ու վերարտադրողականությունը: Երիկամի ցին բաժանվում է երիկամի ինի ու երիկամի յանի, որն ամբողջ մարմնի ինի և յանի հիմքն է, կարևոր դեր է խաղում զան-ֆու օրգանների գործառույթի խթանման ու կարգավորման մեջ, ինչպես նաև կառավարում է ջրափոխանակությունն ու վերահսկում միզապարկի բացվելն ու փակվելը: Երիկամի ցիի պահուստավորման և վերահսկողական գործառույթներն օգնում են խոր շնչել և թեթևացնում են օդափոխանակությունը: Հետևաբար, բնահյութի պահուստավորումն ու ցիի ձևափոխությունը երիկամի ֆիզիոլոգիական գործունեության հիմքն է:

| | |
|---|---|
| [曾经译法] | երիկամի էներգիա, երիկամային ցի, երիկամի ցի, Երիկամ-Ցի |
| [现行译法] | երիկամային ցի, երիկամի ցի |
| [标准译法] | երիկամի ցի |
| [标准译法] | 单词 երիկամային, երիկամի մեջ կամ կողքին, երիկամի ցի |

Մեջբերումներ 引例

Երիկամի ցին հասնում է ականջներին: Ականջները կարող են տարբերակել հինգ նոտաները, երբ երիկամի ցին ներդաշնակ հարաբերության մեջ է *(Հոգևոր առանցք)*:

Երբ մարդը հասնի իննսունամյա տարիքի, երիկամի ցին կարող է սպառվել, իսկ  լյարդը, սիրտը, փայծաղը, թոքն ու դրանց համապատասխան միջօրեականները բավարար չափով չեն գործի *(Հոգևոր առանցք)*:

Երիկամը պահպանում է կենսական նյութը, իսկ կենսական նյութը՝ կամքը: Երիկամի ցիի անբավարարությունը կհանգեցնի նրան, որ ձեռքերն ու ոտքերը կսառչեն, իսկ երիկամի ցին կարող է հանգեցնել ստամոքսի փքվածության ու անհարմարավետություն պատճառել հինգ զան-օրգաններին *(Հոգևոր առանցք)*:

**Երիկամի ին**
**շենյին 肾阴**

Երիկամի ինը, ի տարբերություն երիկամի յանի, երիկամի ին հեղուկն է ու առաջին հերթին մասնակցում է յան-ջերմությունը հանդարտեցնելուն, սնելուն, խոնավեցնելուն ու սահմանափակելուն: Լինելով ամբողջ մարմնի ին ցիի հիմք՝ երիկամի ինը կարող է զսպել և կարգավորել զան-ֆու օրգանների մեխանիզմը, սնել զան-ֆու օրգանները, հյուսվածքներն ու ճեղքերը, ինչպես նաև սահմանափակել նյութափոխանակությունը, կարգավորել ցիի ձևափոխումը, դանդաղեցնել նյութի, արյան ու հեղուկների ստեղծումն ու բաշխումը՝ կրճատելով ջերմությունը, և, ի վերջո, ցին կենտրոնանում ու զարգանում է՝ վերածվելով նյութի, արյան ու հեղուկների: Նյութը պահուստավորելու, վերարտադրողա-

կանությունը, աճն ու զարգացումը կառավարելու, ինչպես նաև ցի ստանալու գործառույթը կախված է երիկամի ինի սնուցումից ու խոնավեցումից: Եթե երիկամի ինն առատ է, ցան-ֆու օրգանները, հյուսվածքներն ու ճեղքերը կարելի է սնուցել ու կարգավորել, իսկ հոգին կարելի է պահպանել ներսում: Եթե երիկամի ինն անբավարար է, այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են զսպումը, հանգստացնելն ու զովացնելը, կնվազեն, ինչը կարող է հանգեցնել ցան-ֆու օրգանների հիպերակտիվության ու անհանգստության: Ի հայտ կգան ջերմության անբավարարության հիվանդություններ:

| | |
|---|---|
| [曾经译法] | երիկամի ին, երիկամի Ինը (կենսական էություն կամ կենսական հյութ), երիկամի ին, Երիկամ-Ին |
| [现行译法] | երիկամի ին, երիկամ-ին, երիկամային ին |
| [标准译法] | երիկամի ին |
| [翻译说明] | երիկամային, երիկամի ներսում կամ կողքին, երիկամի ին |

Մեջբերումներ 引例

Երիկամի ինի ներքին անբավարարությունը հանգեցնում է յան ցիի արտաքին առատության, ինչն առաջացնում է ափերի ու ներբանների տենդ: Հիվանդությունը կոչվում է ջերմային գլխապտույտ *(«Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնի» պարզությունը):*

Երիկամի ինը լրացնելու համար կարելի է օգտագործել չորս նյութերի թուրմ, ռեմանիա և աչիրանտեսի արմատ *(Ախտորոշման և բուժման սղանդարդներ):*

Ռեմանիայի արմատը լրացնում է երիկամի ինը: Սպիտակ քաջվարդի արմատը սնում է լյարդի ինը: Դենդրոբիու-

մը թարմացնում է ստամոքսի ինը: Գլենիան լրացնում է թոքի ինը: Վիշապի մորուքը սնում է սրտի ինը *(Հանդիպում ջերմային հիվանդությունների աղբյուրի հետ):*

**Երիկամի յան**
**շենյան 肾阳**

Երիկամի յանը, ի տարբերություն երիկամի ինի, երիկամի յան ցին է և ունի ինի սառնությունը նվազեցնելու, ակտիվացնելու, խթանելու, գոլորշացնելու և սահմանափակելու գործառույթներ: Որպես ամբողջ մարմնի յան ցիի հիմք՝ երիկամի ցին կարող է խթանել և նմանակել զան-ֆու օրգանների և միջօրեականների մեխանիզմը, ջերմացնել զան-ֆու օրգանները, հյուսվածքներն ու ճեղքերը, ապա նպաստել բնանյութի, արյան ու մարմնի հեղուկների տեղափոխությանը, ձևափոխությանն ու բաշխմանը, արագացնել նյութափոխանակությունը, խթանել բնանյութի, արյան, մարմնի հեղուկների՝ ցիի կամ էներգիայի փոխարկվելու գործընթացը: Երիկամի գործառույթի գործունեությունը նաև կախված է երիկամի յանի նմանակումից, գոլորշացումից ու պահուստավորումից: Եթե երիկամի յանն առատ է, կարելի է սնուցել զան-ֆու օրգանները, հյուսվածքներն ու ճեղքերը, ինչը կխթանի նրանց գործառույթը: Եթե երիկամի յանն անբավարար է, սահմանափակելու և խթանելու գործառույթը կնվազի: Ի հայտ կգան ցրտահարություններ:

| | |
|---|---|
| [曾经译法] | երիկամ-յան, երիկամի Յանը (կենսական գործառույթ), երիկամի յան, Երիկամ-Յան |
| [现行译法] | երիկամի յան, երիկամ-յան, երիկամային յան |
| [标准译法] | երիկամի յան |
| [翻译说明] | 单词 երիկամային, երիկամի մեջ կամ կողքին, երիկամի յան: |

Մեջբերումներ 引例

Կենսական նյութը կսպառվի, եթե երիկամի յանը չկարողանա վերահսկել այն. սա կարող է լինել սեռական կյանքով չափից շատ տարվելու հետևանք *(Ծնողների նկարմամբ կոնֆուցիականների պարտականությունները)*:

Երիկամի յանի սպառումը կհանգեցնի կաթվածի և մեզն ու կղանքը պահելու անկարողության, ինչը կարելի է բուժել ընծախոտի կարգավորող թուրմով *(Բժշկական մոտեցումներ)*:

Երիկամի ինը, սակայն, փոխարկման և ստեղծման առումով կախված է երիկամի յանից, իսկ երիկամի յանը՝ երիկամի ինից: Սա չի կարելի անտեսել *(Քննախուություն արյան ախտանիշների մասին)*:

**Երիկամի բնանյութ**
**շենծին 肾精**

Երիկամի բնանյութն առաջանում է նախածննդյան նյութից և սնվում է հետծննդյան նյութով: Նախևառաջ այն մասնակցում է աճին, զարգացմանն ու վերարտադրողությանը: Նախածննդյան բնանյութը, որն առաջացել է վերարտադրողական նյութից, ժառանգական է, որը փոխանցում են ծնողները, և որը ծնվելու պահին պահվում է երիկամում: Հետծննդյան նյութը սննդարար նյութ է, ստացվում է սննդի ու խմիչքի սննդարար նյութերից և զան-ֆու օրգանների ֆիզիոլոգիական գործունեությունից: Երիկամի նյութը ձևավորվում է նախածննդյան և հետծննդյան նյութի հիմքի վրա: Հետծննդյան նյութը մշտապես սնելու և սնուցելու դեպքում նախածննդյան նյութը կարող է լիարժեք կատարել իր դերը. նախածննդյան նյութից ստացված նախնական ցիի

օգնությամբ հետծննդյան նյութը կարող է մշտապես կլանել սննդարար նյութերն ու փոխարկվել:

[曾经译法] երիկամ-նյութ, երիկամի նյութ, Երիկամ-Նյութ, սեռական օրգանների նյութ
[现行译法] երիկամանյութ, երիկամային նյութ
[标准译法] երիկամի նյութ
[翻译说明] երիկամ, նյութ, 译为 երիկամի նյութ

Մեջբերումներ 引例

Երիկամի ցիի լճացումը բուժելու նպատակով ապարգելակման մեթոդի կիրառումը կհանգեցնի երիկամի նյութի մաքրման և ներքին սպառման: Այդ դեպքում պտուղը կպահպանվի *(Պարզ զրույց, ծանոթագրությունը՝ Ուան Բինի):*

Ռեմանիայի արմատի պատրաստուկն օգտագործվում է երիկամի նյութը թարմացնելու համար, իսկ ծներեկի պալարը համադրվում է՝ թիրախային օրգանը բուժելիս դեղի ազդեցությունն ուղղորդելու համար դեպի այն օրգան, որը թարմացման կարիք ունի *(Ռենջայի բանաձևերի ուղեցույց):*

Եթե երիկամը չի կարողանում սնել աչքերը, մարդը հաճախ է փակում աչքերը *(Պարզ զրույցի ուղղակի մեկնաբանություն «Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնում»):*

**Երիկամը կառավարում է ջուրը**
**շեն ջու շույ 肾主水**

Եզրույթը նշանակում է, որ երիկամը կառավարում ու կարգավորում է ջրի ու հեղուկների նյութափոխանակությունը մարդու մարմնում: Այն ունի իմաստային երեք մակարդակ. 1) երիկամի ինը և յանը, մասնավորապես երիկամի յանը, կարգավորում է զան-ֆու օրգանները, որոնք մասնակ-

ցում են մարսողության գործընթացին, 2) երիկամի յանը կարող է եռացնել ու գոլորշիացնել ջուրն ու հեղուկները՝ կարգավորելով մեզի առաջացումը, և 3) երիկամը կառավարում է միզապարկի բացումն ու փակումը, այսինքն՝ մեզի արտաթորումը: Մեզի բնականոն ստեղծումն ու լիցքաթափումը կախված է երիկամի ցիի՝ գոլորշացման բնականոն գործառույթից, երիկամի ինի և երիկամի յանի խթանումից և կարգավորումից, ինչպես նաև միզապարկի բնականոն բացվելուց ու փակվելուց:

[曾经译法] Երիկամը վերահսկում է ջուրը: Երիկամը կարգավորում է ջրափոխանակությունը: Երիկամը զբաղվում է ջրափոխանակությամբ: Երիկամը կառավարում է ջուրը:

[现行译法] հեղուկները կառավարող երիկամ, ջուրը կառավարող երիկամ

[标准译法] Երիկամը կառավարում է ջուրը:

[翻译说明] կառավարել, 表示ղեկավարել, 即 վերահսկել կամ ուղղորդել ինչ-որ բան, 比 վերահսկել, 和 կարգավորել, 直译为 ջուր:

Մեջբերումներ 引例

Երիկամը կառավարում է ջուրն ու բացվում ներքին ինի մեջ, որը մեզի ճանապարհն է *(Տարբեր հիվանդությունների ծագման և դրսևորումների մասին):*

Երիկամը կառավարում է ջուրը: Հինգ տարրերի տեսության տեսանկյունից ուձին (戊己) պատկանում է հողին, իսկ հողը սահմանափակում է ջուրը: Երիկամի հիվանդությունների սրվելու դեպքում հավանականությունը մեծ է, որ հիվանդը կմահանա ուձիի ժամանակ (երեկոյան 9-ից մինչև առավոտյան 11-ը) *(Պարզ զրույց, ծանոթագրությունը՝ Ուան Բինի):*

Սովորական այտուցը հիվանդություն է, որի պատճառը հենց երիկամի ջուրն է, ջուրը կառավարելու երիկամի գործառույթը *(«Ոսկե խցի» նեֆրիտի պարմության երկրորդ ծանոթագրություն):*

**Երիկամը պահպանում է բնանյութը**
**շեն ցան ձին 肾藏精**

Եզրույթը վերաբերում է երիկամի՝ մարդու մարմնի նյութը պահուստավորելու ֆիզիոլոգիական գործառույթին: Բնանյութի պահուստավորումը հիմնականում կախված է երիկամի ցիից, որը դրսևորվում է համախմբման և ամրապնդման մեջ: Երիկամի ցին ստացվում է երիկամի նյութից ու իր հերթին օգնում է խթանել երիկամի նյութի առաջացումը և պաշտպանում է այն: Միայն երբ երիկամի ցին առատ է և կատարում է իր միավորող և պաշտպանիչ գործառույթը, նախածննդյան նյութը և հետծննդյան նյութը կարող են պահուստավորվել երիկամում: Երիկամի նյութը նշանակալի դեր է խաղում երիկամի ֆիզիոլոգիական գործունեության մեջ: Այն խթանում է աճը, զարգացումն ու վերարտադրողականությունը: Այն փաստը, որ երիկամը պահպանում ու պաշտպանում է նյութը, ոչ միայն խթանում է երիկամանյութի ստեղծումը, այլև կանխում դրա կորուստը, ինչի շնորհիվ այն կարևոր դեր է խաղում ֆիզիոլոգիական գործունեության մեջ:

[曾经译法] Երիկամը պահպանում է կյանքի բնանյութը: Երիկամը պահպանում է նյութը:
[现行译法] Երիկամը պահպանում է բնանյութը, բնանյութը պահուստավորող երիկամ
[标准译法] Երիկամը պահուստավորում է բնանյութը:
[翻译说明] 译为 բնանյութը պարունակող երիկամ:
翻译为 Երիկամը պաշտպանում է բնանյութը:

Մեջբերումներ 引例

Երիկամը պահպանում է բնանյութը, իսկ բնանյութը վերահսկում է կամքը *(Հոգևոր առանցք):*

Երիկամը պահուստավորում է բնանյութը: Եթե երիկամն անբավարար է, այն չի կարողանում պահպանել սերմը: Արդյունքում սերմնաժայթքում է տեղի ունենում, երբ տղամարդը երազում է անցողիկ ուրախության մասին *(Քննախուություն պարբեր հիվանդությունների ծագման և դրսևորումների մասին):*

Երիկամը պահպանում է բնանյութը, որը փայծաղն ու ստամոքսն արտադրում են մարսված ուտելիքից ու խմիչքից, իսկ հետո ձևափոխում են ու տեղափոխում երիկամ՝ պահուստավորելու *(Մին դինաստիայի հայտնի բժիշկների պարբեր գրվածքներ):*

**Երիկամը կառավարում է ցիի ընդունումը շեն ջու նացի 肾主纳气**

Եզրույթը նշանակում է որ երիկամը ստանում է թոքերի ներշնչած թարմ օդը և պահպանում մարդու մարմնի բնականոն շնչառական գործառույթը: «Երիկամն ընդունում է ցին» եզրույթն իրականում դրա պահուստավորման գործառույթի արտացոլումն է, որ երիկամի ցին իրականացնում է շնչառական գործունեության ընթացքում: Երիկամի ցին ստանում է բնական օդ, պահպանում շնչառության խորությունն ու կանխում հիպոպնեան: Այն նշանակալի դեր է խաղում շնչառության պահպանման ու կարգավորման գործում: Միայն այն դեպքում, երբ երիկամը բավականաչափ էական ցի պահուստավորի ու կատարի ցի ստանալու իր գործառույթը, ներշնչած օդը կկարողանա իջնել երիկամ ու ապահովել սահուն շնչառություն:

[曾经译法] Երիկամի էներգիան օգնում է, որ թոքը կարգավորի օդ ներշնչելու գործընթացը: Երիկամն ունի օդի ներշնչումը վերահսկելու ու խթանելու գործառույթ: Երիկամը կլանում է գազերը: Երիկամը կառավարում է ցիի կլանումը:

[现行译法] Երիկամը կառավարում է ցիի կլանումը. ցիի ընդունումը կառավարող երիկամ, օդի ներշնչումը կառավարող երիկամ, օդի ներշնչումը կառավարող երիկամ, ցիի ներշնչումը կառավարող երիկամ

[标准译法] Երիկամը կառավարում է ցիի ընդունումը

[翻译说明] 是 ընդունել, 或 ստանալ,
而不是 կարգավորել, 可译作 ընդունել ցի,
译作 ցիի ընդունում, ներս շնչելը,
疑为 շնչառություն

Մեջբերումներ 引例

Այն, որ երիկամը կառավարում է ցիի ընդունումը, կապված է մարդու մարմնի ցիի ծովի հետ (Դանջունը՝ կրծքավանդակի կենտրոնական մասում) *(Ռենջայի քանաչների ուղեցույց):*

Ցիի ընդունումը կառավարող երիկամը ցիի արտադրության աղբյուր է և շնչառական ուղի *(«Ոսկե խցի հիմնական դեղատոմսերի» ընդարձակ ծանոթագրություններ):*

Երկարատև հևոցը կհանգեցնի ցիի շարժման խանգարման և կազդի երիկամի վրա, քանի որ թոքը կառավարում է արտաշնչումը, իսկ երիկամը՝ ցիի ընդունումը *(Բժշկական ըմբռնում):*

**Թիանգույ**
**թիանգույ 天癸**

Թիանգույը սննդարար նյութ է, որը պահվում է երիկամում՝ սեռական զարգացումը խթանելու և վերարտադրողական գործառույթը պահպանելու համար, երբ երիկամում անհրաժեշտ ցին հասնում է որոշակի մակարդակի: Մասնավորապես, թիանգույի արտադրությունը հիմնված է երիկամի նյութի և երիկամի ցիի հետևողական կուտակման վրա մարդու ծննդի պահից: Թիանգույը խթանում է վերարտադրողական օրգանների աճն ու հասունացումը և պահպանում մարդու մարմնի վերականգնողական մեխանիզմը: Երբ թիանգույը հասունանում է, կնոջ դեպքում սկսվում է կանոնավոր դաշտանային ցիկլն ու ձվազատումը, իսկ տղամարդու դեպքում՝ սերմնաժայթքումը, ինչը վկայում է նրանց սեռական օրգանների հասունացման և զավակ ունենալու հնարավորության մասին: Երբ թիանգույը հեռանում է, տեղի է ունենում վերարտադրողական օրգանների ատրոֆիա, պտուղ տալու ունակությունը նվազում է, ինչը վկայում է առաջացած տարիքի մասին:

[曾经译法] դաշտանային ցիկլ, աճի խթանումն ապահովող նյութ, մարդու մարմնի զարգացման և վերարտադրողության գործառույթ, սեռական խթանման նյութ երկու սեռերի համար, թիանկույ, թիանգույ

[现行译法] երկնային տասներորդ, դաշտանային ցիկլ, վերարտադրողական նյութ, երիկամի նյութ, թիանգույ, սեռական հասունացումը խթանող նյութ

[标准译法] թիանգույ

Մեջբերումներ 引例

Տասնչորս տարեկանում վրա է հասնում թիանգույը. բեղմնավորման անոթն ու գլխավոր զարկերակն ակտիվ գործում են: Կնոջ մոտ սկսվում է դաշտանային ցիկլը, և կինն ի վիճակի է հղիանալ *(Պարզ զրույց):*

Երիկամը կառավարում է ոսկորները: Ատամները, որոնք սնում է ողնուղեղը, ոսկորների շարունակությունն են: Այսպիսով, նրանք փոխվում են՝ կախված թիանգույի առատությունից կամ պակասությունից *(Ախտորոշման և բուժման չափանիշներ):*

**Կյանքի դարպաս**
**մինմեն 命门**

Կյանքի դարպասը մարդկային կյանքի հիմքն է, ցի ձևափոխության աղբյուրը: Այն պահպանում է նախածննդյան ցին՝ արտացոլելով այն կարևոր դերերը, որ երիկամի ցին, երիկամի ինն ու երիկամի յանը կատարում են կենսագործունեության ընթացքում: Կյանքի դարպասը կատարում է երեք ֆիզիոլոգիական գործառույթ. 1) սերտորեն կապված է մարդու վերարտադրողության հետ, 2) ջերմացնում է զանֆու օրգանները՝ փայծաղը, ստամոքսը և միզապարկը, նպաստում է ձևափոխմանը փայծաղի ու ստամոքսի կողմից, ինչպես նաև ջրի ու հեղուկների բաշխմանն ու արտազատմանը, և 3) կառավարում է վերարտադրողականությունը:

[曾经译法] կյանքի դարպաս, կենսական դարպաս, «կենսական մուտք», յանցի դարպաս, Մին-Մեն

[现行译法] կյանքի դարպաս, մինմեն, դարպաս կյանքի

[标准译法] կյանքի դարպաս
[翻译说明] 译文 կյանքի դարպաս

Մեջբերումներ 引例

Կյանքի դարպասն այնտեղ է, որտեղ բնակվում են հոգին ու էությունը, ու որտեղ պահպանվում է նախնական ցին: Կյանքի դարպասի մոտ տղամարդը պահում է սերմը, իսկ կինը՝ արգանդը *(Բարդ հարցերի կանոն):*

Կյանքի դարպասն այնտեղ է, որտեղ ապրում է ջուր-կրակը, որտեղ պահվում է ին-յանը: Այնտեղ է պահպանվում նաև էական ցիի ծովը, որը վերահսկվում է կյանքն ու մահը *(Դասական գործերի հավելված):*

Միայն կյանքի դարպասի ներքին կրակի դեպքում տասներկու կանոնավոր միջօրեականների կրակը կարող է անսահմանորեն բազմապատկվել և իրականացնել ձևա-փոխման, տեղափոխման և շարժման պատասխանատվու-թյունը: Այսպիսով, կյանքի դարպասը տասներկու կանոնա-վոր միջօրեականների հիմքն է *(Դեղին կայսեր բժշկության ներքին կանոնը):*

**Էներգիայի եռակի աղբյուր**
**սանձիաո** 三焦

Էներգիայի եռակի աղբյուրը (սանձիաո), որն այլ կերպ կոչվում է նաև «միայնակ ֆու-օրգան», վեց ֆու-օրգաններից մեկն է: Այն չափերով ամենամեծն է զան-ֆու օգաններից, այդ թվում և էներգիայի բարձր, միջին ու ցածր աղբյուր-ներից:

Էներգիայի եռակի աղբյուրը (սանձիաո) կառավարում է ցին ամբողջ մարմնում և կարգավորում է ջրափոխանակու-

թյունը: Ձեռքի-շաոյանի միջօրեականը ներքին և արտաքին հարաբերության մեջ է Ձեռքի-ձուեինի Սրտապարկի միջօրեականի հետ: Նախորդ սերունդների բժիշկները գաղափարներ ունեին էներգիայի եռակի աղբյուրի (սանձիաո), դրա ձևի և նյութի վերաբերյալ: Ոմանք կարծում էին, որ եռակի աղբյուրը (սանձիաո) պատկանում է վեց ֆու-օրգաններին ու կատարում համալիր գործառույթներ: Այն խոշոր ֆու-օրգան է, տեղակայված կրծքավանդակի ու որովայնի խոռոչում, առանց հինգ ցան-օրգաններից որևէ մեկի հետ արտաքին կամ ներքին կապի: Մյուսները կարծում էին, որ եռակի աղբյուրը (սանձիաո) ներքին օրգանները բաժանում է երեք մասի: Վերին աղբյուրը վերաբերում էր ստոծանուց վերև ընկած հատվածին, միջինը՝ ստոծանու ու պորտի միջև, իսկ ստորինը՝ պորտից ներքև:

| | |
|---|---|
| [曾经译法] | եռակի ջերմացնող, եռակի այրող (տաքացուցիչ), տրիկալորիա, սանձիաո եռակի տաքացում, եռակի այրում, Սան-Չիաո |
| [现行译法] | եռակի այրում, էներգիայի եռակի աղբյուր, եռակի տաքացնողներ, եռակի-ձիաո, եռակի տաքացնող, սան ձիաո |
| [标准译法] | էներգիայի եռակի աղբյուր |
| [翻译说明] | այրող, տաքացնող, ջերմացնող, 译文 էներգիայի եռակի աղբյուր |

Մեջբերումներ 引例

Էներգիայի եռակի աղբյուրը (սանձիաո) նման է պաշտոնյայի, որը պատասխանատու է հողահանության համար: Այն պատասխանատվություն է կրում ամբողջ մարմնի ջրաշրջանառության կարգավորման համար *(Պարզ զրույց):*

Էներգիայի եռակի աղբյուրը (սանձիաո) մարմնի օրգան է, որը պատասխան է տալիս հունը խորացնելու և ջրի ան-

ցումը կարգավորելու համար: Այն հարում է միզապարկին, բայց միայնակ օրգան է և որևէ արտաքին կամ ներքին հարաբերություն չունի հինգ զան-օրգաններից որևէ մեկի հետ *(Հոգևոր առանցք):*

Էներգիայի եռակի աղբյուրը (սանձիաո) այն տեղն է, որտեղ ցիի աղբյուրը բաժանվում է: Այն կարգավորում է էական ցին և բաշխում այն՝ հասցնելով հինգ զան և վեց ֆու օրգաններին *(Բարդ խնդիրների կանոն):*

**Լեղապարկ**
**դան 胆**

Լեղապարկը՝ վեց ֆու-օրգաններից և արտասովոր օրգաններից մեկը, տեղակայված է կողերի տակ, աջ կողմում, լյարդի կարճ բլիթին կից: Այն սնամեջ մկանային օրգան է, որտեղ հավաքվում է լեղին՝ մարդու մարմնի մաքրված նյութը: Հավաքված լեղին պետք է կանոնավոր կերպով արտազատվի. հետևաբար, դրան բնորոշ է արտազատումը՝ առանց պահուստավորման, և հենց դա է պատճառը, որ լեղապարկը վեց ֆու օրգաններից մեկն է: Լեղապարկը նաև պահուստավորում է բնանյութը, բայց տարբերվում է այլ ֆու օրգաններից, որոնք ձևափոխում են սնունդն ու ջուրը, ինչպես նաև արտազատում են թափոնները: Հետևաբար, այն կոչվում է նաև արտասովոր օրգան: Լեղապարկի ֆիզիոլոգիական գործառույթները ներառում են նաև լեղու պահպանում ու արտազատում և լյարդի ցիի ազատ հոսքի խթանում: Ոտքի-շաոյանի լեղապարկի միջօրեականը արտաքին և ներքին առումով կապված է Ոտքի ձուեյինի լյարդի միջօրեականի հետ:

[曾经译法] լեղապարկ, լեղապարկի (ոլորտ), Դան
[现行译法] լեղապարկ, լեղապարկ

[标准译法] լեղապարկ
[翻译说明] 译为 լեղապարկ

Մեջբերումներ 引例

Լեղապարկն օրգան է, որը նման է արդարադատության և որոշումների կայացման համար պատասխանատու պաշտոնյայի *(Պարզ զրույց):*

Ուղեղը, ողնուղեղը, ոսկորները, անոթները, լեղապարկն ու արգանդը ստեղծվում են երկրի ցիի ազդեցության տակ: Այս վեց օրգանները պահպանում են ին նյութերն այնպես, որ հողը բավականաչափ ուժ ունենա և ամեն ինչ կրի իր մեջ: Դրանք պահուստավորում են բնանյութը՝ առանց լիցքաթափման. այդպես էլ առաջացել է արտասովոր ֆու-օրգաններ անվանումը *(Պարզ զրույց):*

Լեղապարկը ֆու-օրգան է, որը պահպանում է լեղին *(Բարդ հարցերի կանոն):*

**Լեղապարկի ցի**
**դանցի 胆气**

Լեղապարկի ցին լեղապարկի էական ցին է, ինչպես նաև նշանակալի հիմք և խթանիչ ուժ լեղապարկի համար, որպեսզի այն արտանետի լեղին ու վերահսկի որոշումներ կայացնելու գործընթացը: Այն սննդարար նյութ է, առաջացել է ամբողջ մարմնի ցիից, իրականացնում է իրեն նշանակված գործառույթը: Լեղապարկը պատասխանատվություն է կրում որոշումների կայացման և զգացմունքները կարգավորելու համար, կարևոր դեր է խաղում մտավոր գործունեության մեջ: Աղիքներ լեղապարկի ցի ունեցող մարդիկ ընկալունակ չեն մտավոր խթանման նկատմամբ և կարող են

արագորեն ապաքինվել հարձակումից, եթե այդպիսին կա: Առանց դրա մարդիկ հաճախ անվճռական են, համարձակ չեն և հակված են վախկոտության, տագնապների, սարսափի, անքնության և այլն, երբ հայտնվում են մտավոր խթանման բացասական ձևերի ազդեցության տակ:

[曾经译法] լեղապարկ-էներգիա, լեղապարկի ցի, Լեղապարկ-Ցի
[现行译法] լեղապարկի ցի, լեղապարկ-ցի
[标准译法] լեղապարկի ցի
[翻译说明] լեղապարկի ցի

Մեջբերումներ 引例

Եթե սրտի բաբախյունը երկար է ու հազեցած, մատների տակ փայտի զգացողություն է լինում, ինչը վկայում է լեղապարկի ցիի անբավարարության մասին *(Պարզ զրույց):*

Սա կոչվում է լեղապարկի ցիի անբավարարություն, որը պետք է բուժել *(Տարբեր հիվանդությունների ծագման և դրսևորումների քննախուզություն):*

Լեղապարկի ցիի ոչ բնականոն հոսքը հանգեցնում է նրան, որ աչքերը կապտավուն երանգ են ստանում *(Դասական սրտխփոց):*

**Լեղի**
**դանջի** 胆汁

Լեղին ձևավորվում է լյարդի ցիի ավելցուկի պատճառով և պահպանվում է լեղապարկում: Այն դեղնականաչավուն հեղուկ է, որն արտադրում է լյարդը: Լյարդում արտադրվող լեղին հոսում է դեպի լեղապարկ, որտեղ էլ խտանում ու պա-

հուստավորվում է: Լյարդիի ցիի շրջանառվող և լիցքաթափվող գործառույթի շնորհիվ լեղապարկում պահվող լեղին դուրս է գալիս ու հոսում դեպի աղիքներ, որտեղ խթանում է ջրի և սննդի մարսումն ու կլանումը: Լյարդի և լեղապարկի դիսֆունկցիան կարող է նվազեցնել լեղու արտադրությունը, ինչն էլ կազդի ստամոքսի մարսողական և ձևափոխիչ գործառույթի վրա: Ի հայտ կգան այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են անորեքսիան, փքվածությունն ու փորլուծությունը:

[曾经译法] լեղի, լեղի
[现行译法] լեղի, պարկի լեղի
[标准译法] լեղի
